

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՇԻՐԱԿԸ ՀԱՅՈՑ ԲԱՌ ՈՒ ԲԱՆԻ ԳԱՆՁԱՐԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
(Երևան, 2023 թ., նոյեմբերի 24)

ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2023

ՀՏԴ 811.19`282:39(=19)(082)
ԳՄԴ 81.51.025.7+82.3(5Հ)+63.5(5Հ)g43
Շ 642

Հրատարակման է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գիտական խորհուրդը:

Խմբագրական խորհուրդ՝

Վ.Լ.Կատվայան (նախագահ)

Լ.Շ.Հովհաննիսյան

Հ. Ռ.Խաչատրյան

Ջ.Ա.Բառնասյան

Ա.Ս.Հայրապետյան

Ա.Ա.Բորիսյան

Շիրակը հայոց բառ ու բանի գանձարան (Միջազգային գիտաժողովի նյութեր.
Շ 642 Երևան, նոյեմբերի 24, 2023թ.)- Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2023 թ.- 103 էջ:

Ժողովածուն ընդգրկում է գիտական և գիտատեխնիկական գործունեության
պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող «Շիրակի մարզի բարբառային
համապատկեր» ծրագրի (ծածկագիր՝ 21T-6B111) շրջանակում 2023 թ. նոյեմբերի 24-ին
անցկացված միջազգային գիտաժողովի նյութերը: Ներկայացվող զեկուցումները ամփոփում են
Շիրակի մարզի բարբառային, բանահյուսական, ազգագրական իրողությունների
հետազոտության արդյունքները: Ժողովածուն օգտակար կլինի բարբառագետներին,
բանագետներին, ազգագրագետներին, նաև՝ ուսանողներին:

ՀՏԴ 811.19`282:39(=19)(082)

ԳՄԴ 81.51.025.7+82.3(5Հ)+63.5(5Հ)g43

ISBN 978-9939-9305-3-4

© ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատարակչություն, 2023

ՀԵՇՏԻԱ ԳՅՈՒՂԻ ԽՈՍՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

Արոյան Մարիա

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՌԴ արտասահմանյան գրականության

համառուսաստանյան պետական գրադարան

Maria.arosyan@gmail.com

DOI: 10.54412/99399305-2023-3

Բանալի բառեր. ինուս, բարբառ, հատկանիշ, խոսվածք, ձայնեղ բաղաձայն, քառաստիճան, ազդեցություն:

Վրաստանի Հանրապետության Սամցխե-Ջավախեթի մարզի Նինոծմինդայի մունիցիպալիտետի գյուղերից է **Հեշտիան**: Հիմնադրվել է 1830 թվականին՝ Արևմտյան Հայաստանից եկած գաղթականների կողմից: Ջավախքի ամենամեծ հայաբնակ գյուղերից մեկն է: Գյուղում գործում է Սբ. Աստվածամոր (Սուրբ Աստվածածին) կաթոլիկ եկեղեցին, որը կառուցվել է 1856 թվականին: Գյուղի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, մեղվապահությամբ և գյուղատնտեսությամբ: 1987 թ. ուներ 3.630 բնակիչ, սակայն այս թիվը վերջին տասնամյակների ընթացքում զգալիորեն նվազել է արտագաղթի պատճառով: 1996 թ. հունիսի 1-ի տվյալներով ուներ 3322 բնակիչ (740 ծուխ): Գյուղն ունի երկու միջնակարգ դպրոց, մակույթի տուն, գրադարան, բուժկենտրոն, կապի բաժանմունք, հացի փուռ, պանրայտղագործարանի մասնաճյուղ²:

«Հայկական սովետական հանրագիտարան»-ի 6-րդ հատորում նշվում է, որ Հեշտիա գյուղի բնակիչները գաղթել են Էրզրումի վիլայեթի Բասեն գավառի Քյուլլի գյուղից 1830 թվականին³: Սակայն Ս. Արոյանը հերքում է հանրագիտարանում գրված տեղեկությունը՝ բերելով ձեռքի տակ եղած ծանրակշիռ փաստեր, ինչպես նաև գեներալ-լեյտենանտ Ն.Կորսունի «Առաջին համաշխարհային պատերազմը Կովկասյան ռազմաճակատում» աշխատության մեջ եղած քարտեզներն ու մեկնաբանությունները: Ս.Արոյանը այդ կապակցությամբ գրում է. «Նախօրոք նշենք, որ այս պնդումը («Հայկական սովետական հանրագիտարան»-ի 6-րդ հատորում նշվում է, որ Հեշտիա գյուղի բնակիչները գաղթել են Էրզրումի վիլայեթի Բասեն գավառի Քյուլլի գյուղից 1830 թվականին³.) բացահայտ և աններելի սխալի արդյունք է: Բասեն գավառում իրոք կա Քյուլլի անունով մի գյուղ, սակայն այն ոչ մի կապ չունի հեշտիացիների հետ: Ճշտորեն հայտնի է, որ հեշտիացիների նախնիները գաղթել են Էրզրումի վիլայեթի Խնուս գավառի Թեքման գավառակի (Նահինի) Քյուլլի (Քիլլի, Քյուլու, Քյուլիս) գյուղից: Հայտնի են ոչ միայն գավառի, այլ նաև գավառակի (Սևակ Բերդակ կամ Թեքման, Մանանաղի)

¹ National Statistics Office of Georgia (geostat.ge)

² Արոյան Ս., Մշո ջոջ քարի բեկորներ, «Արամագր» հրատ., Երևան 1996թ., էջ 40:

³ National Statistics Office of Georgia (geostat.ge)

անունները: Մեր ձեռքի տակ են բազմաթիվ քարտեզներ, այդ թվում նաև գեներալ-լեյտենանտ Ն.Կորսունի «Առաջին համաշխարհային պատերազմը Կովկասյան ռազմաճակատում» գիրքը և նրան կցված քարտեզները, որոնց վրա նշված է Քյուլլի գյուղը»⁴: Դեռևս Ա.Լաստիվերցին իր աշխատության մեջ հիշատակում է Ադորի աշխարհի Հավաճիչ բերդը⁵, որը գտնվում է Քյուլլի մոտակայքում: Այսինքն՝ միջին դարերում այդ տեղանքն ունեցել է «Ադորի աշխարհ» անունը: Ա. Մելքոնյանն իր «Էրզրում, Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին եռամսյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» աշխատության մեջ գրում է, որ այդ ժամանակ Թեքման շրջանի հայաբնակ գյուղերից էր Թաթոսը, որը շրջանի կենտրոնն էր: Նշանավոր էին Քյուլլի, Խանբեկի և Սյոյլեմեզ գյուղերը: Թեքման շրջանում քրդերը բնակվում էին լեռնային շրջաններում և կազմում էին բնակչության աննշան մասը, իսկ թուրքերը ընդհանրապես չէին ապրում⁶:

Թեքման շրջանի և նրա նշանավոր գյուղերի մասին շատ արժեքավոր են Ղ.Ինձիճյանի «Աշխարհագրություն չորսից մասանց աշխարհի» մեջ տեղ գտած տեղեկությունները: Այստեղ ասվում է, որ 18-րդ դարի երկրորդ կեսին կատաղի և արյունալի մարտեր տեղի ունեցան Խնուսի և Մանազկերտի բայերի միջև: Մանազկերտի բեյին օգնության եկած Բայազետ փաշայի զորքերը հրի ու սրի մատնեցին Խնուսի, հատկապես Թեքման շրջանի բազմաթիվ բնակավայրեր⁷:

«Ի Թեքման,- վկայում է Ղ.Ինձիճյանը,- աստ և այն նաև բազում գիւղորէք ավերեալք»: Հիմահատակ ավերված գյուղերի թվում էր նաև Քյուլլին⁸:

1812 թվականին, երբ Խնուսի լեռնային շրջանների, հատկապես Բինգյուլի շրջանի քրդական ցեղախմբերը ասպատակեցին և թալանեցին Խնուսի հայկական գյուղերը, հայաթափվեցին ու ավերվեցին Արաբո, Խոնդուռ, Խասե, Խզլմատ և այլ գյուղեր, որոնք այլևս չվերաշինվեցին, իսկ Թաթոս և Քյուլլի գյուղերի մոտակայքում գտնվող մի քանի գյուղեր վերածվեցին քարակույտի: Խնուսը և նրա Թեքման գավառը ավերվածությունների ենթարկվեցին նաև 1820-1823 թթ. թուրք-պարսկական պատերազմների ժամանակ:

Երվանդ Լալայանը գրել է. «Թորիայի, Ուճմանայի և Հեշտիայի բնակիչները Խնուսի Քիլվա գյուղից են, խոսում են Մշո բարբառով»⁹: Մինչդեռ, ըստ Պ. Հակոբյանի, «Քիլվա» արտահայտությունն աններելի վրիպակ է¹⁰, քանի որ նախ Խնուսի գավառի

⁴ Արոյան Ս., նշվ. աշխ., էջ 40:

⁵ Ա.Լաստիվերցի, Պատմություն, էջ 2:

⁶ Մելքոնյան Ա., Էրզրում, Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին եռամսյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Ե., 1994, էջ 92:

⁷ Ինձիճյան Ղ., Աշխարհագրություն չորսից մասանց աշխարհի, մաս 1, Ասիա, հ. 1., Վենետիկ, 1806 թ., էջ 81:

⁸ Ինձիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 83:

⁹ Լալայան Ե., Երկեր, հ. 1, Երևան էջրփ, էջ 84:

¹⁰ Հակոբյան Պ., Հայ կաթոլիկությունը պատմա-քննական լույսի տակ. 1993թ. :

Քյուլլի գյուղից են հիմնականում հեշտիացիները, իսկ Թորիայի բնակիչների մեծամասնությունը Խնուս գավառի Ձիթահանքով գյուղից են ¹¹:

Ս. Արոյանը նույնպես համաձայնում է Պ. Հակոբյանի հետ և գրում.«Ե. Լալայանի կողմից Քյուլլի անվան աղավաղումը կապված է Մշո բարբառի նրբություններին կատարյալ չտիրապետելու հետ: Եթե ցանկացած հեշտիացուն հարցնես, թե որտեղի՞ց են գաղթել ձեր նախնիները, ապա կլսես միանշանակ պատասխանը՝ «Քիլվա» կամ «Քյուլվա», այսինքն Քյուլլից: -Վա վերջածանցը Հեշտիայի խոսվածքում (Մշո բարբառում) փոխարինում է գրական հայերենի -ից, -աց, -եցի վերջածանցներին (Բաքվա հայբաքվեցի հայ, եկա գյումրվա-եկա Գյումրիից և այլն): Ցավոք, Լալայանի սխալը կրկնված է նաև «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում», որտեղ Թորիա գյուղի բնակիչների նախնիներից մեկի բնակավայրը նշվում է Քիլուա (Քիլվա) գյուղը¹²: Եվ այն դեպքում, նույն հատորում ճիշտ նշված է Հեշտիա և Ժղանովական բնակիչների նախնիների գյուղը՝ Քյուլլին¹³»:

Ժամանակակից քարտեզների վրա (այդ թվում նաև ռուսական և թուրքական) այդ տեղում հիշատակվում է Քյուլլու գյուղը, որն արդեն ամբողջովին քրդաբնակ է դարձել:

Եղիշե Հ. Մելիքեանն իր «Հարք-Խնուս» աշխատության մեջ հաստատում է այդ փաստը քրդաբնակ գյուղերի ցանկը թվարկելու ժամանակ՝ մեջբերելով հետևյալը. «Քիլլի - Արաքս գետի ափին կառուցուած, նշանաւոր էր քարաշէն կամուրջով եւ ռէս Կակոյի տունով: Հայութիւնը Կովկաս գաղթած էր ռուս-թուրքական պատերազմի հետևայնքով, Զօր. Պասքեիչի նահանջող բանակի հետ»¹⁴: Ե. Հ. Մելիքյանի աշխատության մեջ եղած տեղեկությունն հաստատում է նաև Ս. Արոյանը, գրելով, որ Հակոբ (Կակո) Գոմցյանը՝ Քյուլլիի վերջին գյուղապետը (ռէս, քիա), ով ռուս - թուրքական (1928-1929 թթ.) պատերազմի ժամանակ մտերմանում է գեներալ Պասկևիչի հետ, խնդրում է, որ իր գյուղի հերոսուհի-մարտիկ Սանամի հարյուր հոգանոց ջոկատը Պասկևիչի զորքի հետ ևս կովի թուրքերի դեմ, վերջինս համաձայնում է: Հետագայում, երբ կնքվում է Ադրիանապոլսի հաշտության պայմանագիրը, Պասկևիչը նամակով դիմում է Հակոբ (Կակո) Գոմցյանին և առաջարկում գաղթել, այլապես թուրքերը վրեժխնդիր կլինեն գյուղից (այդ նամակը պահվել է Հակոբ Գոմցյանի սերունդների մոտ մինչև 1949 թվականը, երբ նրանք ենթարկվեցին ռեպրեսիայի, և նրանցից բռնագրավվեցին շատ արժեքավոր փաստաթղթեր, այդ թվում նաև գեներալ Պասկևիչի նամակը):

¹¹ Բոգոնովկայի շրջանի տեղեկագիրք, Բոգոնովկա, 1992, էջ 14:

¹² **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, 1983թ., հատ.1, էջ 477:

¹³ **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան,** նշվ. աշխ., էջ 503:

¹⁴ **Մելիքեան Ե.**, Հարք-Խնուս, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տան Կիլիկիոյ, Անթիլիաս, Լիբանան, 1964, էջ 97, 99:

Հայտնի է, որ նույնիսկ Ջավախքում քյուլլեցիների հաստատվելուց հետո էլ Պասկևիչը օգնել է նրանց ու մնացած հայ գաղթականներին: Այդ մասին են վկայում Վ.Ա. Պոտտոյի աշխատության մեջ բերված տեղեկությունները¹⁵:

Գաղթը սկսվել է 1830 թվականի մայիսի 15-ին: Էրզրումի նահանգից Կարապետ Արքեպիսկոպոսի գլխավորությամբ գաղթել է 7298 ընտանիք, որոնց թվում էին ներկայիս հեշտիացիները՝ Քյուլիի վերջին և Հեշտիայի առաջին գյուղապետի (ոէյ, քեհյա, քիա)՝ Հակոբ (Կակո) Գոմցյանի գլխավորությամբ¹⁶:

Մեր ուսումնասիրության համար հատկանշական է հետևյալ տեղեկությունը. «Գաղթականների խնդրանքով ռուսական իշխանությունները թույլ տվեցին, որ Էրզրումի նահանգում բնակվող նույն շրջանի կամ այդ շրջանին մոտ գտնվող գյուղերի բնակիչները բնակվեն իրար մոտ, նույն շրջանում: Այս է պատճառը, որ Նինոծմինդայի շրջանում հիմնականում բնակվեցին Էրզրումի նահանգի (Կարին) գավառի և նրա հարևան Բասեն և Խնուս գավառի բնակիչները»¹⁷: Հեշտիա գյուղում մեծամասնություն են կազմում քյուլլեցիները: Խնուսի բնակիչների՝ 1830 թվականի գաղթից հետո հայաթափ գյուղերում սկսեցին բնակություն հաստատել քրդերը, իսկ կիսահայաթափ գյուղերում՝ նաև սասունցիները: 1895- 1915 թթ. Խնուսի գավառում բնակվում էր շուրջ 25000 հայ¹⁸, որոնցից փրկվեցին միայն 128-ը¹⁹:

1830 թվականից հետո, կարելի է ասել, Խնուսի խոսվածքը կրել է բավականին էական ազդեցություն Սասնա բարբառից: Այդ են վկայում Եղիշե Հ. Մելիքյանի «Հարք-Խնուս» աշխատության մեջ (որտեղ նկարագրված են հիմնականում 1895 - 1915թթ. իրադարձությունները) հավաքված բանահյուսական նյութերի լեզվական հատկանիշները (օրինակ՝ հայցականի զ նախդրի գործածությունը /ՁԱդամ պպգուկ է տեսի/²⁰), խուլերի դիմաց ձայնեղների առկայությունը /տովլաթ/²¹), ինչպես նաև բանահավաք, ազգագրագետ Ս. Հայկունու՝ Խնուսից հավաքած բանահյուսության մեջ առկա իրողությունները²²:

Իբրև Խնուսի բարբառային միավորի տարբերակային դրսևորում՝ Հեշտիայի խոսվածքը ուշադրության է արժանի նրանով, որ ի տարբերություն Ջավախքի տարածաշրջանում մայր բարբառի համախումբ գործառող խոսվածքների՝ գործածվում է լեզվական այլ միջավայրում՝ շրջապատված բարբառային տարբեր միավորներ ներկայացնող

¹⁵ **Потто В.**, Кавказская война, Т. 4, ставраполь, 1994,с.543-550.

¹⁶ Ալոյան Ս., նշվ. աշխ., էջ 35:

¹⁷ Նշվ. աշխ., էջ 36-37:

¹⁸ **Մելիքեան Ե.**, նշվ. աշխ., էջ 97, 99:

¹⁹ «Մշակ», 1915 թվական, թիվ 175:

²⁰ **Մելիքեան Ե.**, նշվ. աշխ., էջ 97, 432:

²¹ Նշվ. աշխ., էջ 97, 413:

²² **Հայկունի Ս.**, *ժողովրդական հեքեայթ*, Էմինեան ազգագրական ժողովածու, Հատոր Դ, Լազարեանց Ճեմարան Արևելեան լեզուաց, Մոսկուա - Վաղարշապատ, 1902:

խոսվածքներով, և կարող է հետաքրքրություն ներկայացնել թե՛ բարբառի ընդհանուր հատկանիշների դրսևորումների և թե՛ ինքնուրույն զարգացման յուրահատկությունների առումներով: Խոսվածքի ներկա վիճակը հետազոտելու նպատակով 2023թ. դաշտային աշխատանքներ ենք կատարել Հեշտիա գյուղում, անհրաժեշտ նյութեր հավաքել հարցա-րաններով, բանավոր խոսքն ու զրույցը տեսաձայնագրելու եղանակով, դիտարկել ենք տարբեր սեռերի և տարիքի անձանց բարբառային խոսքը: Բերենք խոսվածքը բնութա-գրող մի քանի հատկանիշներ:

Հեշտիայի խոսվածքում իրենց արտահայտությունն ունեն Մշո բարբառի ձայնա-վորական համակարգին բնորոշ բոլոր հատկանիշները: Շեշտակիր վանկում ցայտուն արտահայտված է *ե* երկբարբառը՝ «իե» հնչմամբ: Օրինակ՝ Տունն ավլեց, ժեխն դուրս լորդեց (տունն ավլեց, աղբը դուրս նետեց). Հ՛առուն ցամկեր ը (առուն ցամաքել է). Նուշ զըրմնի ծիրանի (ծիրանու) կդին, քըճումի մեճ ը (Նուշը նման է ծիրանի կորիզին, բայց մի քիչ մեճ է), Հ՛իսուս գոդին կաբեր ը (ծիածան): Խոսվածքն ունի յուրահատուկ առոգա-նություն. հարևան գյուղի բանկիչները հեշտիացիներին խոսվածքի մասին այսպես են արտահայտվում. «Հեշտեցիք քըճումի տապակ կզըրցին»: Նախադասության վերջին բառը երկարացնում են, հաճախ, եթե հարցական բառը վերաբերում է վերջին բառին, այն ավելի շատ հնչերանգով նմանվում է բացականչականին:

Մշո բարբառում գործածվում են 36 բաղաձայններ (բ, պ, փ, գ, կ, ք, դ, տ, թ, ձ, ծ, ց, ջ, ճ, չ, բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛, վ, ֆ, զ, ս, ժ, շ, դ, խ, հ՛, հ, մ, ն, լ, ր, ո, յ): Բարբառը բնութագրվում է բաղաձայնական քառաստիճան համակարգով և շնչեղ ձայնեղների, ինչպես նաև ձայնեղ հ՛-ի առկայությամբ: Շնչեղ ձայնեղները գործառում են բառասկզբում՝ գրաբարյան ձայնեղների դիմաց: Բառասկզբում է գործառում նաև ձայնեղ հ՛-ն՝ իբրև ձայնավորով սկսվող բառերում դրսևորող բառերի հավելում (հ՛երգեն, հ՛ուսում, հ՛իստակ, հ՛իրգուն)²²: Հաճախ է տեղի ունենում *բ>յ* հնչյունական անցում, ինչպես՝ անունները>անըննեյն, բերանները>բերըննեյն, կայծակները>կեճգնեյն, կամուրջները>կարմընջնեյն, սարը- սայն, ջուրը- ջույն և այլն:

Խոսվածքում ներգոյական հոլովի իմաստը առավելաբար արտահայտվում է հայցական հոլովով. *Օղզիզն* կար տանձ ու խնձոր (Ձամբյուղում կար տանձ ու խնձոր): Բացակայում է *ը* որոշյալ հոդը, և միշտ օգտագործվում է *ն*-ն:

Անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքերի եզակիի և հոգնակիի ձևերը, համեմատած մայր բարբառի հետ, կրճատ են (առանց «ի»-ի).

Ընձ - ինձ Մըգ- մեգ

Քըգ - քեգ Չըգ- ձեգ

Հ՛նուր- նրա Հ՛նունց- նրանց

Ցուցական դերանուններից են՝

Իդմը-այսպես

Հուդը-այստեղ

Էդմը(քղզ պես)-այդպես

Հոդի- այդտեղ

Ինմը-այնպես

Հունը-այնտեղ

Հարակատար դերբայը կազմվում է *-ուզ* մասնիկով (սատկած- փիծծուզ, դրած- դրուզ):

Հեշտիայի խոսվածքում գրաբարյան (հինհայերենյան) ձայնարկություններից պահմանվել է «օ՛ շ»-ը, որն արտաստանում են հիմնականում զարմանք արտահայտելու համար:

Խոսվածքում բավականին շատ են փոխառությունները, որոնք վկայում են տարբեր ազգերի հետ բարբառակիրների ունեցած շփումների մասին: Հանդիպում են թուրքերեն, արաբերեն եբրայերեն, պարսկերեն, ռուսերեն փոխառություններ:

Պետք է ասել, որ Հեշտիայի խոսվածքը (նույնն է՝ Խնուսի խոսվածքը) կղզիացված է, շրջապատված չէ նույն բարբառի այլ դրսևորումներով, ուստի կարելի է ենթադրել, որ այն պահպանել է մայր խոսվածքի էական շատ հատկանիշներ:

Հեշտիայի խոսվածքի հանգամանալից ուսումնասիրությունը հնարավորություն կտա բացահայտելու Խնուսի խոսքի բազմերանգ խճանկարի էական շատ հատկանիշներ, որը կարևոր նշանակություն կունենա Մշո բարբառի նկարագիրը ամբողջացնելու առումով:

Օգտագործված գրականության ցանկ

Արոյան Ս., Մշո ջոջ քարի բեկորներ, Ե., «Արամազդ» հրատ, 1996թ.:

Բոգդոնովկայի շրջանի տեղեկագիրք, Բոգդոնովկա, 1992:

Ինճիճյան Ղ. «Աշխարհագրություն չորսից մասանց աշխարհի», մաս 1, Ասիա, հ. 1., Վենետիկ, 1806 թ.:

Լալայան Ե., Երկեր, հ. 1, Ե., 1983:

Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Ե., «Հայաստան» հրատ., 1971:

Կատվայան Վ., ՀՀ բարբառային համապատկեր, Գիրք 1-ին, Գեղարքունիքի մարզ, Եր., 2018:

Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1983թ.:

Հակոբյան Պ., Հայ կաթոլիկությունը պատմա-քննական լույսի տակ», Ե., 1993թ.:

Հայկական սովետական հանրագիտարան, հ.6:

Հայկունի Ս., Ժողովրդական հեքեաթ, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Դ, Լազարեանց Ճեմարան Արևելեան լեզուաց, Մոսկուա - Վաղարշապատ, 1902:

«Մշակ», 1915 թվական, թիվ 175:

Մելիքեան Ե., Հարք-Խնուս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տան Կիլիկիոյ, Անթիլիաս, Լիբանան, 1964:

Մելքոնյանն Ա., «Էրզրում, Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին եռամսյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)», Ե., 1994:

Н.Корсун , Первая мировая война на кавказском фронте, М.,1916:
Потто В., Кавказская война, Т. 4, Ставрополь, 1994,.

РЕЗЮМЕ

О диалекте жителей села Эштия

Аросян Мария

Диалект жителей села Эштия, выходцев из Западной Армении из Хнуса, входивших в состав Эрзурумского района, достоин внимания, поскольку в отличие от речи материнского диалекта в Джавахкском регионе, он используется в иной языковой среде, в окружении разных диалектных единиц, и может представлять интерес как проявление общих черт диалекта, так и с точки зрения особенностей самостоятельного развития. Армянский диалект, на котором говорили в Эрзруме, имел свои уникальные особенности и характеристики, которые отличали его от других диалектов западноармянского языка, на которых говорили в разных регионах. Как и другие диалекты, мушский диалект имел различия в произношении, словарном запасе и грамматике. К сожалению, из-за таких исторических событий, как Геноцид армян и последующие перемещения населения: армянское население Хнуса было в значительной степени перемещено, ассимилировано с другими общинами или убито. В результате мушский диалект западноармянского языка сильно пришел в упадок, и в настоящее время находится под угрозой исчезновения. Целью этой статьи является исследование и сохранение уникального диалекта армянского народа, на котором когда-то говорили в таких местах, как Хнус. Тщательное изучение диалекта жителей села Эштия позволит нам изучить неоткрытые аспекты Хнусского диалекта, о которых мы знаем очень мало.

Ключевые слова: Хнус, диалект, особенность, говор, звонкий согласный, четырехстепенный, влияние.

SUMMARY

About the dialect of the residents of the village of Heshtia

Arosian Maria

The dialect of the residents of the village of Heshtia, immigrants from Western Armenia from Khnus, which were part of the Erzurum region, is worthy of attention, because, unlike the speech of the mother dialect in the Javakhk region, it is used in a different linguistic environment, surrounded by different dialect units, and may be of interest both as a manifestation of the common features of the dialect, and from the point of view of the characteristics of independent development. The Armenian dialect spoken in Erzurum would

have had its own unique features and characteristics, which distinguished it from other dialects of Western Armenian spoken in different regions. Like other dialects, the Mush dialect would have had variations in pronunciation, vocabulary, and grammar. Unfortunately, due to historical events such as the Armenian Genocide and subsequent population movements, the Armenian population of Khnus was largely displaced, assimilated into other communities or murdered. As a result, the Mush of Western Armenian has significantly declined and is now endangered. This article aim to research and safeguard the unique dialect of the Armenian people, that were once spoken in places like Khnus. A thorough study of the dialect of the villagers of Heshtiya will allow us to study the undiscovered aspects of the Khnus's dialect about which we know very little.

Key words: Khnus, dialect, feature, speech, voiced consonant, four-degree, influence.

ՇԻՐԱԿԻ ԲԱՐԲԱՆԱՅԻՆ ԽՈՍՔԻ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՇՈՒՐՁ¹

Ջեննա Բառնասյան

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ավագ գիտաշխատող

barnasyanjemma@mail.ru

DOI: 10.54412/99399305-2023-11

Բանալի բառեր. գիտարշավ, խոսվածք, բառապաշար, դարձվածք, ժողովրդական լեզվամտածողություն:

Շիրակի մարզում ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի աշխատակիցներս բարբառագիտական գիտարշավի շրջանակներում իրականացնում ենք դրամաշնորհային ծրագիր՝ տարածաշրջանի բարբառային համապատկերը ներկայացնելու նպատակով: Հայտնի է, որ Շիրակի մարզի բազմաթիվ գյուղերում 19-րդ դարի կեսերին տեղաբնիկների կողքին բնակություն են հաստատել և առայսօր բնակվում են Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից գաղթածների սերունդները՝ այս կամ այն չափով պահպանելով իրենց պապերի խոսվածքը: 20-րդ դարի Հայոց ցեղասպանությանը հաջորդած գաղթականների նոր ալիքի հետ Շիրակ աշխարհի բազմաթիվ գյուղերում բնակություն հաստատեցին Արևմտյան Հայաստանից գաղթածների հոծ խմբեր Մուշից, Բասենից, Կարսից, Էրզրումից և այլն: Հին ու նոր գաղթականների և տեղաբնիկների խոսվածքների փոխազդեցությամբ ձևավորված լեզվական միջավայրը հետաքրքիր ուսումնասիրությունների նյութ է տալիս:

Շիրակի մարզի որոշ գյուղերում խոսվածքների հավաքչական ամշխատանքներով զբաղվել են դեռ անցյալ դարի 80-ական թվականներից և բարբառագիտական գործուղման շրջանակներում ըստ հատուկ ծրագրի² հետաքրքիր նյութեր են գրանցել մարզի՝ այն ժամանակվա Ախուրյանի շրջանի *Ոսկեհասկ*, *Հայկավան*, *Ախուրիկ* գյուղերում: Համեմատաբար մոտ գտնվելով Գյումրի քաղաքին՝ զգալի է այդ գյուղերի խոսվածքներում Կարնո բարբառի ազդեցությունը, որն առայսօր կենդանի, գործուն է և որպես հաղորդակցման միջոց է ծառայում Գյումրիում և շրջակա մի շարք գյուղերում:

Շիրակի մարզի *Գետք*, *Ազատան* և *Մարմաշեն* գյուղերում հիմնականում բնակվում են տեղաբնիկներ՝ խոսելով –*ուլ* ճյուղի բարբառով: 19-րդ դարում, ապա նաև 20-րդ դարասկզբին Կարսից և Էրզրումից այստեղ գաղթածների սերունդները –*ուլ* ճյուղի

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6B111 ծածկագրով «Շիրակի մարզի բարբառային համապատկեր» գիտական թեմայի շրջանակներում:

² Տե՛ս *Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր*, Ե., 1977:

բարբառով խոսողներին տարբերակում են՝ նրանց անվանելով՝ *-ըմ-ով* խոսողներ (*գալըմ է, ըսըմ է, բերըմ է, տանըմ է* և այլն) : Անցյալ դարի 80-ականներին իմ այցելությունների ժամանակ զգալի թիվ էին կազմում նաև Մեծ եղեռնից մազապուրծ գերդաստանների երրորդ սերնդի ներկայացուցիչները: Նմանատիպ գյուղերում նախկինում նկատելի էր առանձին թաղերով (մայլա) բնակվելու և այդ կերպ իրենց խոսվածքն ու սովորությունները հնարավորինս պահպանելու միտումը, բայց հիմա արդեն այդպես չէ: Բնականաբար, հետագայում նմանատիպ գյուղերում տասնամյակների ընթացքում առաջացել են միջբարբառային խոսվածքներ: Օրինակ, ասենք, *Գետք, Ագատան, Մարմաշեն* գյուղերում, ուր տեղաբնիկների բարբառը Արևելյան բարբառախմբին է պատկանում, հիմա արդեն առատորեն գործառում են նաև *կը* ճյուղին հատուկ ձևեր, ինչպես արձանագրեցինք մեր վերջին այցելությունների ժամանակ:

Մեր առջև նպատակ դնելով մարզի գյուղերի խոսվածքների բառապաշարային շերտերի ուսումնասիրությունը՝ արդեն իսկ անդրադարձել ենք կայուն բառակապակցություններին: Այս անգամ քննության առնենք լեզվի ոճավորման հարցում շատ կարևոր և որոշակիորեն վերախմաստավորված, արտահայտության պլանում գրեթե անփոխարինելի և անփոփոխելի կայուն կապակցությունները՝ դարձվածքները, որոնցով հարուստ են հատկապես բարբառները:

Դարձվածքներն ըստ էության ժողովրդական լեզվամտածողության արդյունք են և ձևավորվում են հիմնականում խոսակցական տարբերակում, ապա աստիճանաբար թափանցում են նաև գրական լեզու: Դրանք խոսքի ոճավորման կարևորագույն միջոց են³: Անորոշությունը խորթ է ժողովրդի լեզվամտածողությանը, և բարբառներում կան բառակազմական ձևեր ու միջոցներ բառն առավել ճանաչելի, բառիմաստն ընկալելի դարձնելու, իմաստային նրբերանգներ արտահայտելու համար: Ինչպես նշել է Պետրոս Բեդիրյանն իր ուսումնասիրության մեջ՝ «Դարձվածքը բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի, վերախմաստավորված կապակցություն է, ուր բաղադրիչ բառերի ինքնուրույնությունը ձևական է, շարահյուսական կապը՝ մթազնաձև»⁴:

Դարձվածային են այն բառակապակցությունները, որոնք իրենց առաջացմամբ կապվում են խոսքի հետ, այսինքն՝ նախապես եղել են սովորական շարահյուսական կապակցություններ և հետագայում, գործածվելով փոխաբերաբար, աստիճանաբար վերածվել են ինքնուրույն բառակապակցության ու ստացել բառային իմաստ՝ հենց այդ փոխաբերական նշանակությամբ ստանալով բառին հատուկ անվանողական դեր: Շատ դեպքերում դրանք ներկայացնում են պատկերավոր լեզվամտածողության հիանալի նմուշներ: Ասենք, հարադրվում են բառային հոմանիշներ՝ առարկան կամ երևույթն առավել ընկալելի դարձնելու նպատակով: Ըստ մեր գրառումների՝ Կարնո բարբառի

³ Տե՛ս Պետրոսյան Հ., *Շայերենագիտական բառարան*, Ե. 1987, էջ 175:

⁴ Տե՛ս Բեդիրյան Պ., *Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն*, Ե. 1973, էջ 5:

Գյուճարի խոսվածքում նկարագրական եղանակով այս կամ այն իրադարձության, մարդկային փոխհարաբերությունների, արտաքինի նկարագրության հարցում մշտապես գործառոդ բառակապակցություններից բացի կարող են լինել նաև դիպվածային, սեղանուտեղը ստեղծված և շատ դեպքերում ծիծաղ հարուցելուն միտված արտահայտություններ, ինչպես՝

Հուրի-փերի կրնիզրմ ունի էդ լօլօգ-պօլօգ տրդէն:

Մեր այս քննության շրջանակներում ներկայացնենք Շիրակի մարզի Ոսկեհասկ գյուղում տասնամյակներ առաջ մեր գրառած զվարճախոսությունների մի փունջ: Այդ փոքրիկ և հումորախառն պատմություններում առկա է Մեծ եղեռնից հետո Մուշից, Բասենից, Խուրթից, Կարսից գաղթած և Շիրակի Ոսկեհասկ գյուղում բնակություն հաստատած մարդկանց բնորոշ շիտակությունը, պարզությունը, միամտությունը: Միմյանց հանդիպելիս ոսկեհասկցիները առիթը բաց չեն թողնում միմյանց ուրախություն պատճառելու այդ զվարճախոսություններով՝ վերհիշելով իրենց սրամիտ համագյուղացիների կարճ ու դիպուկ արտահայտությունները՝ երբեմն, իհարկե, փոքր-ինչ փոխելով պատումը՝ կախված խոսվածքին տիրապետելու աստիճանից:

Գյուղի ամենասրամիտ մարդկանցից մեկն էլ պապիս եղբայր *Քարամ Բառնասյանն էր՝* ծնված 1911թ. Մշո գավառի Մկրագոմ գյուղում: Նրանից դեռ 1978 թվին գրառել էմ Մկրագոմ գյուղի խոսվածքը: Բերենք օրինակներ պապիս օգտագործած դարձվածքներից, որոնք նույնպես գրառել էմ այդ շրջանում: Բերենք որոշ օրինակներ: Իմ տված հարցերին պատասխանելիս Քարամ Բառնասյանը շուտ-շուտ ընդհատում էր ինձ՝ տարբեր դարձվածքներ գործածելով, ինչպես՝

- *Օ՛Ֆ , հ ընգէր իս տրորլտի բանէրու հ էդէվ* (Օ՛Ֆ, ընկել ես դատարկ բաների հետևից):
 - Իսկ երբ հոգնեցնում էի իմ հարցաշարով, ասում էր.
 - *Ախճի լա՛օ, առար իմ հոկին, հէ՛րկէ հարծու* (Աղջիկս , հոգիս հանեցիր, հերիք է հարցնես):
 - Կամ երբ որևէ բառանվանման շուրջ կասկած էի հայտնում, ասում էր.
 - *Իդադ իմալ գ՛ուզիս, գրէ՛, աշխար չա՛վրի* (Հիմա ինչպես ուզում ես, գրի՛ր, աշխարհը չի ավերվի):

Մի խոսքով՝ պապս զանազան դարձվածքներով առավել հետաքրքիր ու աշխույժ էր դարձնում իր մայրենի խոսվածքը գրառելու գործընթացը:

Ներկայացնենք ոսկեհասկյան որոշ զվարճախոսություններ՝ զանազան դարձվածքներով համեմված:

1. Քարամ պապը ութսուն տարեկանում հիվանդանում, անկողին է ընկնում: Նրա երկրորդ կինը՝ Թանթուխը, սիրում էր հոգատար կին երևալ և ամուսնու համար հավ է մորթում: Հավանաբար ծեր հավ է լինում և շա՛տ ուշ է եփվում: Քարամը, գդալը ձեռքին

պատրաստ պահած, սպասում է հավի եփվելուն: Տան կատուն էլ , հոտն առնելով, սկսում է անվերջ մլավել: Քարամը գայրանում է.

-Ի՞նձ է, կադու, դու լե անօտի ի՞նչ, սըդի պաբու քյալլեն, թե դու ընձնե անօտի իս,-
գդալը կատաղությամբ հարվածելով կատվի ճակատին՝ ասում է Քարամը:

-Էլ չըմու՛ղի: Ըդի հավ չէր, *գըմշու կաշի* էր:

2. Քարամ պապիկի կրտսեր հարսը սկեսրայրին տեսնելու է գալիս և ուզում է նրան ցույց տալ իր խոհարարական հմտությունները: Թխում է ընտիր շերտավոր գաթա՝ բացված գրքի տեսքով: Քարամը փորձում է ուտել, բայց փխրուն գաթան փշրվում է ու թափվում հագուստին: Ծերունին գայրանում է.

-Ախճի լա՛օ, հ՛օրի՞ չըկօղիր խօրօղիգ թունդրա գ՛ատա, օր ուղենկ: Իդա ի՞նձ է:
Նըմընի *գիլու բէրան*: Վալլա, չըմ ու՛ղի:

3. Խութա Սօդօն բոստանում գործ անելիս պատվիրում է կնոջը, որ իրենց բահը շտապ բերի: Կինը չի գտնում և վերադառնում է դատարկաձեռն:

- Չըգըդա մըր թիյագ:

- Ըբը հու՞ր է կօրի:

- Խաբա՞ր իմ, *գըրօղի ծօծն* է: Վայտեմե սըդընեն է տարի:

-Դը գընա-ըսե՛ք ույրի՛գ սըդընա, մըր բայ տու՛, - լուրջ-լուրջ պահանջում է Սօդն:

4. Ոսկեհասկ գյուղի խութեցիների թաղում 80-ական թվերին շատ հետաքրքրասեր, բոլորի գործերին խառնվող մի կին կար՝ Սադաֆ անունով: Մի օր նրա պատկից հարևան Ստեփանն արագ-արագ ու քրտինքի մեջ կորած՝ փոս է փորում իր տղայի հետ, որ նոր գուգարան սարքեն: Սադաֆը մոտենում է հարցաքննելու, թե ինչի՞ համար են այդքան խոր փոս փորում: Գլուխն ազատելու համար հարևանը պատասխանում է.

-Չէ՛ճ, կառտօլի հոր է գը փօրինկ...

-*Քու տուն չավրի, ըբը հ՛օրի՞ իդաքան խօրուն*:

- Քու գ՛օրձ չէ, *գընա քու բանին*:

- Հա՞, դէ օր հըմալ է՝ *բարօվ հ՛ընա՛կ, բարօվ լէ ուղիք*, - <բարեմաղթում է>

Սադաֆը:

5. Խութեցի Սադաֆը հաճախ էր խռովում իր հարևան Ստեփանից և կովելիս ինքնահնար արտահայտություններով էր անպատվում նրան՝ զարմանք պատճառելով ներկաներին: Ահա նրա դիմելաձևերից մեկը՝ նկատի ունենալով հարևանի կարճահասակ լինելը.

- Մըդա՛լ խսձուգ փուռձուլուգ, պասմի վըրավի ճէ՛դ, ի՞նձ գ՛ուզիս իմ խէղջուկըրագ արեվուծ...

6. Ոսկեհասկ գյուղի եղևկանների թաղից Ջավեն անունով մի տղա բանակից վերադառնալուց հետո տնից դուրս է գալիս զբոսնելու և հարևանների մոտ պարծենալու ռուսերենի իր իմացությամբ: Շանը բնում չտեսնելով՝ հարցնում է մորը.

-Ա՛յ մեր, ըբը մեր սաբակը հո՞ւ ր է, օր չըկա:

-Բալա ջան, դու օր սաղ-սալամատ էգէլ էս, մեզի հըմար *համ սաբակ էս, համ էլ՝ կալօշ*, - պատասխանում է մայրը:

Այս և բազմաթիվ այլ զվարճախոսություններ վերապատմելիս ուզում ես անվերապահորեն համաձայնել 19-րդ դարի նշանավոր հոգեվերլուծաբան Զիգմունդ Ֆրոյդի այն տեսակետին, որ սրամտությունը կապ չունի մարդու կրթական մակարդակի հետ, այն առնչվում է ենթագիտակցության ոլորտին: Իսկ մայրենի բարբառի բառապաշարին, դարձվածային արտահայտությունների հարստությանը տիրապետելով՝ հայրենակիցների հետ ամեն խոսքուզրույց կարելի է կատարյալ վայելքի վերածել:

Օգտագործված գրականության ցանկ

Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե. 1973:

Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, Ե., 1977:

Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Ե. 1987:

РЕЗЮМЕ

О фразеологизмах в диалектной речи Ширака

Барнасян Джемма

При проведении исследования в диалектно-коммуникативной среде исследователь записывает также многие употребляемые в диалектной речи фразеологизмы, зародившиеся на протяжении долгих веков жизни народа, репрезентирующие мировосприятие людей, представления, быт. Таким образом, фразеологизмы имеют не только диалектолого-лингвистическое значение, но и большое познавательное значение. В статье рассматриваются фразы, записанные в ходе полевых работ, проводимых в Ширакской области как в конце прошлого века, так и в последние годы.

Ключевые слова: научная экспедиция, говор, лексика, фраза, языковое мышление.

SUMMARY

About phrases in Chirac's dialect speech

Barnasyan Jemma

When conducting research in a dialect-communicating environment, the researcher also writes down many used phraseological units in the dialect speech, which were born during the long centuries of the people's life, representing people's perception of the world, ideas, and everyday life. Thus, idioms have not only a dialectological-linguistic meaning, but also a large cognitive meaning. In the article, phrases written down during the fieldwork carried out in Shirak marz, both at the end of the last century and in the last years, are considered.

Key words: scientific expedition, dialect, vocabulary, phrase, linguistic thinking.

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՈՍՎԱԾՔԸ ԵՎ ՆՐԱ ԼԵԶՎԱԿԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌԻ ՀԵՏ

Գևորգյան Գայանե

Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան
բանասիրական գիտությունների դոկտոր
պրոֆեսոր
gevgayane@gmail.com

DOI: 10.54412/99399305-2023-17

Բանալի բառեր. խոսվածք, լեզվական բնութագիր, ձևաբանական դասակարգում, մասնիկ, հնչյունական համակարգ, վերջավորություն:

Բարբառագիտության և հայոց լեզվի պատմության կարևոր խնդիրներից է բարբառային միավորների քննությունը, որը գիտական հետաքրքրություն է ներկայացնում հատկապես նյութի առումով: Բանն այն է, որ բարբառախոսների նվագումը, լեզվական միասնական միջավայրի բացակայությունը, ինչպես և արտաքին ազդեցությունները սահմանափակում են խոսվածքների գործառույթյան շրջանակները: Նկատի ունենալով, որ միայն պահպանված միավորներ իքնությունը կարող է ինչ-որ չափով լրացնել բացը, սույն աշխատանքում ներկայացվում է Կարնո բարբառի դրսևորումներից մեկի՝ Գյումրու խոսվածքի նկարագիրը: Գյումրին գտնվում է Շիրակի դաշտավայրում՝ Ախուրյան գետի ձախ ափին՝ ծովի մակերևույթից 1556 մ բարձրության վրա: Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Հին և միջին դարերում կոչվել է Կումայրի, հետագայում՝ Գյումրի: 1837-ին քաղաքը վերանվանվել է Ալեքսանդրապոլ, 1924-ից՝ Լենինական¹: 1990-1992 թվականներին կրկին ստացել է հին անունը՝ Կումայրի, այնուհետև վերանվանվել Գյումրի:

Բարբառագիտական գրականության մեջ մասնակիորեն է անդրադարձ կատարվել Գյումրու խոսվածքին:² Գ. Ջահուկյանը բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգում կատարելիս 120 հայախոս վայրերի մեջ ընդգրկել է նաև Գյումրին՝ Լենինական անվանմամբ: Եվ քանի որ նա բարբառների բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգում կատարել է հարյուր հնչյունաքերականական տարբերակիչ հատկանիշների հիման վրա, որոնց առկայությունը աղյուսակներում նշանակվել է պլուս (+), իսկ բացակայությունը՝ մինուս (-) նշաններով, ապա ինչպես 120 վայրերից յուրաքանչյուրը, Լենինականը ևս բնութագրվում է պլուսների և մինուսների որոշակի քանակով, այսինքն՝ հնչյունաքերականական հատկանիշների առկայությամբ կամ բացակայությամբ³: Խոս-

¹ Հայկական սովետական հանրագիտարան, Ե., 1978, հտ. 4, էջ542-543:

² Տե՛ս Աճառյան Հ., *Հայ բարբառագիտություն*, 1911, էջ 241, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 2, Երևան, 1950:

³ Տե՛ս Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 52, 71, 83, 109:

վածքի որոշ հատկանիշների անդրադարձել է Հ. Մկրտչյանը «Կարնո բարբառը» աշխատանքում⁴: Նրա կարծիքով՝ Կարնո բարբառը ներկայումս Գյումրու և մերձակա շրջանների (Արթիկ, Ախուրյան) բնակիչների զգալի մասի խոսակցական լեզուն է⁵: Պատճառը հայտնի է. 1829-30 թվականներին Արևմտյան Հայաստանից գաղթած կարսեցի և կարնեցի մեծ թվով ընտանիքներ են հաստատվել Գյումրիում:

Գյումրու խոսվածքին մասնակիորեն անդրադարձել է նաև Լ. Գևորգյանը իր «Շիրակի տարածքի խոսվածքների քերականական զուգաբանությունների փոխհարաբերությունները» աշխատանքում⁶:

Ինչպես երևաց վերոնշյալից, Գյումրու խոսվածքի վերաբերյալ բարբառագիտական գրականության մեջ կան դիտարկումներ, սակայն նրա արդի նկարագիրը և առնչությունները Կարնո բարբառի հետ քննված չեն: Ուստի սույն աշխատանքում ներկայացվում են Գյումրու խոսվածքի արդի վիճակը և Կարնո բարբառի հետ ունեցած լեզվական փոխհարաբերությունները:

Գյումրի քաղաքի լեզվական բնութագիրը տրվում է՝ ըստ Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով գրանցված «Լենինական քաղաքի խոսվածքը» աշխատանքի տվյալների⁷: Այն անցյալ դարի 80-ական թվականներին Հայերենի բարբառագիտական ատլասի (այսուհետ՝ ՀԲԱ) ծրագրով գրանցել է ուսուցչուհի Մարիամ Ավագյանը՝ ծնվ. 1940 թվ. Լենինական քաղաքում: Գյումրու խոսվածքը, ըստ միահատկանիշ ձևաբանական դասակարգման, պատկանում է Կը ճյուղին, ըստ վիճակագրական-բազմահատկանիշ դասակարգման՝ Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբի Կարինի բարբառին: Գ. Ջահուկյանը Կարինի բարբառը ընդգրկել է հայ բարբառների արևմտյան խմբակցության Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբում և ներկայացրել ըստ 4 վայրերի՝ Կարին, Լենինական, Բաբերդ, Խնդածոթ⁸:

Գյումրու խոսվածքում *ա, ի, է, օ, ու, ը* ձայնավորները որակական փոփոխությունների չեն ենթարկվել: *Ա* ձայնավորը հանդիպում է տարբեր դիրքերում՝ *բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղ հնչյուններին կամ դրանցից առաջացած շնչեղ ձայնեղներին հաջորդող (*բարձ-բ'արձ, բարակ-բ'արագ, բան-բ'ան, դաս-դ'աս, դանակ-դ'անագ, ևն*), *մ, ն* ռնգայիններին նախորդող (*ամիս-ամիս, ամպ-ամբ, թան-թան, համար-համար, մանել-մանել* ևն), ինչպես նաև շչականներին նախորդող և հաջորդող դիրքերում (*ճանճ-ճանջ, բաժին-բ'աժին, խարշել-խաշել, կարճ-կարջ* ևն):

⁴ Մկրտչյան Հ., *Կարնո բարբառը*, Երևան, 1953:

⁵ Մկրտչյան Հ., նշվ. աշխ., էջ 7:

⁶ Գևորգյան Լ., *Շիրակի տարածքի խոսվածքների քերականական զուգաբանությունների փոխհարաբերությունները*, Գիտական տեղեկագիր Շիրակի պետական համալսարանի, հ. 1, Գյումրի, 2016, էջ 19-27:

⁷ Տե՛ս *Հայերենի բարբառագիտական ատլասի նյութեր* (այսուհետ՝ ՀԲԱ), Լենինական քաղաքի խոսվածքը, հ. 95:

⁸ Տե՛ս *Ջահուկյան Գ.*, նշվ. աշխ., էջ 132:

Ո և Ե միավորները խոսվածքում չեն գործառում: Ո-ի փոխարեն միավանկ բառերի սկզբում գործածվում է *վօ* (*որբ-վօրայ, որդն-վօրտ, ով-վօվ նն*), երկվանկ բառերի *սկզբում՝ վօ կամ օ* (*ոչխար-օճխար, ոջիլ-օճիլ, որդնել-օրտընել, որսալ-վօրսալ, ոռնալ-վօռնալ* նն), հինհայերենյան ձայնեղներին (*բ, գ, դ, ձ, ջ*) կամ դրանցից առաջացած խուլերին հաջորդող (*բողկ-բ՛օխկ, գործ-գ՛օրձ, ձոր-ձ՛օր* նն), ինչպես նաև բառամիջի շեշտակիր և նախաշեշտ դիրքերում (*կոշտ-կօշտ, մում-մօմ, փոս-փօս* նն) գործածվում է *օ* :

Հ. Մկրտչյանը, բառասկզբում դիտարկելով *n*-ի դիմաց *օ* և *վօ* տարբերակների առկայությունը Կարնո բարբառում, չի հստակեցնում, թե քանի վանկ ունեցող բառերի դեպքում է այն գործում, որից ենթադրվում է, որ միավանկ բառերի սկզբում էլ կարող է *օ* արտասանվել⁹: Մինչդեռ Գյումրու խոսվածքում բառասկզբում գործածվում է միայն *վօ* հնչյունակապակցությունը:

Գյումրու խոսվածքը Ե-ի դիմաց միավանկ բառերի սկզբում ունի *յէ* (*եզն-յէզ, եռ-յէռ, ես-յէս նն*), բազմավանկ բառերի դեպքում՝ *է*, *որին նախորդում է հ հազագը* (*ելանել-հ էլնել, երես-հ էրէս, երկար-հ էրզան նն*): Հ. Մկրտչյանը *հ* հազագի գործածության փաստ այս դիրքում չի արձանագրում¹⁰: Բառամիջի շեշտակիր (*խելք-խէլկ, ցեց-ցէժ, ավել-ավէլ, ավեր-ավէրնն*), ինչպես նաև *n* ձայնորդին նախորդող *դիրքերում* (*մեռնել-մէռնէլ, սիսեռն-սիսէռ, մեռոն-մէռոնն*) առկա է Է ձայնավորը:

Գյումրու խոսվածքը երկբարբառներ չունի. հինհայերենյան երկբարբառները վերածվել են ձայնավորների: Այսպես՝ շեշտակիր *այ* երկբարբառի դիմաց գործածվում է Է ձայնավոր (*այդ-էդ, լայն-լէն, ծայր-ծէր, ձայն-ձէն, մայր-մէր* նն)¹¹, *աւ*-ի փոխարեն բոլոր դիրքերում գործածվում է *օ* հնչյուն (*աւր-օր, աւձ-օժ, աւձել-օժէլ, էաւթն-յօտ, մոտ-մօդ* նն), *ոյ* և *իւ* երկբարբառների դիմաց՝ *ու* ձայնավոր (*բոյն-բ՛ուն, թոյլ-թուն, բոյթ-բ՛ութ, ոյժ-ուժ* և *ալիւր-ալուր, հարիւր-հարուր, հիւսել-հուսէլ* նն):

Գյումրու խոսվածքն ունի շնչեղ ձայնեղներով բաղաձայնական համակարգ: Բառասկզբում ձայնեղ պայթականները և կիսաշփականները (*բ, գ, դ, ձ, ջ*) վերածվում են շնչեղ ձայնեղների (*բազուկ-բ՛ազուգ, բերան-բ՛էրան, գինի-գ՛ինի, դեղին-դ՛էղին, ձոր-ձ՛օր* նն), միջձայնավորային և հետձայնավորային դիրքերում՝ խուլերի (*գոգ-գօկ, թագավոր-թակավօր, ուրագ-ուրակ, արջ-հառձ, զարդարանք-զարտարանկ, աղբ-ախպ, դաղձն-դ՛ախձ* նն): Մինչդեռ Կարնո բարբառում բառամիջում և բառավերջում *բ, ձ* ձայնեղները պահպանում են իրենց ձայնեղությունը և խուլի վերածվում *ր* ձայնորդին հաջորդելիս, իսկ *գ, դ, ջ*-ն վերածվում են խուլ շնչեղների և վերականգնում ձայնեղությունը նոնգայինին հաջորդելիս¹²:

⁹ Մկրտչյան Հ., նշվ. աշխ., էջ 19:

¹⁰ Մկրտչյան Հ., նույն տեղում:

¹¹ Կարնո բարբառում նշված դիրքում առկա է *այ>ա* փոփոխությունը (տե՛ս Մկրտչյան Հ., նշվ. աշխ., էջ 24):

¹² Մկրտչյան Հ., նշվ. աշխ., էջ 42:

Միջձայնավորային և հետձայնավորային դիրքերում պարզ խուլի դիմաց Գյումրու խոսվածքն ունի ձայնեղներ (*ծակել-ծագել, խավիծ-խավիծ, լիճ-լիջ, հավատ-հավաղ նն*), իսկ շնչեղ խուլերի դիմաց խուլեր (*մենք-մենկ, մութ-մուտ, շաբաթ-շապատ, ութ-ուտ նն*):

Գյումրու խոսվածքում գործառում են *-եր (էր), -ներ(ներ), -ան, դիկ, վրդիկ, ք* հոգնակերտները, որոնց զուգորդելիությունը թվանիշ հիմքերին պայմանավորված է դրանց ձևախմբության առանձնահատկություններով: *-եր(էր)* վերջավորությունը բաղադրվում է միավանկ բառերին (*փեղ-փեղէր, պաղ-պաղէր, բ'արծ-բ'արծէր, հավ-հավէր, թէվ-թէվէր*նն), կենդանիների՝ միավանկ հիմքով անուններին (*ուլ-ուլէր, յէզ-յէզնէր, ուլ-ուլէր* նն): Կան կենդանիների անուններ, որոնք *ան* հոգնակերտ մասնիկով են արտահայտում հոգնակիության իմաստը (*էձ-իձան, ձ'ի-ձ'իյան, էշ-իշան, գ'էլ-գ'իլան* նն): *-էր* հոգնակերտ թեքույթը զուգորդվում է նաև գրաբարյան *-ն* վերջնահնչյունով միավանկ բառերի թվանիշ հիմքերին, որոնց գերակշիռ մասը հատկանշվում է հոգնակերտից առաջ *ն* վերջնահնչյունի պահպանմամբ (*դ'ուտ «դուտն»-դ'ըտներ, ծունգ-ծընգներ, բ'էն «բենն»-բ'էտներ, գ'ատ «գատն»-գ'ատներ, մուգ-մըգներ, նն*), *ինչպես նաև* միավանկ վերջնաբաղադրիչով այն բարդ բառերին, որոնց վերջնաբաղադրիչը պահպանում է իր իմաստային ինքնուրույնությունը, այսպես՝ *աղջ'ուր «աղաջուր»-աղջ'ըրէր, վերնատուն-վերնատընէր, տանդէր «տանտեր»-տանդէրէր նն*: *Տանտեր* բառի հոգնակի թիվը հատկանշվում է տարբերակային ձևերով. *-էր* հոգնակերտով կազմությունից բացի, գործածվում են նաև *վրդանկ, -վրդիկ* հոգնակերտներով բաղադրված ձևեր՝ *տան տիրվրդանկ, տան տիրվրդիկ*: *Դիկ* հոգնակերտով են հոգնակիի ձևեր կազմում *կին* և *մայր* հիմքերով բաղադրված բառերը, այսպես՝ *սանամէր-սանամըրդիկ* (նաև սանամէրներ), *քեռեգին-քեռեկընգըտիկ, տեկերգին-տեկերկընգըտիկ, եղբայր* (ախպէր-ախպըրդիկ), *կին* (կընիգ-կընգըտիկ), *տէքըր-տէքըրդիկ, քույր* (քուր-քուրվըտիկ) բառերը: *Քույր* բառին բնորոշ են նաև *քուրվրդանք, քուրէր* կազմությունները: *Հորաքույր* և *մորաքույր* բառերը հոգնակին կազմում են *-ներ* վերջավորությամբ (*հորկուրներ, մորկուրներ*): *-Ներ(ներ)* հոգնակերտ վերջավորությունը բաղադրվում է բազմավանկ բառերին (*հ'ընգէր-հ'ընգէրներ, իլիգ-իլգըներ, պատավ-պատվըներ, քաղակ-քախկըներ* նն), գաղտնավանկ վերջնավանկով երկվանկ բառերին (*աստըղ -աստըղներ, սանդըր-սանդըրներ, մանդըր-մանդըրներ* նն): Ձայնավորահանգ բառերի մի մասը հոգնակին կազմում է *ք* հոգնակերտով (տըղա-տըղէկ, քէնի-քէնիկ, հագոա-հագոէկ, էրէխա-էրէխէկ նն):

Այսպիսով, Գյումրու խոսվածքը բնութագրվում է հոգնանիշ թեքույթների առատությամբ, բաղադրյալ կազմությամբ հոգնանիշների գործածությամբ, որոնց գործածությունը պայմանավորված է ձևային և իմաստային գործոններով:

Գյումրու խոսվածքը հատկանշվում է հոլովանիշ վերջավորությունների և հերթագայությունների առկայությամբ, ինչպես նաև եզակի թվի հարացույցում *ի* հոլովանիշ թեքույթի, իսկ հոգնակիում՝ *ու* հոլովանիշի ընդհանրական արժեքով: *Ի* հոլովանիշ վերջավորությունը գործածվում է գրաբարյան *ն* վերջնահնչյունով (*տուտ «դուտն»-տուտի(ն)*,

ձունգ «ձունկն»-ձունգի(ն), ծուգ «ծուկն»-ծուգի(ն), մաղ-մաղի(ն), օտք «ոտք»-օտքի(ն) և *ք* հոգնակերտով բառերի (*միտկ-միտկի(ն), հարսնիկ-հարսնրկի(ն)* ևն), ինչպես նաև կենդանիների և թռչունների անունների (*արձիվ-արձրվի(ն), կաղու-կաղվի(ն), հավ-հավի(ն), աղվես-աղվրսի(ն)* ևն) եզակի թվի հարացույցերում՝ կազմելով նրանց սեռական-տրական հոլովաձևերը: Անձնանունները (*Նըշան-Նըշանի(ն), Անուշ-Անուշի(ն)* ևն) և տեղանունները (*Էրեվան-Էրեվրնի, Աբարան-Աբարանի, Մուշ-Մուշի* ևն) նույնպես այս հոլովման են ենթարկվում: Հոլովանիշ հիմքի և *-ոջ* թեքույթի համադրությամբ են բաղադրվում ազգակցական հարաբերություն ցույց տվող բառերի սեռական հոլովաձևերը, օրինակ՝ *քուր «քույր»-քրրօձ, տէր-տիրօձ, տէքրր «տէգր»-տէկրրօձ, կիսուր «սկեսուր»-կիսրօձ, տալ «տալ»-տալօձ* ևն: Ժամանականիշ բառերի սեռական հոլովաձևերը կազմվում են *-վա* հոլովական վերջավորությամբ (*ամիս-ամսրվա, ժամ-ժամվա, շապատ-շապտրվա, կէսօր-կէսօրվա, օր-օրվա* ևն): Բացառական հոլովը ձևավորվում է *-էն//ից* հոլովանիշ թեքույթների և հիմքի գուգորդելիությամբ (*աղվրսէն//աղվէսիծ-աղվրսնէրէն//աղվէսնէրիծ, թօնէն//թոռիծ-թօննէրէն//թօննէրիծ, ախպօրիծ//ախպօրէն-ախպօրնէրիծ, ախպօրնէրէն* ևն): Գործիական հոլովի իմաստը արտահայտվում է *-օվ* հոլովանիշ վերջավորությամբ բաղադրված կազմություններով (*բէրնօվ-բէրրննէրօվ, ամսօվ-ամսրննէրօվ, քարօվ-քարէրօվ, լիզօվ-լիզվրնէրօվ* ևն): Ներգոյական հոլովի իմաստը դրսևորվում է ուղղականաձև հայցականով (գէղը, աշխարը, բաղը ևն) կամ *մէճ* հետադրության և տրական հոլովաձևի բաղադրությամբ (*հօղի մէճը, ջրրի մէճը, տաշտի մէճը, փօրի մէճրն*): Հոգնակի թվաձևերի սեռական հոլովաձևերը կազմվում են *ու* հոլովական վերջավորությամբ (*գօվէր գօվէրու, շրնէր -շրնէրու, տէրէվնէր-տէրէվնէրու, տրնէր -տրնէրու, քաղաքնէր-քաղաքնէրու* ևն):

Ես, դու, մենք, դուք անձնական դերանունների տրական հոլովը կազմվում է գրաբարյան հոլովաձևերի (ինձ, մեզ, քեզ, ձեզ) հնչյունական տարբերակների և *ի* հոլովանիշ թեքույթի գուգորդությամբ, այսպես՝ *ընձի, քէզի, մէզի, ձէզի*¹³: Հայցական հոլովը տրականաձև է (*գրսիրէ ընձի, քէզի, մէզի, ձէզի*): Անձնական դերանունների բացառական հոլովաձևը կազմվում է տրականի հիմքի և *-իծ կամ -էն* հոլովանիշ թեքույթների (*ընձնիծ//ընձնէն, քէզնիծ//քէզնէն, մէզնիծ//մէզնէն, ձէզնիծ-ձէզնէն, հիրանիծ-հիրանէն*), իսկ գործիականը՝ տրականի հիմքի և *-օվ* վերջավորության համադրությամբ (*ընձնօվ, քէզնօվ, մէզնօվ, ձէզնօվ, հիրանօվ, հիրաննօվ*)¹⁴:

Գրաբարյան 4 լծորդություններից (*ա, ի, է, ու*) Գյումրու խոսվածքում պահպանվել են 2-ը՝ *ա, է* (*աղալ, էրէվալ, հավաղալ, անծնէլ, իւրմէլ, աբրէլ* ևն): Խոսվածքում բացակայում են անկատար և ապառնի դերբայները: Վաղակատար դերբային բնորոշ է *-էլ* վեր-

¹³ Տե՛ս նույն տեղը:

¹⁴ Տե՛ս նույն տեղը:

ջամասնիկը (*մընածէլ, զարմածէլն*)¹⁵, հարակատարին՝ *-ած* (*էփած, թըխած, քընած* նն): Ա խոնարհման բայերի ենթակայական դերբայը բաղադրվում է անցյալի հիմքով (*գ'օղծող, զարմածող, հասկըծող, վախէծող* նն): Ժխտական դերբայի իմաստը արտահայտվում է անորոշի հիմքի և *-է, -ա*, վերջամասնիկների զուգորդությամբ՝ (*չէմ) ըսէ, (չէմ) մընա, (չէմ) խօսա նն*:

Գյումրու խոսվածքում եղանակային իմաստները դրսևորվում են 4 կառուցատիպերով, որոնց բովանդակության պլանում համապատասխանում է եղանակային 5 իմաստ՝ սահմանական-ենթադրական, հարկադրական, ըղձական և հրամայական: Խոսվածքում ըղձական եղանակի ժամանակաձևերի իմաստով գործածվում են գրաբարյան ներկա և անցյալ անկատար բայաձևերը, որոնք, կրելով միայն հնչյունական փոփոխություններ, ձևային տարբերակվածությամբ չեն հատկանշվում (*կարտայի, կարտայիր, կարտար, կարտայինք, կարտայիք, կարտային*): Իմաստային տարբերակվածություն են դրսևորում *կու(զը/կը)* և *պիտի (բ'ըղի)* եղանականիշ մասնիկներով կազմությունները: *Կու (զը/կը)* եղանականիշով բաղադրված կառույցները արտահայտում են ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի, սահմանական ներկայի և անցյալ անկատարի իմաստներ՝ գործածվելով ինչպես նախադաս, այնպես էլ հետադաս դիրքերում (*մընամ զը//կըմընամ, մընաս կը//կըմընաս, մընա զը//կըմընա, մընանկ կը//կըմընանք, մընակ զը//կըմընաք, մընան զը//կըմընան, կուդէմ//ուդէմ զը, կուդէս//ուդէս կը, կուդէ//ուդէ զը նն*)¹⁶, իսկ *բ'ըղի*-ով կազմությունները՝ սահմանական և հարկադրական ապառնիների (*բ'ըղի ուդէմ, բ'ըղի ուդէս, բ'ըղի ուդէնկ, բ'ըղի ուդէկ, բ'ըղի ուդէն*):

Հրամայական եղանակի եզակի թվի իմաստը արտահայտվում է *է, ա, ի* վերջավորություններով բաղադրված կազմություններով: *Է* վերջավորություն են ստանում *է* խոնարհման պարզ բայերը (*գ'ըրէ, գ'աբէ, պաղմէ, սիրէ, նըսդէ, վագէ* նն), *-ա* վերջավորություն՝ *ա* խոնարհման պարզ բայերը (*մընա՛, խաղա՛, կարտա՛, հավաղա՛* նն): *Ե* և *ա* խոնարհման ածանցավոր բայերի հրամայականի ձևերը կազմվում են *-ի* վերջավորությամբ (*էլի՛, իճի՛, իմածի՛, անծի՛* նն): Ա խոնարհման ածանցավոր բայերը *-ի* վերջավորությունը հավելում են անցյալի ցոյական հիմքին (*մէնձըցի՛, հասկըծի՛* նն), իսկ *է* խոնարհման բայերը՝ ներկայի հիմքին (*հասի՛, մըղի՛* նն): Հրամայականի հոգնակի թվի ձևերը բաղադրվում են *-էկ* վերջավորությամբ, որը համադրվում է անցյալի ցոյական հիմքին (*մաղէճէ՛կ, պաղմէճէ՛կ, հիմածէ՛կ, ուրխըճէ՛կ* նն):

Ժխտական խոնարհման կառուցատիպերը ձևավորվում են նախամասնիկների զուգորդությամբ: Եղանականիշ նախամասնիկ չունեցող ժամանակաձևերի (դերբայա-

¹⁵ Հ. Մկրտչյանը Կարնո բարբառում վաղակատար դերբայի –եր վերջավորություն է արձանագրում (տե՛ս **Մկրտչյան Հ.**, նշվ. աշխ., էջ 66):

¹⁶ Կարնո բարբառում Հ. Մկրտչյանը բաղաձայնասկիզբ բայերի դեպքում նշում է *կը* մասնիկի միայն հետադաս գործածություն (տե՛ս **Մկրտչյան Հ.**, նշվ. աշխ., էջ 70):

կազմ ժամանակաձևեր, անցյալ կատարյալ, ըղձական (անցյալ-ապառնի) ժխտական կազմությունները բաղադրվում են չ ժխտական մասնիկով, որը համադրվում է հաստատական խոնարհման ձևերին (անց. կատ.՝ *չբզ ըրէծի, չբզ ըրէծիր, չբզ ըրէծ, չբզ ըրէծինկ, չբզ ըրէծիկ, չբզ ըրէծին, ըղձ.ապառնի՝ չբխըմէւ, չբխըմէս, չբխըմէ, չբխըմէնկ, չբխըմէկ, չբխըմէն*): *Կը/գը* (կ) եղանականիշ մասնիկ ունեցող կազմությունների ժխտական խոնարհման ձևերը բաղադրվում են ժխտական դերբայի (կամ նրա փոփոխականների) և օժանդակ բայի ժխտական ձևերի հարադրությամբ (*չէմ սիրէ, չէս սիրէ, չբսիրէ, չէնք սիրէ, չէք սիրէ, չէն սիրէ*): *Բ՛ըղի* եղանականիշով հարադրված կազմությունների ժխտական խոնարհման ձևերում չ (*չի*) մասնիկը նախորդում է եղանականիշին (*չբբըղի խըմիւ, չբբըղի խըմէս, չբբըղի խըմէ, չբբըղի խըմինք, չբբըղի խըմէք, չբբըղի խըմէն*): Արգելական հրամայականի իմաստը արտահայտվում է *մի(մը)* արգելական մասնիկի նախադաս կիրառությամբ (*մը՛ խաղա, մը՛ էրտա, մը՛ կարտա, մը՛ խօսա* ևն):

Գյումրու խոսվածքը հատկանշվում է *մէ* անորոշ հոդի նախադաս և ըմ անորոշ հադի հետադաս գործածությամբ (*Մէ մարտըմ ու մէ կընիզըմ կէղնին* «Մի մարդ ու մի կին են եղել»: *Մէ օրըմ էս մարտը հիվընդնա գը* «Մի օր այս մարդը հիվանդանում է»)¹⁷: Խոսվածքում որոշյալությունը դրսևորվում է *ը* և *ն* որոշիչ հոդերով (*Ծառը ծաղգավ* «Ծառը ծաղկեց»: *Լիզուն հ էրզան է* «Լեզուն երկար է»): *Ն* որոշիչ հոդը գործառում է ձայնավորահանգ բառերի դեպքում: Հատկացուցիչի և հատկացյալի համաձայնությունը արտահայտվում է համանիշ կառույցների գործածությամբ՝ անորոշ հատկացյալի հետ անորոշ հատկացուցիչ և որոշյալ հատկացյալի հետ անորոշ հատկացուցիչ (*ծառի տէրէվը, հ՛ արդի խօղը ևն*): Ենթակայի և ուղիղ խնդրի շարադասությունը ազատ է: Ուղիղ խնդիրը գործածվում է ստորոգյալին նախադաս դիրքով (*Կաղուն մուգ բրնձ, Քէռին խօղ կըքաղէ ևն*): Անձի անունների դեպքում ուղիղ խնդիրը տրականաձև հայցականով է ձևավորվում (*Արշազը գըսիրէ Անուշին* «Արշակը սիրում է Անուշին», իսկ իրի անունների դեպքում՝ ուղղականով (*Ազօիը տուն կըշինէ* «Հակոբը տուն է շինում»): Տեղի պարագայի իմաստը դրսևորվում է վերլուծական (*մէչ* կապ+սեռական հոլովաձև՝ *Ամնի մէճը ջ՛ ուր կա* «Ամանի մեջ ջուր կա», *Տաշտի մէճը հաճ չըկա* «Տաշտում հաց չկա») և համադրական (հայցական հոլովաձև՝ *Գէղը կաբրի* «Գյուղում կապրի», *Տաշտը հաճ չըկա* «Տաշտում հաց չկա») կառույցներով: *Խոսվածքը հատկանշվում է հետ, մոտ, մեջ, վրա, առջև* կապերի հետադաս կիրառությամբ (*քարին մօղ* «քարի մոտ», *ախսյօր մօղ* «եղբոր մոտ», *ճամպի վըրէն* «ճանապարհի վրա», *ջ՛ ըրի մէճ* «ջրի մեջ» ևն):

Ընդհանրացնելով կարող ենք փաստել, որ Կարնո բարբառը և Գյումրու խոսվածքը մեր դիտարկած 30 հնչյունական հատկանիշների շրջանակում ունեն 5 տարբերիչ հատկանիշներ, անվանական 26 հատկանիշներից տարբերիչ է 3-ը, իսկ բայական 40 հատկա-

¹⁷Կարնո բարբառում Հ. Մկրտչյանը նշում է միայն անորոշ հոդի հետադաս գործածություն (տե՛ս Մկրտչյան Հ., նշվ. աշխ., էջ 63):

նիշներից՝ 2-ը: Այսպիսով, Գյումրու խոսվածքը բնութագրվում է արևմտյան խմբակցության բարբառային միավորներին հատուկ զուգաբանություններով և Կարնո բարբառի հետ ունեցած ընդհանրություններով ու հիմնականում խոսվածքային տարբերություններով:

Օգտագործված գրականության ցանկ

Աճառեան Հր., , Հայ բարբառագիտութիւն, 1911:

Աճառեան Հր., , Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Ե., 1950:

Գևորգյան Լ., Շիրակի տարածքի խոսվածքների քերականական զուգաբանությունների փոխհարաբերությունները, Գիտական տեղեկագիր Շիրակի պետական համալսարանի, հ. 1, Գյումրի, 2016, էջ 19-27:

Հայերենի բարբառագիտական ատլասի նյութեր, Լենինական քաղաքի խոսվածքը, հ. 95:

Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, Ե., 1978:

Մկրտչյան Հ., Կարնո բարբառը, Ե., 1953:

Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:

РЕЗЮМЕ

Говор города Гюмри и его языковые связи

с диалектом Карина

Геворгян Гаяне

Гюмрийский говор характеризуется особенностями диалектных единиц западной группы и с общими чертами с диалектом Карно и, главным образом, с речевыми отличительными особенностями. Работа важна сохранением состояния диалектической единицы и тем, что диалектический материал спасается от необратимой утраты.

Ключевые слова: говор, языковая характеристика, морфологическая классификация, частица, фонетическая система, окончание.

SUMMARY

The Speech of the City of Gymri and Its Language Relations

with Dialect Carno

Gevorgyan Gayane

The speech of the city of Gymri is characterized by the peculiarities of dialect units of the western group with common features with the Karno dialect and, mainly, with speech

distinctive features. The work is important for the preservation of the state of the dialectic unit and the fact that the dialectic material is saved from irreversible loss.

Key words: speech, language characteristic, morphological classification, particle, phonetic system, ending.

ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՍԵՆԻ ԽՈՍՎԱԾՔԻ ՄԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶՈՒՄ¹
(ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ)

Խաչատրյան Հասմիկ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
բանասիրական գիտությունների թեկնածու
ավագ գիտաշխատող
khachhasmik@yahoo.com

DOI: 10.54412/99399305-2023-26

Բանալի բառեր. Կարնո բարբառ, խոսվածք, հնչյունափոխություն, ձայնավոր, գրաբար, շնչեղ ձայնեղ, խուլ հնչյուն:

Բարբառները լեզուների պատմական ուսումնասիրության համար չափազանց կարևոր աղբյուր են, քանի որ դրանցում պահպանվում են լեզվական այնպիսի արժեքավոր իրողություններ, որոնք գրական հայերենում չեն դրսևորվում:

Բարբառագիտության խնդիրներից այսօր շատ կարևոր է բարբառների և խոսվածքների արդի վիճակի նկարագրությունը, քանի որ հայ ժողովրդի կյանքի վայրիվերումները, տարատեսակ գաղթերն ու բռնագաղթերը, հատկապես 1915 թ. ցեղասպանությունը, նաև կենսական, կրթական միջավայրը, գրական լեզուն մեծապես ազդում են բարբառների և խոսվածքների հնչյունական, բառապաշարային, նաև քերականական առանձնահատկությունների վրա: Հարկ է նշել, որ հայ բարբառագիտության մեջ բավարար ուշադրության չեն արժանացել Շիրակի մարզի բարբառային միավորները: Ինչպես իրավացիորեն նշում է այդ տարածքի խոսվածքները ուսումնասիրողներից մեկը՝ «խնդիրն այն է, որ ներկայիս Շիրակի մարզի տարածքը ակ. Գ.Զահուկյանը չի ընդգրկել բարբառախոս վայրերի ցուցակում: Այս տարածքի խոսվածքները մեխանիկորեն դասվել են Կը ճյուղի Կարնո բարբառի մեջ, որի համար Գ.Զահուկյանը նշում է Կարինի, Լենինականի, Բաբերդի, Խնդաձորի խոսվածքները»²:

Շիրակի մարզ կատարած գիտարշավների ընթացքում մենք ևս նկատել ենք, որ, չնայած այս մարզի Գյումրու և այլ խոսվածքների բառապաշարային և հնչյունական համակարգի ընդհանրություններին և օրինաչափություններին, առկա են նաև

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6B111 ծածկագրով «Շիրակի մարզի բարբառային համապատկեր» գիտական թեմայի շրջանակներում:

² **Գևորգյան Լ.**, Ատենախոսություն, *Շիրակի տարածքի խոսվածքների փոխհարաբերությունը* (այսուհետև՝ ՇՏԽՓ), Ե., 2012, 211 էջ:

ձևաբանական տարբերություններ հատկապես սահմանական եղանակի խոնարհման համակարգում:

Շիրակի մարզի բնակչությունը համասեռ չէ: Այստեղ բացի տեղաբնակներից բնակություն են հաստատել նաև 19-րդ դարի ռուս-պարսկական, ռուս-թուրքական պատերազմների, ինչպես և 1915 թվականի Հայոց ցեղասպանության հետևանքով տեղահանված հայերը, որոնք, գաղթելով Մուշից, Ալաշկերտից, Խնուսից, Բասենից, Կարսից, Կարինից, Բուլանուխից, Խուրից, Բիթլիսից, իրենց հետ բերել են ոչ միայն բարքեր ու սովորույթներ, այլև յուրաքանչյուրն իր մայրենի բարբառը:

Շիրակի մարզի բնակավայրերում մեծ թիվ են կազմում Բասենից գաղթածները: Նրանք վերաբնակվել են Ախուրյան, Արթիկ, Անի, Ամասիա, Աշոցք համայնքների մի շարք գյուղերում³:

Որպես Կարնո բարբառի Բասենի մի խոսվածքի դրսևորում մենք քննության ենք ենթարկել Արթիկի Մեծ Մանթաշ բնակավայրի բարբառային միավորը: Խնդրո առարկա Մեծ Մանթաշ գյուղի բնակիչների գերակշռող մասը Բասենից եկածներ են: Ըստ մեր բարբառախոսների հաղորդած տեղեկությունների՝ նրանց նախնիները գաղթել են Բասենի Խորասան գյուղից: Բասենը Մեծ Հայքի Այրարատ նահանգի գավառներից է: Անունն ունի տոհմա-ցեղային ծագում. կապված է համանուն փասիաններ կամ բասիաններ ցեղանվան հետ, որի մասին հիշատակում են դեռևս Քսենոֆոնը, Փ. Բուզանդը, Եղիշեն, Ղ. Փարպեցին, Մ. Խորենացին և այլք⁴: Խորասանը Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգի Ստորին Բասեն գավառակի գյուղերից է եղել և նրա վարչական կենտրոնը: Խորասանի հայերը 1828–1830 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ռուսական նահանջող զորքի ուղեկցությամբ բռնեցին գաղթի ճանապարհը⁵: Գալով Արևելյան Հայաստան՝ նրանց մի մասը բնակություն հաստատեց Շիրակի մարզի Մեծ Մանթաշ գյուղում:

Կարնո բարբառը Կը ճյուղի ամենատարածված բարբառներից է: Կենտրոնը եղել է Կարին քաղաքը: Եվ ըստ Հ. Աճառյանի՝ բարբառը տարածվել է մինչև Խնուս, Երզնկա, Գյումուշխանե⁶: 19-րդ դարի ռուս-թուրքական պատերազմների հետևանքով հայ գաղթականության միջոցով Կարնո բարբառի սահմանները հասնում է մինչև Երևան, Թիֆլիս: Կովկասի քաղաքներից չորսը՝ Կարսը, Ալեքսանդրապոլը, Ախալքալաքը, Ախալցխան, հայ գաղթականներով լցվեց, և ամբողջ հայ բնակչությունը խոսում է նույն Կարինի

³ Այս մասին տե՛ս **Գևորգյան Լ.**, ՇՏԽՓ, էջ 11-12:

⁴ *Հայկական Սովետական հանրագիտարան*, հ. 2, Ե., 1976, էջ 301–302: *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 1, Ե., 1986, էջ 610:

⁵ *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 2, Ե., 1988, էջ 794:

⁶ **Աճառեան Հ.**, *Հայ բարբառագիտություն, Ուրուագիծ և դասաւորութիւն հայ բարբառների*, Մոսկուա–Նոր Նախիջևան, 1911, էջ 104:

բարբառով: Կարնո բարբառով էին խոսում նաև Բասենում, Նարմանում, Խոտրջուրում և Բաբերդի գյուղերում⁷:

Հայ մատենագրության մեջ Կարնո բարբառի մասին ամենահին վկայությունը 8-րդ դարից է: Ստ. Սյունեցին Հայաստանի ծայրագավառային բարբառների մասին խոսելիս հիշատակում է նաև «ՉԱպերացին», այսինքն՝ Սպերի խոսվածքն իբրև բարբառ⁸:

19-րդ դարում Կարնո բարբառի մասնակի ուսումնասիրության փորձ է կատարել ռուս լեզվաբան Ա. Տոմսոնը⁹: Այս բարբառին հակիրճ անդրադարձել են Հ. Աճառյանը¹⁰, Ա. Ղարիբյանը¹¹ և Ա. Գրիգորյանը¹²: Ավելի հանգամանալից և ամբողջական քննություն է Հ.Մկրտչյանի «Կարնո բարբառը» ուսումնասիրությունը¹³:

Շիրակի մարզի Մեծ Մանթաշ գյուղի բնակիչները, ինչպես նշել ենք, լինելով բասենցի, խոսում են նույն Կարնո բարբառով: 2023 թ. հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի շրջանակում կատարած հարցումներով այս բնակավայրի խոսվածքը գրանցել ենք նույն գյուղի բնակչուհի Նունիկ Խաչիկի Պողոսյանի (ծնվ. 1960 թ.) օգնությամբ:

Սույն հոդվածում մեր նպատակն է համաժամանակյա մեթոդով քննության ենթարկել Շիրակի մարզի Արթիկի տարածաշրջանի Մեծ Մանթաշ գյուղի խոսվածքը՝ որպես Կարնո բարբառի Բասենի մի բարբառային միավոր:

Գ. Ջահուկյանը, ըստ բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման, Կարնո բարբառն ընդգրկել է հայերենի բարբառների արևմտյան խմբակցության Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբի կազմում որպես առանձին միավոր¹⁴: Ջեկուցման մեջ անդրադարձել ենք սույն խոսվածքի հնչյունական համակարգին:

Շիրակի մարզի Մեծ Մանթաշ գյուղի խոսվածքում առկա են 42 հնչյուններ՝ իր մեջ ներառելով ժամանակակից հայերենի 36 հնչյունը, ինչպես նաև *p', q', η', d', ɶ'* շնչեղ ձայնեղները և *h'* ձայնեղը, որոնք գործառում են միայն բառակազմում:

Մեծ Մանթաշ գյուղի խոսվածքում բացակայում են քմային հնչյունները: Անդրադառնալով քմային հնչյուններին՝ Հ. Մուրադյանը նշում է, որ քմային ձայնավորների շարքը առավել հատուկ է հայերենի եզրային բարբառներին: Կենտրոնական

⁷ Աճառեան Հ., *Հայերեն գաղափարական բառարան*, Թիֆլիս, 1913, էջ 2:

⁸ Ղարիբյան Ա., *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 407:

⁹ Томсон А., *Лингвистические исследования*, том 1, СПб, 1887 г.

¹⁰ Աճառեան Հ., *Հայ բարբառագիտություն, Ուրուագիծ և դասաւորութիւն հայ բարբառների*, Մոսկուա-Նոր Նախիջևան, 1911, էջ 104-116:

¹¹ Ղարիբյան Ա., *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 407-413:

¹² Գրիգորյան Ա., *Հայ բարբառագիտության դասընթաց*, Ե., 1957, էջ 333-349:

¹³ Մկրտչյան Հ., *Կարնո բարբառը* (այսուհետև՝ ԿԲ), Ե., 1952:

¹⁴ Ջահուկյան Գ., *Հայ բարբառագիտության ներածություն* (այսուհետև՝ ՀԲՆ), Ե., 1972, էջ 132-133:

բարբառները հիմնականում չեն ճանաչում այդ հնչյունները կամ եթե ճանաչում են, ապա միայն փոխառյալ բառերում¹⁵:

Մեծ Մանթաշի խոսվածքում գործառոդ ձայնավոր հնչյունները՝ *ա, ի, է, օ, ու, ը*, իրենց որակական հատկանիշներով չեն տարբերվում հինհայերենյան ձայնավորներից: *Ա* հնչյունը համապատասխանում է գրաբարյան *ա*-ին և գործառոդ է հինհայերենյան ձայնեղներից հետո (*բահ-բ'այ, բան-բ'ան, բանջար-բ'անջար, բարակ-բ'արագ, գարուն-գ'արուն, դանակ-դ'անագ, ձագ-ձ'ակ, ջաղաց-ջ'աղած են*), նախորդում է *ւ, ն* ռնգայիններիին (*աման-աման, ապրանք-աքրանկ, ամպ-ամբ, մանել-մանել, ցամաք-ցամակ են*), գործառոդ է նաև շչականների հակառակությամբ (*ժանգ-ժանգ, խարշել-խաշել, խաչ-խաճ, բաժին-բ'աժին, ճանճ-ճանջ են*): Մեծ Մանթաշի խոսվածքում հինհայերենյան *ի* և *ու* ձայնավորները ևս փոփոխություններ չեն կրում (*թրիք-թըրիկ, կծիկ-կըձիգ, կին-կընիգ, սիրտ-սիրդ, խնամի-խընամի, տարի-տարի, ջորի-ջ'որի, բուրդ-բ'ուրտ, դուռն-դ'ուռ, ձուկն-ձ'ուկ, ջուր-ջ'ուր, ուտել-ուդել են*):

Հինհայերենյան ձայնեղներից հետո, ինչպես նաև բազմավանկ բառերի սկզբում գտնվող *ո* ձայնավոր հնչյունին համապատասխանում է *օ* ձայնավորը (*բողկ-բ'օղկ, գով-գ'օվ, գործ-գ'օրձ, դող-դ'օղ, ձոր-ձ'օր, ոչխար-օխճար, ոջիլ-օճիլ, ոսկի-օսկի, որդնել-օրտնել, որոճալ-օրօջալ են*): Այն գործածվում է նաև բառամիջի շեշտակիր (*խոտ-խօթ, չոր-չօր, պոչ-պօժ, մատնոց-մադնօժ, սոնց-սըդօժ, ժանգոտել-ժանգօդել, անկողին-գ'օղինկ են*) և նախաշեշտ դիրքում գտնվող *ո*-ի դիմաց (*գովեշ-գ'օվեշ, մոզի-մօզի, ցորեան-ցօրեն, սոնցել-սըդօժել են*): Հարկ է նշել, որ միավանկ բառերի դեպքում բառասկզբի *ո*-ի դիմաց առկա է *ո* համապատասխանությունը՝ *վօխ, վօճ, վօռժ, վօլ* (նաև՝ *վել*): *Որ* հարցական դերանունը *վօր* և *վէր* տարբերակներով է դրսևորվում, իսկ *որ* շաղկապը՝ *օր*: Օրինակ՝ *Վե՞ր* (կամ՝ *վօր*) մարտը էդ ք'անն ըսավ: Ըսավ, *օր* չի էրտա: Ի՞նձ ըսի, *օր* էդման նեղեճար:

Բազմավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ե*-ի դիմաց գործածվում է *է* ձայնավորը (*երգատ, էրգու, էպել, էրտալ են*): *է* ձայնավոր է համապատասխանում նաև բառամիջի շեշտակիր *ե*-ին (*թել-թել, խելք-խելկ, վեց-վեժ, դեղ-դ'էղ, ցեց-ցեժ, արև-հ'արել, շերեփ-շերեփ են*): *Ը*-ին նախորդող բառասկզբի *ե*-ի դիմաց առկա է *է* կամ *ի* ձայնավոր, երբեմն նաև՝ *ե* (*երեկոյ-հ'իրգուն, երինջ-երինջ, երես-հ'երես/յերես, երեկ-յերեկ, երկինք-հ'երգինկ, երեք-իրեկ, երկու-երգու, երիցկին-իրիծկին են*): Ուշագրավ է, որ Մեծ Մանթաշի, ինչպես և Շիրակի մարզի մի շարք այլ խոսվածքներում որոշ բառերում ու բառակապակցությունում դրսևորվում է *ե>յէ* համապատասխանությունը. օրինակ՝ *յէկուժ, յէսօր, յէպ, յերես, յես տարի, յէկսի օր*:

Շիրակի մարզի Մեծ Մանթաշ գյուղի խոսվածքը, ինչպես Կարնո բարբառն ընդհանրապես, ունի քառաստիճան բաղաձայնական համակարգ: Սույն խոսվածքի

¹⁵ Մուրադյան Հ., *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հ. 1, *Հնչյունաբանություն* (այսուհետև՝ ՀԼՊՔ), Ե., 1982, էջ 44:

հնչյունական կարևոր առանձնահատկություններից է շնչեղ ձայնեղների առկայությունը: Այստեղ հայերենի ձայնեղները բառասկզբում վերածվում են շնչեղ ձայնեղների: Օրինակ՝ *բ'անալ, բ'օլբիկ (բօբիկ), դ'անոնալ, գ'անզըղէլ, գ'ինի, դ'անագ, ձ'ակառ, ջ'օգ, ջ'ուր, ձ'ըկէլ* ևն:

Ըստ Ա. Հանեյանի՝ «Ձայնեղ շնչեղները, քանի որ հիմնականում գործառում են բառասկզբի ուժեղ դիրքում և հակադրվում են բաղաձայնական համակարգի մյուս անդամներին՝ շնչեղ խուլերին, ոչ շնչեղ խուլերին (կամ ձայնեղներին), այսինքն՝ ունեն իմաստատարբերակիչ գործառույթ, ուրեմն դրսևորում են հնչույթային արժեք»¹⁶:

Ա. Հանեյանը հայերենի բարբառների բաղաձայնական համակարգերում, ըստ շնչեղության բնույթի և արտաբերական յուրահատկությունների, առանձնացնում է ձայնեղ շնչեղների երեք հիմնական տարբերակներ՝ ուժգնային կոկորդային, քմակոկորդային և թույլկոկորդային: Շիրակում գործառում է առաջին տարբերակը, որը Ա. Հանեյանը բնութագրում է որպես «ստորին կոկորդային (լարինգալ), ուժգնային-ձայնային մաքուր կամ աղմկավոր արտաբերություն, որով էլ հատկանշվում է հնչյունի ինտենսիվ, ուժգնային բնույթը»¹⁷:

Ըստ Ա. Հանեյանի՝ ձայնեղ շնչեղների ուժգնային կոկորդային տարբերակն ընդգրկում է հայերենի բարբառների հիմնականում կենտրոնական, հարակից արևմտյան և մասամբ հարավարևելյան տարածքը (Մուշ, Կարին, Արարատյան դաշտ, Նոր Զուղա, Բայազետ, Շապին-Կարահիսար, Սեբաստիա)¹⁸: Հարկ է նշել, որ մեկ այլ կարևոր դիրքավորում էլ է անում գիտնականը՝ ըստ որի՝ «ձայնեղ շնչեղների ուժգնային կոկորդային տարբերակով բնորոշվող բաղաձայնական համակարգերը ընդհանուր առմամբ լինում են երկհազագավոր, այսինքն՝ խուլ շփական *հ*-ն ունի իր ձայնեղ հարաբերակիցը՝ կոկորդային ձայնորդ *հ'* (հաց, հ'առու), և միահազագ՝ միայն ձայնորդ *հ'* ունեցող, եթե խուլ *հ*-ին համապատասխանում է *խ* (*խաց, հ'ունք*)»¹⁹:

Մեծ Մանթաշ գյուղի խոսվածքի մնացած բաղաձայնները, բացառությամբ ձայնեղ շնչեղների, *հ'* հազագի և մասամբ նաև *ր*-ի, չեն տարբերվում արդի հայերենի նույն հնչյուններից:

Միջձայնավորային և բառավերջի հետձայնավորային դիրքերում գտնվող *բ, գ, դ, ձ, ջ*-ին համապատասխանում են *պ, կ, տ, ծ, ճ խուլ* հնչյունները (*դադար-դ'ատար, թագաւոր-թակավոր, խաբէլ-խապէլ, ուրագ-ուրակ, ոջիլ-օձիլ մեջ-մէձ, պագել-պակէլ* ևն): Դրանց խուլ հնչյուններ են համապատասխանում նաև ձայնորդ *ր*-ից հետո (որը, ի դեպ,

¹⁶ **Հանեյան Ա.**, *Հայ բարբառների ձայնեղ շնչեղ բաղաձայնների գործառական բնութագիրը*, Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2003, էջ 58:

¹⁷ **Հանեյան Ա.**, *Ձայնեղ շնչեղները հայերենի բարբառներում*, Հայերենի բարբառագիտական ատլաս, ուսումնասիրություններ և նյութեր, պրակ 3, Ե., 2010, էջ 182:

¹⁸ Տե՛ս նույնը, էջ 209:

¹⁹ Տե՛ս նույնը, էջ 183:

խոսվածքում երբեմն դառնում է *ռ*) և *ղ>խ*-ին հաջորդելիս (*արջ-հ'անձ, բարձ-բ'անձ, բորբոս-բ'օրպօս, որդնել-օրտընել, սրբել-սըրպել, աղբ-հ'ախպ, աղբյուր-հ'ախպուր, դաղձն-դ'ախձ, խեղդել-խէխտել* ևն):

Հ. Մկրտչյանը, սակայն, «Կարնո բարբառը» աշխատության մեջ ձայնեղ պայթա-կանների հնչյունափոխության դեպքերը քննելիս համարում է, որ դրանք վերածվում են համապատասխան խուլ հնչյունների՝ *ղ>թ, գ>ք, բ>փ, ձ>ց, ջ>չ*²⁰: Նշենք, որ նման հնչյունափոխությունը բնորոշ է միայն Ախալքալաքի տարածքի բարբառային միավորներիին (*որդնել-օրթընել, պագանել-պաքել, բորբոսել-բ'օրփրսնել, դարձնել-դ'արցընել* ևն):

Բառասկզբի *պ, կ, տ, ծ, ճ* խուլ հնչյունները մնում են անփոփոխ (*պակաս-պագաս, պղտոր-պըղղոր, պաղ-պաղ, կատար-կաղար, կարաս-կարաս, տաշել-տաշել, ծալել-ծալել, ծեփել-ծէպել*): Բառամիջի միջձայնավորային և բառավերջի հետձայնավորային դիրքերում գտնվող *պ, կ, տ, ծ, ճ* հնչյունները Մեծ Մանթաշ գյուղի խոսվածքում դառնում են ձայնեղ *բ, գ, դ, ձ, ջ* (*պպուր-աբուր, ճակատ-ճագատ, շապիկ-շաբիգ, նամակ-նամագ, կուտ-կուդ, խավիժ-խավիձ, լուծ-լուձ, կոճակ-կօջագ* ևն): Բառամիջի և բառավերջի շնչեղ խուլ հնչյունները դառնում են խուլեր (*եփել-էպել, խոփ-խօպ, խնցի-խընօծի, մութ-մուտ, փեթակ-փէտագ, աղաչել-աղաճել, թթու-թըտու, փչել-փըճել* ևն):

Լ. Գևորգյանը, անդրադառնալով Կարնո բարբառում գործառող *ր* հնչյունի արտասանական յուրահատկություններին, ուշագրավ դիտարկում է անում՝ նշելով, որ Կարնո բարբառին անդրադառնալիս բարբառագետներից ոչ մեկը չի նշում *ր*-ի արտասանական յուրահատկությունները, «այնինչ Շիրակում արտաբերվող *ր*-ն այսօր ավելի շատ ոչ թե առաջնալեզվային, այլ միջնալեզվային հնչյուն է, որին ուղեկցում է թույլ հագագային շունչը»²¹: Բարբառագիտական գիտարշավների ժամանակ մենք ևս նկատել ենք այս երևույթը Շիրակի մարզի խոսվածքներում (Վարդաքար, Նահապետավան, Հառիձ, Սարալանջ ևն): Օրինակ՝ գնում է>*կէշտա*, կարդալ>*կաշտալ*, Վարդան>*Վաշտան*, նուրբ>*նուշբ*, Բ'ի էշտամ ծիրան հավակելու: Այս հարցում կարևորում ենք նաև նշված հնչյունի ձայնաբանական ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Ը հնչյունի քմայնացմանը անդրադառնում է նաև Գ. Ջահուկյանը՝ այս երևույթը համարելով հնչյունաքերականական հնաբանության դրսևորում: «Ը-ի քմայնացումը արդյունք է թերևս մասամբ ներքին (դիրքային-փոխազդեցական), մասամբ ենթաշերտային կամ արտաքին ազդեցության: Մենք պետք է տարբերակենք նաև քմայնացման արդյունքները. հնարավոր է, օրինակ, որ Նոր-Նախիջևանի *ր>շ* փոփոխությունը ծագումով կապված չէ Համշենի բարբառի համապատասխան փոփոխության հետ, թե ո՞ր չափով է այս փոփոխությունը արտաքին (թերևս նաև իրանական) ազդեցության արդյունք, այդ կարոտ է լրացուցիչ ուսումնասիրության»²²:

²⁰ Մկրտչյան Հ., ԿԲ, էջ 25-26:

²¹ Գևորգյան Լ., ՇՏԽՓ, էջ 20:

²² Ջահուկյան Գ., ՀԲՆ, էջ 267:

Այս հարցի շուրջ ուշագրավ են նաև հնչյունաբան-գիտնական Ա. Խաչատրյանի դիտարկումները: Գիտնականը, տալով *բ* ձայնորդի արտասանական բնութագիրը, գրում է, որ «Այս հնչյունը քմանկարների վրա թողնում է որոշակի հետքեր, որոնք շատ նմանվում են *ջ*-ին կամ *ժ*-ին: Հետքերը նման են երկու լայն աղեղների, որոնք ընդհատվում են առաջին սեղանատամների մոտ... Լեզվի ծայրը *բ*-ի արտաբերման ժամանակ մոտենում է վերին ատամնաշարի լնդերքին՝ չկաշելով սակայն նրան: Օդի հոսքը, անցնելով այդ նեղ ու երկար անցքով, առաջացնում է թույլ շփման աղմուկ: Երբեմն կողքի համան հետքերը լայնանում են, իսկ նրանց միջև եղած տարածությունը՝ նեղանում, շատ նմանվելով *ջ*-ի կամ *ժ*-ի քմանկարներին: Այս փաստերը հիմք են ծառայում ասելու, որ ըստ արտաբերման եղանակի *բ*-ն ճեղքվածքային հնչյուն է, և ոչ թրթռուն, ինչպես ընդունված է մինչև հիմա»²³: Թերևս սրանով է պայմանավորված Շիրակի որոշ խոսվածքներում *բ* հնչյունի արտասանական յուրահատկությունը:

Ինչպես Շիրակի մարզի այլ խոսվածքների, այնպես էլ Մեծ Մանթաշի խոսվածքի հնչյունական կարևոր հատկանիշներից է բառասկզբում ձայնեղ *հ*՝-ի առկայությունը:

Ըստ Հ. Մուրադյանի՝ «Հայերենի ժամանակակից բարբառների մի մասում, բացի խուլ շփական *հ* բաղաձայնից, կա կոկորդային մի հնչյուն, որը ընկալվում է որպես ձայնեղ շունչ»²⁴: Այսպիսի *հ*՝ ձայնեղ հնչյուն ունեն Մշո, Բայազետի և մեր խնդրո առարկա Կարնո բարբառի խոսվածքները:

Հարկ է նշել, որ սույն խոսվածքում այն դրսևորվում է մի կողմից հին հայերենի *բ*-ի դիմաց՝ *հ իստագ, Հ՛ագօպ, Հ՛օսեպ, Հ՛օվանէս*, մյուս կողմից՝ որպես հավելական հնչյուն՝ բառասկզբի ձայնավորից առաջ: Ի դեպ, ի տարբերություն այլ բարբառների, Կարնո բարբառում *հ*՝ ձայնեղ հնչյունը ավելի լայն ընդգրկում ունի, և այնպիսի բառեր են ստանում այդ *հ*՝-ն, որ այլ բարբառներում դրանք նման գործառությամբ չեն դրսևորվում (*հ՛արուն, հ՛առճ, հ՛արելվ, հ՛առդ, հ՛աշուն, հ՛ըղունգ, հ՛օվ՛ ով*): Նշենք նաև, որ հավելական *հ*՝ ունեն ոչ միայն բնիկ, այլև փոխառյալ բառերը (արաբական, թուրքական և այլն): Օրինակ՝ *հ՛օղա, հ՛ըռաստ, հ՛ըռանգ, հ՛ըռադ* և այլն: Հ. Մուրադյանի կարծիքով՝ որոշակի հիմքեր կան պնդելու, որ ձայնեղ *հ*՝-ն պատմական գոյացություն է, որի լավագույն ապացույցներից է հավելական *հ*՝-ի առկայությունը նաև փոխառյալ բառերում²⁵:

Մեծ Մանթաշ գյուղի խոսվածքի մնացած բաղաձայնները, բացառությամբ ձայնեղ շնչեղների, *հ*՝ հագագի և մասամբ նաև *բ*-ի, չեն տարբերվում արդի հայերենի նույն հնչյուններից:

Հ և *խ* խուլ հնչյունները բառասկզբի դիրքերում փոփոխություն չեն կրում (*հաւ-հաւ, հայ-հայ, հաստ-հաստ, հիվանդ-հիվանդ, խաղ-խաղ, խեղդել-խէխտել, ծախել-ծախել, նախիր-նախիր, գլուխ-գ՛ըլօխ* ևն): Բացառություն է միայն խաղող՝ հաղօղ բառը:

²³ Առաքելյան Վ., Խաչատրյան Ա. Հ., Էլոյան Ս., *Ժամանակակից հայոց լեզու*, հ. 1, Ե., 1979, էջ 108-109:

²⁴ Մուրադյան Հ., *ՀԼՊՔ, հ. 1, Հնչյունաբանություն*, էջ 276:

²⁵ Տե՛ս նույնը, էջ 315, 276:

Կարծում ենք՝ խաղող բառում խ>հ տարնմանությունը Արարատյան բարբառի ազդեցության հետևանք է:

Հարկ է նշել, որ բաղաձայնական համակարգում միավանկ մի քանի բառերում *n*-ից առաջ (ընդ որում միայն տարեցների մոտ) նկատվում է *h>ֆ* անցումը՝ *հորթ-ֆորթ, հոտ-ֆոդ, հող-ֆոդ, հոր-ֆոր, հոտել-ֆոդել*: Բառամիջի և բառավերջի *h*-ի դիմաց (դարձյալ տարեցների խոսքում) *h*-ի դիմաց գործածվում է *j* (*մահ-մայ, պահել-պայել, սահման-սայման, ջահել-ջայել* են):

Բասենի խոսվածքներում շփականներից հետո *թ*-ի, *ք*-ի դիմաց առկա են ապաշնչեղացած *տ, կ* (*հ'աշկ, խօսկ, հախտել, ժաշկ* են): Պայթական ու կիսաշփական հնչյուններից առաջ *ր*-ի դիմաց խոսվածքում առկա է կոշտ *ռ* (*առձատ, առձիֆ, զառտուն, ցուռդ, խառդել, փռոպուռ* են):

Բառամիջի և բառավերջի *նր* հնչյունակապակցությունը որոշ բառերում դրսևորված է *նդ* հնչյունակապակցությամբ՝ *ծանդրռ, ծանդրոնալ, մանդրռ, սանդրել* են:

Օտար բառերի *ֆ* հնչյունին համապատասխանում է խուլ շփական *ֆ* (*ֆայտոն, ֆանառ, ֆիտիլ, ֆրանգ, ֆրլան* են), *դ*-ին՝ շփական *դ* (*դասար, դավուրմա, դարիբ, դոնախ* են):

Խոսվածքում առկա են բաղաձայնների անկման մի շարք դեպքեր: Հինհայերենյան *ն* վերջնահնչյունով միավանկ բառերը գործառում են առանց վերջնահնչյուն *ն*-ի (*դադձն-դ'ադժ, հարսն-հառս, ձուկն-ձ'ուգ, թոռն-թօռ, ծունկն-ծունգ, մուրն-մուտ, շուրթն-շուրտ* են): *Ինն* բառում պահպանվել է *ն* վերջնահնչյունը, սակայն հավելվել է նաև *ը* (*իննը, ինքն* (*ինքը*) բառում *ն*-ի անկումը ուղեկցվել է գաղտնավանկ *ը*-ի պահպանմամբ՝ *հ'ինկը*: Նկատելի է նաև *ր* ձայնորդի անկում որոշ բառերի բաղաձայնական կապակցություններում (*բաղարջ-բ'աղաջ, դուրս-դ'ուս, խարշել-խաշել, ջրաղաց-ջ'աղած* են):

Խոսվածքը հատկանշվում է նաև հնչյունների հավելման դեպքերով: Պայթականներից ու կիսաշփականներից առաջ որոշ բառերում առկա է *ն*-ի հավելում (*ամաչել-ամրնձել/ամճրնալ, կանաչել-կանրնձել, մեծ-մէնձ, ճանաչել-ճանճրնալ, տքոց-տրնկօծ* են):

Մեծ Մանթաշի խոսվածքում շեշտակիր է վերջին վանկը (*արածել-հարձէլ, արձակ-հ'արձա'գ, բաժանել-բ'աժնէլ, բարձրանալ-բ'անճրոնալ, հաւատալ-հավադալ, ցամաքել-ցամկէլ* են): Շեշտանախորդ վանկերի ձայնավորները ձևաբանական և բառակազմական փոփոխությունների հետևանքով սղվում են կամ փոխարկվում *ը*-ի (*ամաչկոտ-ամրշգոդ/ամճրգոդ, երկայնանալ-յերգրննալ, թեթևանալ-թէտէվնալ, ողողել-օղվել, տախտագ-տախտրգի, հիվանդ-հիվրնդի* են): Չայնավորների սղում է նկատվում նաև եռավանկ բառերում (*աղաջուր-աղջ'ուր, գողանալ-գ'օղնալ, թաթախել-թատխել, բուսանել-բ'ուսնէլ, սովորել-սօրվել* են): Բառաթեքման ժամանակ փակ վանկի շեշտազրկված *ի* ձայնավորը փոխվում է *ը*-ի (*սիրդ-սըրդի, քիտ-քըտի, միս-մըսի* են), իսկ բառավերջի բաց վանկում հերթագայությամբ դառնում է *ու*: Օրինակ՝ *գոտի-գ'օդու*,

խնամի-խընամու, հայլի-հայլու ևն: Փակ և բաց վանկերի *է* և *ու* ձայնավորները բառաբարդման, ածանցման, բառի քերականական և ձևակազմական փոփոխությունների հետևանքով շեշտազրկվելիս կարող են սղվել, փոխվել *ի*-ի, իսկ բառավերջի շեշտազրկված *ու*-ն դառնում է *վ* (*թուր-թրտի, թուպ-թըպի, թուր-թըրի, ջուր-ջ՛րի, լեզու-լիզվի, կատու-կադվի, մեղու-մեղվի, էշ-իշու, ձեթ-ձ՛իտու, տեղ-տիրու* ևն):

Այսպիսով՝ քննության ենթարկելով Շիրակի մարզի Մեծ Մանթաշ գյուղի բարբառային միավորի հնչյունական առանձնահատկությունները՝ կարող ենք ասել, որ այն, լինելով Կարնո բարբառի Բասենի մի խոսվածք, դրսևորում է սույն բարբառին բնորոշ հետևյալ առանձնահատկությունները՝ 1. Շիրակի տարածքի այլ խոսվածքների նման կարևոր յուրահատկություններից է ձայնեղ շնչեղ բաղաձայնների առկայությունը, այսինքն՝ ունեն քառաստիճան բաղաձայնական համակարգ՝ *բ՛բ, պ, փ, գ՛, գ, կ, ք* ևն: 2. Խոսվածքի հնչյունական կարևոր հատկանիշներից է բառասկզբում ձայնեղ *հ՛*-ի առկայությունը՝ *հ՛արուն, հ՛անձ, հ՛անդ* ևն: 3. Միջձայնավորային և բառավերջի հետձայնավորային դիրքերում տեղի է ունենում ձայնեղների խլացում: 4. Ոչ բառասկզբի դիրքերում շնչեղ խուլերը ապաշնչեղանում են՝ *թթու-թրտու, եփել-էպել, փչել-փրճել, կթել-կըտել* ևն: 5. *Հ*-ի դիմաց բառամիջում և բառավերջում *յ*-ի առկայություն՝ *սայման, պայել, բայ* ևն: 6. Խոսվածքում *ջ*-ի առկայություն բառասկզբի *հ*-ի դիմաց *ջող, ջորտ, ջող, ջոր* բառերում: 7. Բառամիջի միջձայնավորային և բառավերջի հետձայնավորային դիրքերում խուլերի դիմաց ձայնեղների առկայություն (*արուր, շարիզ, թատազիշ, նամազ* ևն): 8. Բասենի որոշ խոսվածքներին բնորոշ է նաև *ր*-ի քմայնացումը:

Օգտագործված գրականության ցանկ

Աճառեան Հ., Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913:

Աճառեան Հ., Հայ բարբառագիտութիւն, Ուրուագիծ և դասաւորութիւն հայ բարբառների, Մոսկուա-Նոր Նախիջևան, 1911:

Առաքելյան Վ., Ա. Հ. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Ե., 1979:

Գրիգորյան Ա., Հայ բարբառագիտության դասընթաց, Ե., 1957:

Գևորգյան Լ., ատենախոսություն, Շիրակի տարածքի խոսվածքների փոխհարաբերությունը, Ե., 2012:

Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Ե., 1953:

Հայկական Մովետական հանրագիտարան, հ. 2, Ե., 1976:

Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Ե., 1986, հ. 2, Ե., 1988:

Հանեյան Ա., Հայ բարբառների ձայնեղ շնչեղ բաղաձայնների գործառական բնութագիրը, Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2003:

Հանեյան Ա., Ձայնեղ շնչեղները հայերենի բարբառներում, Հայերենի բարբառագիտական ատլաս, ուսումնասիրություններ և նյութեր, պրակ 3, Ե., 2010:

Մկրտչյան Հ., Կարնո բարբառը, Ե., 1952:

Մուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Հնչունաբանություն, Ե., 1982:

Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:

Томсон А., Лингвистические исследования, том 1, СПб, 1887 г.

РЕЗЮМЕ

Пример речи Басена как проявление диалекта Карина в Ширакской области (фонетическая система)

Хачатрян Асмик

В данной статье исследована речь села Мец Манташ Артикского района Ширакской области — как проявление басенского говора диалекта Карина. Говор характеризуется следующими фонетическими особенностями: 1. Имеет четырехуровневую систему согласных: б', б, п, п^h, г', г, к, к^h и т.д., то есть, употребляются также звонкие придыхательные согласные. 2. Одной из важнейших фонетических особенностей говора является наличие придыхательного h в начале слова: *harun* (*арун* - *кровь*), *harç* (*арч* - *медведь*) и *hard* (*арт* - *поле*). 3. Для этого говора Бассена характерна также палатализация р (приглушенного р - р^m): каштал (картал - читать), эштал (эртал - идти). Наличие в говоре *ф* вместо *h* в начале слова в словах *foğ* (*хог* - *земля*), *fort* (*хорт* - *теленок*), *fođ* (*хот* - *запах*), *for* (*хор* - *яма*). 5. Наличие *j* (лат. йот) в середине слов и в конце слов вместо *h*: *saĵman* (*сахман* - *граница*) *paĵel* (*пахел* - *держать*), *baĵ* (*бах* - *лопата*), и др.

Ключевые слова: диалект Карина, говор, фонетическое изменение, гласная, грабар, хриплый звук, глухой звук.

SUMMARY

A Manifestation of Bassen Speech of Karin Dialect in the Region of Shirak (Phonetic system)

Khachatryan Hasmik

In this article, the speech of Mets Mantash village, Artik region of Shirak Marz, was examined as a manifestation of the Bassen speech of the Karin dialect. This speech is

characterized by the following phonetic features: 1. it has a four-level consonant system: փ', ք, պ, փ, ք', ք, փ, ք, etc., that is, voiced aspirated consonants are also in use; 2. one of the important phonetic features of the speech is the presence of the voiced consonant sound [h] in the initial position: [h'arun], [h'arch], [h'ard], etc.. 3. This speech of Bassen is also characterized by the palatalization of r: [kashtal], [eshtal]. 4. The presence of [f] in the speech in front of the initial [h] in the words [fogh], [fort], [fod], [for]. 5. The presence of [y] before [h] in the middle and final positions as in the words [sayman], [payel], [bay], etc.

Key words: dialect of Karin, speech, phonetic change, vowel, Grabar (Old Armenian), aspirated voiced, voiceless sound.

ՖՈՒԿՆՈՐԻԶՄԸ ՇԻՐԱԿԻ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՑԹՈՒՄ¹

Խեմչյան Էսթեր

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

բանասիրական գիտությունների թեկնածու

ավագ գիտաշխատող

ekhemchyan@yandex.ru

DOI: 10.54412/99399305-2023-37

Բանալի բառեր. ֆոլկլորիզմ, ավանդական բանահյուսություն, զրույց, առած-ասացվածք, անեծք, թեմատիկա, բամբասանք, անհատ ստեղծագործող, երգեր, միջավայր:

Ներածություն

Սույն հոդվածում առաջին անգամ փորձ է արվում դիտարկել ֆոլկլորիզմ երևույթը, նրա առաջացման պատճառները, կիրառման դրսևորումներն առհասարակ և հատկապես Շիրակի բանավոր խոսքի մշակույթում: Ըստ էության, ֆոլկլորիզմը ժողովրդական ստեղծագործության մաս է, ժողովրդական խոսք է, որի մեջ բանասացն օգտագործում է ավանդական բանահյուսության տարրեր, որոնք բանահյուսության տպավորություն են ստեղծում: Ֆոլկլորիզմը, որպես ժողովրդական մշակույթի դրսևորում, ուշադրության է արժանացել դեռևս 19-րդ դարում և դարձել ուսումնասիրության առարկա: Որպես գիտության ուսումնասիրության խնդիր՝ առաջին անգամ հարցն արծարծվել է ֆրանսիացի բանագետ Պոլ Սեբիյոյի կողմից (1846-1918): 19-րդ դարի երկրորդ կեսին նա շրջանառության մեջ է դրել ֆոլկլորիզմ եզրույթը, որը մինչ օրս կիրառվում է: Գրեթե հարյուրամյա ժամանակահատվածում ֆոլկլորիզացումն ուսումնասիրվել է տարբեր տեսանկյուններից և տարբեր մոտեցումներով: Երկար ժամանակ ֆոլկլորիզացման տակ հասկացվել է գրականության և բանահյուսության փոխազդեցությունները:

Կենցաղավարման որոշակի պայմաններում ստեղծված, հղկված, ձևափոխված և սերնդեսերունդ փոխանցված ավանդական բանահյուսության միջավայրը տարբերվում է այն միջավայրից, պայմաններից ու պահանջներից, որում ի հայտ է եկել ֆոլկլորիզմը: Բանահյուսությունը, որպես գեղարվեստական մշակույթի ոճավորման միջոց, կիրառվել է գեղարվեստական գրականության, երաժշտության, պարարվեստի, կինոարվեստի, մուլտիպլիկացիայի և այլ բնագավառներում՝ ժողովրդականություն հաղորդելով այդ ասպարեզներին: Ավանդական բանահյուսության կիրառման հենց այս տարատեսակն էլ

¹ Հետազոտությունը իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6B027 ծածկագրով «Շիրակի հայոց բանահյուսական մշակույթը» գիտական թեմայի շրջանակներում:

հայտնի է ֆոլկլորիզմ անվանումով: Ըստ էության, ֆոլկլորիզմն ավանդական բանահյուսության հիման վրա ձևավորված տեսակ է, որի գլխավոր գործառույթը բանահյուսական տարրերի կիրառմամբ բանավոր կամ գրավոր խոսքին ժողովրդականություն հաղորդելն է: Հետևաբար ֆոլկլորիզմը չի դիտարկվում որպես բանահյուսություն: Ավանդական բանահյուսությունը մեր օրերում համարվում է «մեռնող» մշակույթ, և կարծես ֆոլկլորիզմն իր վրա է վերցնում «կորչող» բանահյուսության փրկությունը՝ այն ներմուծելով առօրյա խոսքի կամ արվեստի նշյալ տեսակների մեջ: Հետևաբար կարող ենք նաև ասել, որ ֆոլկլորիզմը, իր վրա վերցնելով բանահյուսության դերը, ինչ-որ չափով, թեև ոչ լիարժեք, դառնում է ավանդական բանահյուսության դրսևորման ինքնատիպ ձև և դրա ժամանակակից ընկալում: Բանասացները, գիտակցաբար, կամ ինքնաբերաբար, իրենց խոսքի մեջ ներմուծելով՝ ավանդական բանահյուսության տարրեր՝ հաճախ օգտագործում են վաղուց մոռացության տրված կամ կենցաղավարումից դուրս եկած ասույթաբանական կամ վիպական բանահյուսության համառոտ պատումներ, սովորույթներ, հավատալիքներ և այլն:

Գեղարվեստական գրականության մեջ ֆոլկլորային տարրերի² օգտագործումից զատ, ըստ բանահավաքչության տվյալների, բանասացների լսարանում իրացվում են նաև հանրահայտ գրական ստեղծագործությունների վերապատումներ՝ որպես բանահյուսական միավոր: Այդ առումով հայ իրականության մեջ հատկանշական է Պերճ Պռոշյանի վեպերի վերապատումները որպես բանահյուսական ստեղծագործություններ, կամ Հովհաննես Թումանյանի արդեն ժողովրդականից մշակված հեքիաթների վերապատումները բանասացական նորամուծություններով: Այս առումով կարծես գործ ունենք հակառակ երևույթի հետ, այսինքն՝ գրականության գրավոր մշակույթի մուտքը բանահյուսության աշխարհ:

Ֆոլկլորիզմը Շիրակի ժողովրդական բանավոր խոսքում

Շիրակի բանահյուսական ժառանգության մեջ զգալի թիվ են կազմում ավանդական բանահյուսությունից շեղված, բայց բանահյուսական տարրերի կիրառմամբ ժամանակակից կյանքն ու կենցաղը հումորով ու սարկազմով ներկայացնող պատումներ և ասույթներ:

Շիրակի տարածաշրջանում բանահյուսական նյութեր հավաքող բանահավաքները (Պարույր Բարսեղյան, Հրաչ Մկրտչյան, Աշոտ Գևորգյան, Գեղամ Թարվերդյան, Ստեփան Խաչատրյան և ուրիշներ) նկատել են, որ ավանդական բանահյուսական ժանրերից զատ, ժողովրդի խոսք ու զրույցում գերակշռում են կենցաղային միջադեպերի ինքնատիպ պատումներ, առօրյա զրույցներ, մտորումներ, որոնց համ ու հոտ են հաղորդում ավանդական ասույթաբանական ժանրերը, սովորութահավատալիքային

²Փափազյան Վ., 1987, 21-160: Իսահակյան Ա., 1951, 199-250:

տարրերը, համեմատությունները և այլն: Իրենց հերթին ավանդական ասույթաբանական ժանրերը նույնպես համալրվել են ժամանակակից ասույթներովու դարձվածքներով, որոնք ունեն խիստ ընդգծված թեմատիկ ուղղվածություն, կրում են ժամանակաշրջանի կնիքը և ներկայացնում են Գյումրի քաղաքի հասարակության, հատկապես տղամարդկանց միջավայրում կենցաղավարող, հայիոյանքներով և կոպիտ արտահայտչամիջոցներով համեմված բառամթերքով «ամենօրյա խոսք ու գրույցը»:

Միրող բանահավաքների գրառած նմանօրինակ նյութերի քննությունը ցույց է տալիս, որ դրանք իրենց արտահայտման ձևերով և տպերով կարելի է բաժանել երեք խմբի:

Առաջին խումբն իր տեսակով հարում է վիպական բանահյուսության պատմողական ժանրերին: Դրանց կազմում ներգրավված են առօրյա կենցաղային երկխոսություններն ու խոսակցությունները՝ հիմնված դժգոհությունների և բամբասանքի վրա, որոնք իրենց հերթին ստորաբաժանվում են ըստ թեմատիկ հատկանիշների (գրույց-պատումներ, բամբասանքներ, հեռախոսային խոսակցություններ, մտորումներ տարբեր երևույթների և կենցաղային հոգսերի շուրջ և այլն):

Երկրորդ խմբում ամբողջացվում է քնարական բանահյուսության նմանողությամբ տեղական անհատ ստեղծագործողների կամ աշուղ հորջորջված անհատների կողմից ստեղծված երգերի ու խաղիկների շարքը, որը ներկայացնում է 20-րդ դարի 20-40-ական թվականներին ձևավորված, այսպես կոչված, «խորհրդային» ինքնահնար բանահյուսական նմուշները, ինչպես նաև տեղական միջադեպերի վրա ստեղծված երգերը:

Երրորդ խմբում ընդգրկվում է ըստ շիրակյան ձևակերպման՝ «ամեն օրվա խոսք ու գրույցներից մտքեր» լեզվական միավորները, որոնք առօրյա կյանքից արված եզրահանգումներ ու խրատաբանություններ են, որ թերևս կարելի է անվանել ասույթ:

Ժողովրդի բանավոր խոսքի մշակույթում կիրառված ավանդական բանահյուսական ստեղծագործությունների տարրերով ձևավորված, բայց բանահյուսական ավանդույթից շեղված ստեղծագործություններն անվանելով ֆոլկլորիզմ՝ հավաստում ենք ժողովրդական խոսքի դրսևորման նոր տարատեսակ, որը նույնպես ուսումնասիրության կարիք ունի:

Պատմողական ժանրերի և ֆոլկլորիզմի կապը Շիրակի բանավոր մշակույթում

Շիրակի առօրյա կենցաղային գրույց-պատումները ֆոլկլորիզմի դրսևորման ցայտուն օրինակներ են, որոնց ընդերքում պահպանվել են ավանդական բանահյուսության հետաքրքիր դրսևորումներ և իրողություններ, որոնք կենցաղավարումից դուրս են եկել և, կարելի է ասել, մոռացության են տրվել:

Բանահավաք Հրաչ Մկրտչանն իր հավաքածուում ներկայացրել է նյութերի մի շարք «Բամբասանքներ» վերտառությամբ: Մրանք հիմնականում կենցաղային մակար-

դակի առօրյա երկխոսություններ են կանանց միջև: Այս երկխոսությունների առանձնահատկությունն այն է, որ դրանք համեմված են ժողովրդական խոսակցական արտահայտություններով, դարձվածքներով, սովորութահավատալիքային ատաղձով, զվարճախոսություններով, ասույթաբանական ժանրերի լայն կիրառմամբ (առած-ասացվածք, անեծք, օրհնանք, երդում և այլն):

Բանահավաքն իր գրառած առօրյա կենցաղային զրույցները խմբավորել է ըստ թեմատիկայի՝ բամբասանք, հարևանուհիների երկխոսություններ, հեռախոսային զրույցներ, տարբեր բնակավայրերի խոսվածքային զրույցների նմուշներ, ամանորյա նախապատրաստական հոգսերի շուրջ մտորումներ, որոնք ներկայացնում են տարածաշրջանի նախատոնական պատրաստությունների ինքնատիպ դրսևորումները՝ սկսած տները, անկողինները մաքրելու-լվանալու գործընթացից մինչև նոր կահույքով եղածը համալրելու, տոնականսեղանի մթերքներիձեռքբերման, պատրաստման հոգսաշատ խնդիրների կարգավորման պատմությունը:

Բամբասանքների թեմատիկան կառուցված է հարս-սկեսուր, ընտանիքի անդամներ, հարևաններ, բարեկամներ, աշխատակիցներ փոխհարաբերությունների վրա: Այն ներկայացնում է հիմնական պատմող կողմի դժգոհությունը, միջանձնային դեպքերի վերլուծությունն ու գնահատումը սեփական անձի տեսանկյունից: Ըստ այդ մոտեցումների՝ պատմողը ներկայանում է որպես հանիրավի անտեսված տուժող կողմ:

Պատումներից մեկի հերոսուհին իր վիճակը զրուցակցին ներկայացնում է ժողովրդախոսակցական բառաֆոննդի և բանահյուսական տարբեր ժանրերի կիրառմամբ, որը զրույցին հաղորդում է ինքնատիպ պատկեր. «... Տղես մե թարաֆեն կը կտըցե, հարսըս՝ մեկել, ըսի՝ էրթամ մեծ տըղիս քովը, քիչըմ դինջանամ: Ի՞նչ ըսեմ, էնոր էլ կընկա յերեսը աշողը կը կշտանա: Կէրթամ թե չէ **չայրեն կը կախե:**

Է՛, ի՞նչ ըսեմ, քուր ջան, առակըմ կա, կըսեն. **Կատվին ըսին՝ հերըդ է՞ լավ, թե՞ մերըդ, ըսավ՝ նյավո՛ւո՛ւ... նյաու,** յանի ոչ էն, ոչ էլ էն: Հըմի իմն է, **մնացել եմ էրկու քարի արանքը:**

Յէնօրը Բետխեմը կայնե, ընձի կը մեղտըրե, կըսե՝ կնիկ, վայթե՞ դու չես կըռնա հետները **լեզու գտնի,** էնոնք ջայել են, դու բդի շայես: Կըսեմ՝ ի՞նչըդ լավ է, **հեմվից աշողին ջըրի դըմբըմբոց գուգա,** էդքան օր կը դուլայցնես,, հըլ դու արի մե օրըմ հետները յուլա գնա, նոր կըսեմ՝ **աֆֆարիմ կընիկ:** Քեզի համար ի՞նչ, **ոչ դըռ ունիս, ոչ՝ բըռ,** դու ես, քու գլուխը, աչքից էլ ես պըռծե, աչքացավից էլ, ինչըդ կըսեն՝ **ոչ է՞ծ ունիս, ոչ էլ՝ ուլ, սատանի անգաճը խուլ:** Ըսեցի, **փաթլամիշ եղավ, ուռավ, տըրաք-տըրաք էկավ,** էն օրվանից **հետս հայրե որդի չի էնե,** կանցնի, բարև էլ չի տա: Հըբը չըսե՞մ, հողըս գլխուդ, քեզի էպեճա մարդու տեղ ես դըրե»³:

³Մկրտչյան Հ., 1976, FFXIII: 0779-0780:

Այս փոքր հատվածում կենտրոնացած է ավանդական ասույթաբանության հանրահայտ երկխոսական առած-ասացվածք, դարձվածք, անեծք, գովեստի և փաղաքշական խոսք, որոնք երանգավորել և հարստացրել են բանասացի խոսքը:

Բամբասանք-դժգոհությունների հեղինակները սովորաբար կյանքի մայրամուտին հասած կանայք են, ովքեր իրենց ավելորդ են զգում, որովհետև ուժ ու կորով չունեն վաղեմի գործառույթները կատարելու համար. «Էէէ... ի՞նչ ըսեմ, վախտըմ *խունկ ու մոմ էյ ժամերուն, հրմի դառել եմ ձույթ ու ծամոն՝ շներուն*: Իսանն ի՞նչ է, փոչ... քանի ջայել էյ ու ձեռըս կաար... վեր՝ հարս արլա, վար՝ հարս արլա: Ընչի՞ չէ, գիտեյն, օր հարս արլան կեփեր, թափեր, վզար, իստըկեր, կարեր, կարկատեր, նղնղեր, տեղը տեղին դներ... հմի հարս արլան*տտե-ձեռե ընկել է, էլ ո՞ւմ է պետք*:

...Էէէ, սուս, բալամ, դարդես վագն արի, խոսքըմ կա, կըսե՛ *ծակը մեծ է, կարկըտանը՝ փոքր*»⁴:

Բամբասանք-գրույցներում պահպանվել են նաև հնագույն սովորույթների տարրեր, կենցաղային վարքի նորմեր, չգրված օրենքներ, հավատալիքներ և այլն: Հարսից բամբասող տարեց կինը, դժգոհելով հարսի՝ գրիպով հիվանդանալու և ժամանակակից բուժման փաստից, հիշատակում է գրիպի ժողովրդական ընկալումը և բուժման մեթոդը անցյալում. «... առաջ մենք էդ գրիպին օդ կըսեինք: Երկու օր կը տներ, մեկըս մեկի գլուխը կը խածեյինք, կանցներ-կերթար: Բազի օր աղջիկները գուգային իմ գըլուխը խածելու, թաթարի կըսեյ՝ ջաղչեն ջուգամ, գլուխս՝ ալրոտ, էդորից օդորս բան չկա, էլ ինչքան գուգե խածեյին, օդ չէ կըպնե»⁵:

Բանահավաք Հրաչ Մկրտչյանը պատումին կցել է հնագույն սովորույթի մասին բացատրությունը, հարբուխի ժողովրդական բուժման միջոցը և կայուն բանաձևը. «Ջաղչեն գուգամ, գլուխըս՝ ալրոտ», որը ըստ հավատալիքի՝ կանխել է հիվանդությամբ վարակվելը:

Մի պատումի սահմաններում, որ վերնագրված է «Բամբասանք հարսից»⁶ բանասացը կիրառել է մեծաքանակ ասույթաբանական ինքնատիպ նյութեր, որոնց օգնությամբ իր ասելիքը դարձրել է պատկերավոր՝ ընդգծելով հարս-սկեսուր փոխհարաբերությունները՝ կերտելով հարս-սկեսուր կերպարների դրական ու բացասական կողմերը՝ բարբառային բառամթերքի և վիպական ու ասույթաբանական բանահյուսության միջոցով:

Ստորև ներկայացնում եմ տարածաշրջանի մտածողությանը բնորոշ մի քանի ցայտուն և առանձնահատուկ օրինակ, որոնք հաստատում են ֆոլկլորիզմի գոյությունը Շիրակի բանավոր խոսքում:

⁴Մկրտչյան Հ., 1976, FFXIII: 0783-0784:

⁵Մկրտչյան Հ., 1976, FFXIII: 0785-0786:

⁶Մկրտչյան Հ., 1976, FFXIII: 0787-0732:

«... Ամոթը դրել է կամոդը, ... մարդըն օր տունը չի եղնի, ընձի տիկ-տիկ կը խաղցրնէ, բերնէ գալածը, ... էլ քյաֆթառ շուն, էլ չըխոտկա, ... կըսեմ՝ է, աղչի, պըռծա՞ր, էլ բան ունի՞ս ըսելու: Կըսե՛ հըլը էս խմորը շատ ջուր կը վերցնէ, կեցի՞, տես ի՞նչ օրի բըղի քցեմ» կամ «... թոփալ վարդապետի պես, վայթե գարի հացն էլ գլխուս պաս էնեյին», «... էլի իմ փարով կապրին, փառք ասսու, կըսե՛ է, դավեն ինչքան օր հընգնի, էլի կաշին մէ իշաբեռըմ կեղնի»: Բանասացը այս առածով ընդգծում է իր ֆինանսական կարողությունը և ընտանիքի կախյալ վիճակը իրենից:

Ընդհանրապես հարս-սկեսուր թեմայով պատում-բամբասանքներն անուղղակի կերպով ցույց են տալիս իշխանության համար պայքարը ընտանիքում: Բանասացը դիպուկ առածներով բնորոշում է թե՛ հարսին և թե՛ իրեն. «... քուրտը կըսե՛ բըքե քոզե բայլու է, յանի՛ գառը իրան ոչխըրնոցից է բայլու», «... իմ մասին ընչի՞ կմտածես, ըստեղ են ըսե՛ կոշտը նստե, քարի գլուխը գուլա,, թե յամման, անձրն գուգա, քարը կը թռչի»:

Յուրաքանչյուր գրույց-պատումի մեջ բանասացը հակառակորդ կողմի վարքագիծը ճիշտ բնորոշելու և իր խոսքն ավելի արտահայտիչ դարձնելու համար օգտագործում է նաև հարևան ժողովուրդների (քրդերեն, թուրքերեն, ռուսերեն) բանահյուսությունը և լեզվական բառամթերքը, որոնք ընդունված և կիրառելի են Շիրակի տարածաշրջանում: Օրինակ. «... մուլին ըսին՝ մուլա, դրկիցըդ փլաֆ կը էպե: Մուլեն ըսավ՝ ընձի ինչ: Ըսին՝ ձեր տուն կը տանի: Ըսավ՝ քեզի ինչ»⁷, կամ. «...ըսի՛ քուրո ջան, էս սիրտ ու հավես ունի՞մ, օրը մէ շորըմ հագնիմ, գուզվիմ, գառթըրվիմ, ջայել եմ, ինչ եմ, տիյա յոթանասունըս անցավ, թուրքը կըսե՛ յեթմիշ, գեթմիշ: Էս պատին էս ծեփն էլ է բոլ: ամեն ներկը ներկել եմ, մնացել է նարընջի՞ն: Թող ջայելները հագնին, էս ո՞ւմ բըղի զարմացընեմ, դավեն հեծել եմ, կուզեկուզ բըղի ման գա՞մ»⁸:

Առօրյա գրույցում արտահայտված յուրաքանչյուր միտք, դիպված, արարք հաստատվում է դարերով բյուրեղացած, քննություն անցած և ընդունված հակիրճ և արտահայտիչ առած-ասացվածքով: Ասույթաբանությունից գատ գրույցի բովանդակության մեջ ներմուծվում են նաև համառոտ բանահյուսական գրույց-պատումներ, առակներ, որոնց բարոյախոսական և ուսուցողական կարողությամբ բացահայտվում և ընդգծվում է բանասացի միտքը: Զուգահեռ ներկայացված այս փոքրիկ, բայց արտահայտիչ պատումները գունավորում, բանահյուսության բնույթ են հաղորդում խոսքին, և առօրյա խոսակցությունն ու բամբասանքը վերածվում է ֆոլկլորիզմի դրսևորումով պատումի, որի մեջ հաճախ պահպանվում են վաղուց մոռացված և կենցաղավարումից դուրս եկած բանահյուսական միավորներ: Օրինակ. «Չէ, օր չէ, կըսե, դուք ընձի կը բամբասիք, մտքիս մեջ կըսեմ «Բասետա պանիրն է՞», գիտես չէ՞ բասետա պանրի առակը. «Թուրքըմ տըկով պանիր կը գողնա, հեչ մարդ չի տեսնի: Էսիկ պանիրը

⁷Մկրտչյան Հ., 1976, FFXIII: 0787-0792:

⁸Մկրտչյան Հ., 1976, FFXIII: 0803-0808, գրույց հինգերորդ:

կուտե, հըմը պանիրն էլ յիրան կուտե: Յինքն յիրան շըքեն կը խըռտնի: Վով ում հետ կը խոսա, էսիկ գիտե, թե պանրի բասը կենեն, կը մոտենա, կըսե. «բասետա փենդիր դըր», յանի պանրի բասը կենեյք: այնինչ էդ խեղճերը չիտեն էլ, թե էսիկ պանիր է գողցե: Զոտոով կըսե. «Հասան, գյալ մանի թուր», յանի «Հասան, արի ընձի բըռնե»⁹:

Ըստ մեր դիտարկումների՝ առօրյա խոսք ու զրույցներն ուսուցողական, տեղեկատվական նշանակություն ունեն և հաղորդում են անցած-գնացած ժամանակների գիտելիքներն ու իմացությունը ժողովրդական բժշկության, մոռացված սովորույթների, անցյալի առօրյա կյանքի ու կենցաղի դրսևորման ձևերի, հասարակական և ընտանեկան փոխհարաբերությունների մասին:

Շիրակի՝ մեր ուշադրությանը արժանացած առօրյա զրույցներն ու երկխոսությունները կարելի է տեսակավորել և դիտարկել որպես *կենցաղային ֆոլկլորիզմ* (ֆոլկլորիզմի դասակարգված տեսակներից մեկը), որի հիմքում ժողովրդականությունն ու կենցաղային պատկերն է՝ միախառնված և ոճավորված բանահյուսական տարրերով: Իրենց տեսակով այս ստեղծագործությունները նաև կարելի է համարել *կառուցողական ֆոլկլորիզմի* նմուշներ, որովհետև ակնհայտ է բանասացների նպատակը՝ բանահյուսական տարրերի միջոցով ընդգծել տվյալ ստեղծագործության գործառույթային ուղղվածությունը:

Շիրակի քնարական բանահյուսությունը որպես քնարական ֆոլկլորիզմի սկզբնաղբյուր

Հատկանշական է Շիրակի բանահյուսական ավանդույթում 20-րդ դարի 20-40-ական թվականներին ի հայտ եկած քնարական բանահյուսության նմանողությամբ առանձին ստեղծագործող անհատների երգերը և խաղիկները, որոնք համապատասխանում էին ժամանակաշրջանի ոգուն, ունեին մշակութագաղափարախոսական գործառույթ և ընդգծում էին ժողովրդի, հասարակության և հեղինակների վերաբերմունքն ու հարազատությունը նորաստեղծ կարգերին: Հատկապես 20-30-ական թվականներին աշուղական երգերի բուռն վերելքով պայմանավորված՝ տեղական ստեղծագործողներն արձագանքում էին նորաստեղծ կարգերի, կուլտնտեսային շարժման, կուսակցական առաջնորդների գովերգման խնդիրներին: Բանահյուսության պատմության մեջ այդ փուլն անվանել են «խորհրդային ֆոլկլոր» եզրույթով: Կարապետ Մելիք-Օհանջանյանը, վերլուծելով այդ շրջանը, գրել է. «Խորհրդային ֆոլկլորը ցայտուն կերպով առաջացել, դրսևորվել է այն միջավայրում, որտեղ հին ֆոլկլորը խորը արմատներ է ձգել, որտեղ դարերի ընթացքում մշակվել ու կերտվել էին ֆոլկլորային պատկերներ, պատկերավորման եղանակներ, գեղարվեստական ձևակերպման ավանդներ, որտեղ բանահյուսու-

⁹Մկրտչյան Հ., 1976, FFXIII: 0811-0812, «Բամբասանք»:

թյունը շարունակում է մասսաների հոգևոր կուլտուրայի ամենակենդանի ստեղծագործական մասը հանդիսանալ»¹⁰:

Այս խոսքերից հետևություն ենք անում, որ, այսպես կոչված, «խորհրդային ֆոլկլորը» ձևավորվել է ավանդական բանահյուսության վրա և օգտվել է այն զինանոցից, որը հարատևում է ժողովրդական զանգվածների կյանքում և կենցաղում: Նկատի ունենալով այդ նյութերի՝ ասպարեզից արագությամբ անհետանալու փաստը՝ այսօր մենք կարող ենք ասել, որ դրանք ֆոլկլորիզմի դրսևորումներ են եղել և նստվածք չեն տվել: Ժողովրդական բանավոր խոսքի նմանօրինակ չափածո տեսակների այս շերտը չի համարվել և չի համարվում ավանդական բանահյուսության մաս, սակայն իր տեսակով հետաքրքրություն է պարունակում բանագետների համար:

Տեղական անհատ ստեղծագործողների երկացանկի երգերն իրենց բնույթով բաժանվում են հետևյալ խմբավորումների.

- ա) ժամանակաշրջանի հրամայականին ու պահանջներին արձագանքող երգեր,
- բ) կոնկրետ պատմական կամ ողբերգական դեպքերի ազդցությամբ ստեղծված երգեր, որոնք ունեն որոշակի բովանդակություն և սյուժե,
- գ) երգիծական բնույթի կատակերգեր, որոնց հերոսները կոնկրետ անձեր են և հայտնի են իրենց լոկալ միջավայրում:

Այս անհատական ստեղծագործությունները սովորաբար կատարվել են գյուղի կամ որոշակի տարածաշրջանի տարածքում, փոխանցվել են հեղինակից ուրիշ կատարողների, ձեռք են բերել կոլեկտիվ ստեղծագործության տեսք և հայտնվել են գրականության և բանահյուսության միջակայքում: Երգարվեստի և երգերի այսպիսի դրսևորումներն ըստ Վ. Բախտինի ձևակերպման՝ սահմանագիծ են գրականության և բանահյուսության, անհատական և կոլեկտիվ ստեղծագործությունների միջև¹¹:

Ռուսաստանի գյուղական միջավայրում անհատական մեկանգամյա օգտագործման համար ստեղծված գործերի քննարկմամբ՝ Բախտինը հանգել է այն եզրակացության, որ նմանօրինակ ստեղծագործությունները դուրս չեն անցել կամ էլ նոր են սկսել անցնել կոլեկտիվ հղկման ու ձևափոխման փուլը: Հետևաբար ստեղծագործության երկարատև կյանքը, կենցաղավարման լայն ընդգրկումը և համաժողովրդական հղկումն այն կարող է դարձնել գեղարվեստական ստեղծագործություն¹²:

Այս գործընթացը բնորոշ է նաև հայկական միջավայրում ստեղծված անհատական երգերին: 20-30-ական թվականների գաղափարախոսությանը տուրք տված և կուսակցական առաջնորդներին (Լենին, Ստալին և այլք) գովերգող ստեղծագործություններն իսպառ դուրս են մղվել, իսկ տեղական դեպքերի և գյուղական հասարակությանը հուզող

¹⁰ Մելիք-Օհանջանյան Վ., 1936, 18-19:

¹¹ Бахтин В., 1976, 227-235.

¹² Бахтин В., 1976, 234.

խնդիրների շուրջ ստեղծված երգերը շարունակել են գոյատևել և փոխանցվել անհատից կոլեկտիվին և ձեռք են բերել կենցաղավարման հնարավորություն:

Այժմ անդրադառնանք կոնկրետ ստեղծագործությունների ստեղծման, փոխանցման և գոյատևման խնդիրներին:

Բանահավաք Ստեփան Խաչատրյանի հավաքածուի քնարական բանահյուսության զգալի մասը կազմում է ըստ բանահավաքի ձևակերպման՝ «... անհայտ կամ քիչ հայտնի աշուղների երգերը»¹³: Կենցաղային տարբեր դեպքերի հիման վրա ստեղծված երգերի քննությունը ցույց է տալիս, որ դրանք ստեղծվել են տարբեր ժամանակներում և փոխանցվել են սերնդեսերունդ: Օրինակ՝ «Երգ խնամիներին»¹⁴ ստեղծագործության ծանոթության մեջ բանահավաքը տեղեկացնում է, որ այն հորինել է բանասաց Դուշիկի ամուսնու տատի պապ Տեր-Խաչատուր Նազարեթյանը, որը եղել է Ղազանչի գյուղի ծխատեր քահանան: Փաստորեն երգը կատարվել է մի քանի սերունդի կողմից և վերջնականորեն գրառվել է 1973 թվին: Երգերի ստեղծման ժամանակը լայն ընդգրկում ունի, այն սկսվում է 19-րդ դարի վերջից և շարունակվում մինչև 20-րդ դարի 60-ական թվականները¹⁵: Օրինակ՝ 1925 թ. մայիսին Հառիճեցի «տեղական երգիչ-աշուղ» Երվանդ Եզանյանի երգի համար շարժառիթ է ծառայել Արագածի լանջին Հառիճի ամառանոցում երկու եղբայրների և Աշնակ գյուղի երեք բնակչի սպանությունը քուրդ ղաչաղների կողմից.

Ալազյազի վրա փաթթել է փուսը,
Քոռնա Փեփելի ջուխտ լուսը,
Ջուխտ ջիվանները թողել է դուսը,
Քեզանից գանգատ եմ, անգուրթ Ալազյազ¹⁶:

Բանահավաքը գրառել է երգի ընդամենը 3 տուն, որովհետև բանասացը այն ամբողջությամբ չի հիշել:

Տեղական մեկ ուրիշ ողբերգական ելքով միջադեպ հիմք է ծառայել «Ուշապ» երգի համար.

Տիրունը քաղում էր ձորի մեջ մանդակ,
Յայլեցեն բերին Լևոնիս ջանդակ,
Մատան մոռացի,
Տիրուն քոռացի:
Ուշապը յիջավ Բաշգեղու յայլեն,

¹³Խաչատրյան Ա., 1973, FFX: 2747,01-2748,00:

¹⁴Խաչատրյան Ա., 1973, FFX: 2755,02-2756,00:

¹⁵Երգերի ստեղծման ժամանակահատվածը տարբերակվել է ըստ արխիվային նյութերի:

¹⁶Խաչատրյան Ա., 1973, FFX: 2749,01-2749,01, «Մուկուչ, Բենիամին, երեք սասունցին», բանասաց՝ Խաչատուր Սողոյան, Հառիճ:

Լևոնիս զարկեց Չարդարու մայլեն,
Մատան մոռացի,
Տիրուն քոռացի¹⁷:

Անհատ ստեղծագործողների երգերի զգալի մասը համընկնում է 1939-47 թթ. Ժաամանակահատվածին և անմիջականորեն արտացոլում է թե՛ Ֆիննական և թե՛ Հայրենական պատերազմների մարտական դրվագները և տեղացի մասնակիցների սխրագործությունները: Այդ երգերը հեղինակները երգել են հանրահայտ երգերի, ինչպես օրինակ՝ «Քյոռ Օղլու», «Մարաքյա-դիվանի», «Հիրժանի», ժողովրդական պարերգերի եղանակներով:

Գյուղական կենցաղը, սովորույթները, գյուղացիներին հուզող տարաբնույթ առօրյա միջադեպերը, ինչպես նաև արտագնա աշխատանքը և նրա հետևանքով առաջացած խնդիրներն իրենց բոլոր դրական և բացասական կողմերով դառնում են անհատ ստեղծագործողների երգերի հիմնական թեման: Հատկապես խոպան մեկնողների և նրանց արկածների շուրջ ստեղծվել են խոպաներգության բազմաթիվ երգեր, որոնց համատեքստում կիրառվել են ժողովրդական երգերի տարրեր՝ ձեռք բերելով ժողովրդականի երանգավորում, օրինակ.

Ամեն տարի խոպան կերթաս,
Հոփ, մերիկըդ մեռնի,
Լիքը կերթաս, դարդակ կուգաս,
Գյարդանըդ խուրդ եղնի:

Ուրիշները «Վոլգա» բերին,
Հոփ, մերիկդ մեռնի,
«Վոլգայի» տեղ Օլգա բերիր,
Գյարդանըդ խուրդ եղնի¹⁸:

Այս երգի լեյտմոտիվն արտագնա աշխատանքն է ու նրա բացասական հետևանքը, որին կրկնակ են ծառայել ժողովրդական անեծքները, պարերգային «հոթ» ձայնարկության հավելումով: անեծքը ժողովրդական պարերգերում որպես բաղադրամաս լայն կիրառություն ունի: Օրինակ.

Արագի ջրեն անցնիս,
Հոփ, յար ջան, էլակըդ,

¹⁷Խաչատրյան Ս., 1973, FFX: 2753,01-2753,01, , «Ուշապ», Բանասաց՝ Լիզա Գևորգյան, Սարալանջ: Այս երգը նաև տարբերակ ունի:

¹⁸Խաչատրյան Ս., 1973, FFX: 2883,01-2884,00, Կատակերգ, Բանասաց՝ Ժորա Խաչատրյան, Լենինական:

Տղա, մուրազիդ չհասնիս,
Հոփ, յար ջան, բիլակըդ¹⁹:

կամ՝

Գութանը հաց եմ տարե,

Հոփ գյուլա,

Բերանը բաց եմ տարե,

Ջան գյուլա²⁰:

Պարերգային կիրառությունից բացի, խոպանի թեմայով ստեղծվել են երգեր կատակերգական և աշուղական երգերի նմանողությամբ, օրինակ.

Գլխիս խոպան էրթող դառար,

Ինչքան ասի՝ հաշվի չառար,

, որսների համար վառար,

Չգաս այլևրս, ինչու՞ ես պետք²¹:

Ըստ դիտարկումների՝ անհատ ստեղծագործողների երգերի տեքստերն ավանդական բանահյուսական տարրերի օգտագործմամբ են ստեղծվել, ինչ վերաբերում է մեղեդիներին,, ապա հեղինակները կիրառել են հանրահայտ և ծանոթ մեղեդիներ՝ ի դեմս աշուղական և ժողովրդական պարերգերի մեղեդիների: Գրառված բազմաբանակ նյութերը ցույց են տալիս, որ Շիրակում առանձնահատուկ վերաբերմունք է եղել չափածո խոսքի նկատմամբ և գյուղաշխարհում քիչ, թե շատ չափածոյի և երգի նկատմամբ հակում ունեցող անհատներն առիթը բաց չեն թողել յուրովի ստեղծագործելու: Այդ երգերում ֆոլկլորիզմի դրսևորումները ժողովրդականություն են հաղորդել դրանց և ապահովել տարածման, շրջանառման և փոխանցման գործընթացին:

Ֆոլկլորիզմը Շիրակի նորաոճ ասույթներում

Ավանդական ասույթաբանությանը զուգահեռ՝ Շիրակի տարածաշրջանում ակտիվորեն կենցաղավարել է առօրյա երևույթների, կենցաղային միջադեպերի, մարդկային փոխհարաբերությունների շուրջ առտնի խոսքուզրույցի մեջ կիրառվող ասույթներ, դարձվածներ, մականուններ և լեզվական այլ դրսևորումներ, որոնք առանձնացրել ենք որպես ժամանակակից ասույթաբանություն: Անդրադառնալով Շիրակի նորաոճ ասույթաբանությանը՝ պետք է նկատել, որ բանասացներն իրենց խոսքը ոճավորել են ավանդական ասույթաբանության նմանությամբ: Նրանց խոսքը

¹⁹Խաչատրյան Ս., 1973, FFX: 2803,02-2808,02, բանասաց՝ Դուշիկ Պետրոսյան, Մեղրաշեն:

²⁰Խաչատրյան Ս., 1973, FFX: 2831,02-2831,02, բանասաց՝ Հայաստան Վարդանյան:

²¹Խաչատրյան Ս., 1973, FFX: 2879,01-2880,00, «Խոպան գնացողի կնկա խաղը», բանասաց՝ Զարիկ Մկրտչյան, Լեռնակերտ:

մշակված և հարմարեցված է գյումրեցու պահանջներին: այս ինքնահնար հեղինակային ասույթները ֆոլկլորիզմի դրսևորումներ են Շիրակի բանավոր խոսքի մեջ:

ՀԱԻ բանահյուսության արխիվում պահվող շիրակյան նյութերի մեջ զգալի քանակ են կազմում բանահավաք Աշոտ Գևորգյանի գրառած ժամանակակից ասույթները, որոնք տարբեր առիթներով օգտագործել են գյումրեցի տղամարդիկ և կանայք: Այդ ասույթները ժամանակակից կյանքի, կենցաղի, մարդկային հարաբերությունների, մարդ-անհատի բարոյական չափանիշների դիտարկման և դրանց շուրջ մտորումների արդյունքում արված եզրահանգումներն ու խրատաբանություններն են: Ժամանակակից կյանք ասելով՝ նկատի ունենք 20-րդ դարի 60-70-ական թվականների շիրակցու առօրյա կյանքից բխած ասույթաբանական իրողությունները, որոնք իրենց տեսակով ֆոլկլորիզմներ են և դեռևս չեն անցել հղկման և բյուրեղացման ճանապարհը: Բանահավաքը, գնահատելով ավանդական բանահյուսության դերը նորաստեղծ ասույթների ձևավորման մեջ՝ իր հավաքածուի վրա գրել է. «Այնպես պետք է ստեղծել նորը, որ չմոռացվի հինը...»²²:

Աշոտ Գևորգյանի հավաքածուի նորաբանություններն ունեն թեմատիկ ուղղվածություն՝ կանանց, տղամարդկանց, պետական պաշտոնյաների, սոցիալական հարցերի, շինարարության և գյումրեցիներին առնչվող բազմաթիվ այլ խնդիրների սրամիտ, երբեմն նաև բամբասակ ձևակերպումներով: Պետք է նկատել, որ գյումրեցիների եզրահանգումներն իրենց մեջ պարունակում են տվյալ ժամանակաշրջանին բնորոշ շատ խոցելի իրողություններ, հետաքրքիր սովորույթներ, որոնք անմիջականորեն արտահայտում են խորհրդային երկրի ոչ այնքան հաճելի կողմերը: Օրինակ՝ բանասաց Վաչագան Խուրշուդյանի թևավոր խոսքը. «Հիվանդանոց, բամբասանոց, անտերանոց, մեռելնոց»²³, բնութագրում է այդ ժամանակաշրջանի բուժհիմնարկների և նրանց հոգածությանը հանձնված հիվանդների անմխիթար վիճակը և ողբերգական ելքը:

Ասույթների մի մասը բնորոշում է հասարակության այն հատվածը, որի հիմնական գործառույթներն են քծնանքը, զագրախոսությունը, կաշառակերությունն ու կաշառատվությունը, ազահությունը և այլն: Նմանօրինակ ասույթները բաղկացած են երկու մասից. առաջինը կատարված գործողությունն է, երկրորդը՝ կատարողին բնորոշող, մականվան արժեք ունեցող ձևակերպումը: Օրինակ. «Էլի դիրեկտորիդ ոռին գըրելկա կը բոնես, նաչալնիկների կըռձոն»²⁴, կամ. «Էս գյուզալըմ փիլաքաններով էլի կաբինետները կը վազես, էշերի խուրջին»²⁵: Որոշ դեպքերում փոխաստեղծում է կատարվում. մականունը դառնում է առաջին բաղադրիչ, գործողությունը՝ երկրորդ

²² Գևորգյան Ա., 1974, FFXII: 1121:

²³ Գևորգյան Ա., 1974, FFXII: 1153, № 121:

²⁴ Գևորգյան Ա., 1974, FFXII: 1131, № 34, բանասաց՝ Հակոբ Ծառուկյան:

²⁵ Գևորգյան Ա., 1974, FFXII: 1137, № 60, բանասաց՝ Արթուր Կարամյան:

բաղադրիչ, օրինակ. «Չորցած կապիկ, չորցար, պակսար, էլի կըլլաուզա գըրելուց ձեռ չե՞ս քաշե...»²⁶:

Ասույթների զգալի մասը ձևավորվել է ավանդական առած-ասացվածքներից փոխառնված մտքերի ու բառաֆոնդի վրա, օրինակ. «Սար ու ձոր, գործակատարների փոր»²⁷, որը հանրահայտ «Սար ու ձոր, տերտերի փոր»²⁸ առածի ձևափոխված տարբերակն է: Կամ. «Մըխի ծակած ձեռքը կը լավնա, փարի ծակածը չի լավնա...»²⁹ նորաստեղծ ասույթի համար օրինակ է ծառայել «Թրի կտրածը կը լավանա, լեզվի կտրածը չի լավանա»³⁰ առածը:

Վերոհիշյալ ասույթաբանական ձևակերպումներն ուղեկցվում են հայեցողականությամբ, կոպիտ և գռեհիկ արտահայտչամիջոցներով, թույլատրելիի և ընդունված չափանիշների սահմանները խախտող բառամթերքով, որոնք ծառայել են արհեստավորական միջավայրին կամ տղամարդկանց փոքրաթիվ խմբերին: Բանահավաք Աշոտ Գևորգյանն իր գրառած ասույթաբանական նյութերից մեկի մոտ հաստուկ նշում է կատարել. «Ամմեն օրվա խոսք ու գրույցներից ու մտքերից»³¹, որով ընդգծել է գյումրեցիների կենցաղում և մարդկանց որոշակի խմբավորումների միջավայրում տիրապետող և կիրառվող բառամթերքի առկայությունը: Գևորգյանի հավաքածուում նյութերը ներկայացված են հերթական համարակալմամբ, յուրաքանչյուրի դիմաց նշված է բանասացի անուն ազգանունը, տարիքը, գրառման տարեթիվը և գրառման վայրը:

Օրինակ՝ «Հովսեփյան Անդրանիկ, 57 տարեկան, 1969 թ., Լենինական. «Ամմեն ինչ էնպես է խառնըվե իրար, որ շունը տիրոջը չի ճանաչե»³²:

Հավաքածուում մեծ տեղ են զբաղեցնում 50-70-ական թվականների Գյումրիում և ընդհանրապես Շիրակի տարածաշրջանում ոչ միայն մարդկային հարաբերությունների խոտելի կողմերը, այլև պետական պաշտոնյաների վարքագծի դրսևորումները և հասարակության բացասական վերաբերմունքը դրանց նկատմամբ: Օրինակ. «Եթե մարդը երկար է ուզում դիմանալ պաշտոնի, անտեղի չպետք է հանի փոշի»³³, կամ՝ «Պաշտոնի նստող մարդիկ իրավունք չունեն սկզբունք ունենալու»³⁴:

Պետական պաշտոնյաները չարաշահում են իրենց իրավունքները, յուրացնում են պետական միջոցները և մնում անպատիժ, օրինակ. «Խեղճ մարդը իրեք կապեկանոցը

²⁶ Գևորգյան Ա., 1974, FFXII: 1139, № 65, բանասաց՝ Աբրահամ Մալխասյան:

²⁷ Գևորգյան Ա., 1971-1973, FFIII: 4964,05-4964,05, № 135, բանասաց՝ Կարո Բակալյան:

²⁸ Ղանալանյան Ա., 1960, 303:

²⁹ Գևորգյան Ա., 1971-1973, FFIII: 4950,01-4950,01, № 69, բանասաց՝ Ռաֆիկ Կուրդինյան:

³⁰ Ղանալանյան Ա., 1960, 239:

³¹ Գևորգյան Ա., 1974, FFXII: 0940:

³² Գևորգյան Ա., 1974, FFXII: 0940-0941:

³³ Գևորգյան Ա., 1974, FFXII: 0995, բանասաց՝ Վահան Օհանջանյան:

³⁴ Գևորգյան Ա., 1974, FFXII: 0995, բանասաց՝ Աշոտ Լազարյան:

կրրնա կուլ տա ու բկին կայնի, հարուստ ու հաբրոկած մարդը կրրնա հազարներ կուլ տա ու հեչ մե բանըմ էլ չեղնի»³⁵:

Գյումրեցիների թևավոր խոսքերը, սրամտությունները, ձեռառնոցներն ու ասույթաբանական հյութեղ արտահայտությունները ընդգրկում են կյանքի բոլոր բնագավառները, ինչպես օրինակ՝ քաղաքաշինության հարցերը և նորակառույց շենքերի անհարմարությունները. «Մեր թաժա շենքերի միջանցքները կը նեղընեն ինուր հըմար, որ մարդիկս կուլտուրա ձեռք բերենք ու օչերեդ կայնել սովրինք»³⁶, կամ չճարվող մթերքների անիմաստ փնտրտուքը փոխարինել մթերքի անվանումը բառարաններում փնտրելով. «Շատ ժամանակ կարագ ճարելու համար պետք չէ խանութները անտեղի չլվել, հարկավոր է բառարանների մեջ փնտրել»³⁷:

Այս երկու վերջին ասույթները բացահայտում են խորհրդային քաղաքացու ինչ-որ բանի համար ժամերով հերթ կանգնելու սովորությունը և խանութներում չճարվող մթերքների, հագուստների, կահույքի և այլ կենցաղային անհրաժեշտ իրերի համար սրտամաշ փնտրտուքները:

Խորհրդային տարիներին ձևավորված սովորությունների չափից դուրս ընդգծված և գերազանցված կիրառությունները նույնպես իրենց արձագանքն են գտել տեղական ժամանակակից ասույթաբանության մեջ, ինչպես օրինակ. «Մեր քաղքի կընկըտանց որ մընա, նոր տարվակապակցությամբ երկինքն էլ կը լվանան»³⁸, կամ՝ «Ծո, վով որ ակնոց կը դնե, թաթարի դիսերտացիա պաշտպանելու մասին կմտածե»³⁹:

Շիրակի ժամանակակից ասույթներում վեր է հանվում գյումրեցիներին բնորոշ առանձնահատկությունները, օրինակ. «Մարդը հախ գյումրեցի է՝ նամուսի համար մեռած է»⁴⁰, կամ «Գյումրեցին գյումրեցուն չի խածե, փոստը էնպես կը գրգե, որ էլ չըկարկըտվի»⁴¹, կամ՝ «Գյումրեցիք քուֆուրը ծաղկի պես ուլիցները կը ցանեն»⁴²:

Քննությունը ցույց է տալիս, որ Շիրակի տարածաշրջանում 20-րդ դարի 60-70-ական թվականներին բանավոր խոսքում մեծ տարածում է ունեցել և ակտիվորեն կենցաղավարել է նորաճ ասույթաբանությունը, որը լայն ընդգրկում է ունեցել և եղել են մեծաքանակ բանասացներ, ովքեր ըստ պատեհության և անհրաժեշտության հանպատրաստից ստեղծագործել են: Ստեղծագործական գործընթացի մասնակիցները, հիմնականում զրուցակիցները, իրենց մտքերն արտահայտելիս օգտագործել են ավանդական վիպական և ասույթաբանական բանահյուսության հարուստ զինանոցը:

³⁵ Գևորգյան Ա., 1974, FFXII: 0993, բանասաց՝ Յուրա Ոսկանյան:

³⁶ Գևորգյան Ա., 1974, FFXII: 0995, № 321, բանասաց՝ Վանիկ Կուլոյլյան:

³⁷ Գևորգյան Ա., 1974, FFXII: 0993, № 313, բանասաց՝ բանասաց՝ Աշոտ Գևորգյան:

³⁸ Գևորգյան Ա., 1974, FFXII: 1159, № 149, բանասաց՝ Հոփիսիկ Սահինյան:

³⁹ Գևորգյան Ա., 1974, FFXII: 1221, № 389, բանասաց՝ Մուկուչ Ղավազյան:

⁴⁰ Բարսեղյան Պ., 1969, FFVI: 6279, 14-6279, 14:

⁴¹ Գևորգյան Ա., 1974, FFXII: 1199, № 304, բանասաց՝ Հայկ Գառգուլոյան:

⁴² Գևորգյան Ա., 1974, FFXII: 1261, № 539, բանասաց՝ Մուկուչ Գևորգյան:

Մի կողմ թողնելով նորաճ ասույթաբանական նյութերի կոպիտ ու հայիոյախառն բառամթերքը, պետք է նկատել, որ դրանց մեջ կան հաջողված ձևակերպումներ, որոնք ժամանակի ընթացքում բյուրեղանալով՝ կարող են համալրել ավանդական բանահյուսական ժանրերի շարքը:

Եզրակացություն

Շիրակի մարզից հավաքված բանահյուսական նյութերի ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ սիրող բանահավաքները ի թիվս ավանդական բանահյուսական նյութերի, գրառել են նաև բանավոր խոսքի նորաճ դրսևորումներ, որոնք բանահյուսություն չեն, սակայն համատեքստում կիրառված բանահյուսական տարրերով հիշեցնում են ավանդական բանահյուսության տեսակները: Այս կարգի նյութերը դիտարկելով որպես ֆոլկլորիզմի դրսևորումներով ժողովրդական խոսքի տարատեսակներ՝ ստորաբաժանել ենք ըստ ավանդական բանահյուսական տեսակներից քաղված տարրերի և ուսումնասիրել ենք ըստ տեսակների:

Դիտարկումները ցույց են տվել, որ բանահյուսության պատմողական ժանրերին հարող առօրյա զրույցները մեծ մասամբ հանդես են գալիս երկխոսությունների ձևով, պատումները կառուցված են կենցաղային միջադեպերի, ընտանեկան, բարեկամական կամ հարևանական փոխհարաբերությունների վրա, որոնց ժողովրդական գունավորում և բանահյուսության պատրանք են հաղորդում օգտագործված բանահյուսական տարրերը:

Երկրորդ՝ քնարական բանահյուսությանը հարող անհատ ստեղծագործողների երգերն իրենց տարատեսակներով նմանապես պահպանել են աշուղական, պարերգային, ծաղրերգային ավանդական երգստեղծման ձևերն ու տարրերը, իսկ կատարման համար օգտագործվել են ծանոթ և հանրահայտ մեղեդիներ: Ինքնահնար երգերի այն հատվածը, որով տուրք է տրվել խորհրդային երկրի առաջնորդներին և սոցիալիստական առօրյային, շրջանառությունից դուրս է մղվել: Կենցաղային բնույթի կատակերգերն ու ծաղրերգերն ավելի կենսունակ են և շարունակում են պահպանվել և կիրառվել:

Բանավոր խոսքի նորաճ ասույթաբանական դրսևորումներն ավելի կենսունակ ու կիրառելի են և ունեն վերաստեղծվելու և վերարտադրվելու կարողություն:

Շիրակի բանավոր խոսքի նորաճ դրսևորումների քննությունը ցույց է տալիս, որ գործ ունենք ֆոլկլորիզացման ինքնատիպ գործընթացի հետ, որի ընթացքում ավանդական բանահյուսական տարրերը, ներթափանցելով առօրյա խոսք, ու զրույցի մեջ, ստեղծում են բանահյուսության տպավորություն: Նմանօրինակ նյութերն իրենց բնույթով կենցաղային և կառուցողական ֆոլկլորիզմի դրսևորումներ են, որոնց հիմքում ժողովրդականությունն ու կենցաղային պատկերները միախառնված ու ոճավորված են

բանահյուսական տարրերով, որոնց միջոցով ընդգծվում է տվյալ ստեղծագործության գործառության ուղղվածությունը:

Օգտագործված գրականության ցանկ

Բարսեղյան Պ., Ժողովրդական բանահյուսություն (մանր ժանր), ձեռագիր հավաքածու, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (ՀԱԻԱԲ) FFVI: 6272-6371, 1969:

Գևորգյան Ա., Շիրակի առածանի, ձեռագիր հավաքածու, ՀԱԻԱԲ FFXIII: 4926-5125, Լենինական, 1971-1973:

Գևորգյան Ա., Շիրակի առածանի, սրամտություններ, Շիրակի առածներ, կարճամետրաժ սրամտություններ, փիլիսոփայական աֆորիզմներ և..., ձեռագիր հավաքածու, ՀԱԻԱԲ FFXII: 0917-1304, Լենինական, 1974:

Խաչատրյան Ս., Արթիկի շրջանի ժողովրդական բանահյուսություն, ձեռագիր հավաքածու, Ժողովրդական երգեր, ՀԱԻԱԲ FFX: 2741-2940, Արթիկ, 1973:

Մկրտչյան Հ., Շիրակի առակներ, զրույցներ, բամբասանքներ... մեքենագիր հավաքածու, ՀԱԻԱԲ FFXIII: 0649-0898, Լենինական, 1976:

Իսահակյան Ա., Լեգենդներ և զրույցներ // Երկերի ժողովածու, հատոր III, Երևան, Պետհրատ, 1951, էջ 199-250:

Ղանալանյան Ա., Առածանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960:

Մելիք-Օհանջանյան Կ., Լենինը ֆոլկլորի մեջ, ներածություն, Երևան, Պետհրատ, 1936:

Փափազյան Վ., Զրույցներ // Երկեր, Հայ դասականների գրադարան, Երևան, «Սովետական գրող», 1987, էջ 21-160:

Бахтин В.С. 1976, Один из неучтенных песенных жанров (к вопросу об индивидуальном творчестве в фольклоре) // Русский фольклор, вып. XVI, Ленинград, «Наука», 1976, с. 227-235.

РЕЗЮМЕ

Фольклоризмы в культуре устной речи Ширака

Хемчян Эстер

В статье в первый раз сделана попытка исследовать феномен фольклоризма, причины его происхождения, проявления в общей и особенно в устной речи Ширака. Исследования показывали, что в архивных коллекциях традиционных фольклорных материалов присутствуют проявления устной речи в современном стиле, которые не являются фольклором, однако использованные в контексте фольклорные элементы

напоминают традиционные фольклорные виды. Исследование этих материалов показывает, что мы имеем дело со своеобразным процессом фольклоризации. По сущности фольклоризм это вид, сформированный на основе традиционного фольклора, главная функция которого популяризировать устную или письменную речь, с применением фольклорных элементов.

Ключевые слова: фольклоризм, традиционный фольклор, сказ, пословица-поговорка, проклятие, тематика, сплетня, индивидуальный создатель, песни, среда.

SUMMARY

Folklorisms in Shirak's oral speech culture

Khemchyan Ester

The article makes an attempt to explore the phenomenon of folklorism, the reasons for its origin, its manifestation in general and especially in Shirak's oral speech for the first time. Research has shown that in archival collections of traditional folklore materials there are manifestations of oral speech in a modern style that are not folklore, but folklore elements used in context resembling traditional folklore types. The study of these materials shows that we are dealing with a peculiar process of folklorization. In essence, folklorism is a type formed on the basis of traditional folklore, the main function of which is to popularize oral or written speech, using folklore elements.

Key words: folklorism, traditional folklore, tale, proverb, curse, theme, gossip, individual creator, songs, environment.

**ԲԱՆԱՀԱՎԱՔ ՊԱՐՈՒՅՐ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՇԻՐԱԿՅԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ
ՀԱՎԱՔԱԾՈՒՆ¹**

Խեմչյան Սարինե

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
բանասիրական գիտությունների թեկնածու
ավագ գիտաշխատող
mkhemchyan@yandex.ru

DOI: 10.54412/99399305-2023-54

Բանալի բառեր. Շիրակի տարածաշրջան, Պարույր Բարսեղյան, վիպական բանահյուսություն, քնարական բանահյուսություն, ասույթաբանություն, մականուններ, զվարճախոսություն

Ներածություն

Շիրակի բանահյուսական ժառանգության ստվար մասն է կազմում սիրող-բանահավաք ալեքսանդրապոլցի Պարույր Ստեփանի Բարսեղյանի ձեռագիր հավաքածուն, որը նա 20-րդ դարի 60-ական թվականներին հանձել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվին (ՀԱԻԱԲ). ձեռագրերը պահպանվում են արխիվի խառը ֆոնդի FFIV: 2045-3572, FFVI: 6076-6911 և FFVIII: 4479-4804 թվահամարների տակ: Պարույր Բարսեղյանը տարբեր տարիքի, սեռի և կրթության շիրակցի բանասացներից գրառել է բազմաժանր բանահյուսական նյութ՝ հեքիաթներ (հրաշապատում, իրապատում, կենդանական), իրապատում զրույցներ, զվարճախոսություններ, երգեր, հանելուկներ, շուտասելուկներ, ասույթաբանություն (առած-ասացվածքներ, դարձվածքներ, երդումներ, անեծքներ, օրհնանքներ, փաղաքշական խոսքեր և այլն): Պարույր Բարսեղյանի հավաքածուում արժանահիշատակ է «Գյումրեցոց մականունները» շարքը (ավելի քան 1300 հատ), որը համալրվել է մի քանի անգամ և ընդգրկում է 20-րդ դարասկզբից մինչև 60-ական թվականները Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրի քաղաքի՝ իրենց մականուններով հանրահայտ բնակիչներին, ինչպես նաև մականունների առաջացման հանգամանքները:

Ընդհանուր առմամբ՝ Պարույր Բարսեղյանի գրառած շիրակյան բանահյուսական նյութը կազմում է շուրջ 5000 միավոր:

¹ Հետազոտությունը իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6B027 ծածկագրով «Շիրակի հայոց բանահյուսական մշակույթը» գիտական թեմայի շրջանակներում:

Պարույր Բարսեղյանի բանահյուսական հավաքածուի ընդհանուր բնութագիրը

Պարույր Բարսեղյանը այն բացառիկ սիրող բանահավաքներից է, ում հավաքածուի երկացանկում առկա են բանահյուսական բոլոր սեռերի (վիպական, քնարական, ասույթաբանական)² գրեթե բոլոր ժանրերը՝ բացառությամբ էպոսի և սիրավեպի: Ալեքսանդրապոլում ծնված և մեծացած Պարույր Բարսեղյանն իր աշխատանքային գործունեությունն ավարտելուց հետո որոշել է անշահախնդիր իր կյանքը նվիրել հայրենի Շիրակի բանահյուսական նյութերի գրառմանը, ինչպես ինքն է ասում. «... իմ շատ չնչին լուման մտցնելու հայկական ֆոլկլորի մեջ»³:

Սկզբում նրա ցանկությունն է եղել բանահյուսական նյութերը գրառել միայն բնիկ շիրակցիներից՝ Շիրակի բարբառով, սակայն գտել է, որ այդ պարագայում կկորչեին այլ տարածաշրջանների(Կարս, Ախալքալակ, Վան և այլն) նույնպես արժեքավոր նյութեր: Նա իր գրառած յուրաքանչյուր նյութի համար տվել է ծանոթագրություն գրառման վայրի, գրառման ժամանակի, բանասացի, նյութի ծագման մասին և այլ տեղեկություններ:

Պարույր Բարսեղյանն իր մասին շատ ժլատ տեղեկություններ է տվել (նույնիսկ նրա լուսանկարը չունենք), նա գրում է. «Ես նյութերը հավաքել եմ Լենինականում, Երևանում, որտեղ ապրում են շատ լենինականցիներ, նաև Կիրովականում, Աշտարակում և այլուր: Շատ տներ եմ ներս մտել (ավելի ուղիղ՝ «ներս խուժել»), հավաքել և գրի եմ առել այգիներում, սանատորիաներում, հանգստյան տներում, հյուրանոցներում՝ իմ ընկերներից, ծանոթներից, հյուրերից և այլն: Ոչ բոլորն են դրական վերաբերվել ինձ՝ որպես բանահավաքի...»⁴:

Պարույր Բարսեղյանը բանահյուսական նյութերը Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվին է հանձնել երեք փուլով.

Առաջին փուլ. 1961-1967 թթ. (FFIV: 2045-3572)

Երկրորդ փուլ. 1969 թ. (FFVI: 6076-6911)

Երրորդ փուլ. 1972 թ. (FFVIII: 4479-4804)

Ինքնատիպ է Պարույր Բարսեղյանի՝ բանահյուսական ժանրերի սեփական բաժանումը՝ Գյումրեցոց մականունները, խոշոր բանահյուսություն, մանր ժանրի բանահյուսություն, եղելություններ, անեկդոտներ, չափածո, անպատկառ բնույթի բանահյուսություն: Նրա կողմից կատարվել է նաև որոշ ժանրերի ներքին բաժանում: Ոշադրության արժանի է նաև «Մականուններ» բաժնին հաջորդող Բառարանը, որի բառերի մեծ մասի բացատրությունը լրացնում է այդ բաժնի չմեկնաբանված միավորները:

² Բանահյուսական սեռերի և տեսակների փոխառնչությունների մասին տե՛ս **Հարությունյան Ս.**, 2010, 102-109:

³ **Բարսեղյան Պ.**, 1972, FFVIII: 4798:

⁴ **Բարսեղյան Պ.**, 1972, FFVIII: 4797:

Պարույր Բարսեղյանի ձեռագիր հավաքածուի ողջ ժանրային, քանակական պատկերն արտացոլված է Աղյուսակ 1-ում:

1. Վիպական բանահյուսություն

Վիպական բանահյուսությունը Պարույր Բարսեղյանը տարբերակել է որպես «Խոշոր բանահյուսություն», որի մեջ ընդգրկել է հրաշապատում, իրապատում, կենդանական հեքիաթները, զրույցները, իրապատում զրույցները, զվարճախոսությունները, ստապատումները:

Բարսեղյանի գրառած ինը հրաշապատում հեքիաթներից հինգը բուն շիրակյան ծագում ունի (տե՛ս Աղ. 2), մնացածները պատումներ են՝ գրառված կարսեցիներից և վանեցիներից: Հարկ ենք համարում այդ հինգ հրաշապատում հեքիաթից ներկայացնել «Փետե ձին» հեքիաթը⁵, որը վաղնջական արմատներ և աղերսներ ունի հնդիրանական ժողովուրդների մեջ հնում ստեղծված այուժենների, ինչպես նաև զուգահեռներ հայկական և տարբեր ժողովուրդների նմանատիպ հեքիաթների հետ:

Ըստ Հանս-Յորգ Ութերի միջազգային դասակարգման՝ այդ հեքիաթը դասվում է ATU 575 «Արքայազնի թևերը» տիպի հեքիաթախմբին, ըստ որի. «Թագավորը մրցույթ է հայտարարում՝ պատրաստելու ամենահրաշալի օբյեկտը: Ոսկերիչը արհեստական ձուկէպատրաստում (կամ այլ խաղալիք), հյուսնը՝ արհեստական թռչող առարկա (ծալովի թևեր, թռչուն, թևերով մեխանիկական ձի): Արքայազնը գնում է թռչող առարկան և դրա հետ թռչում օտար երկիր: Ճանապարհին նա տեսնում է աշտարակում փակված արքայադստերը [մոտիվներ՝ K1346, F1021.1]: Արքայազնը դառնում է արքայադստեր սիրելիանը և հղիացնում նրան: Երբ թագավորն իմանում է, թե ինչ է պատահել, հրամայում է մահապատժի ենթարկել արքայազնին և իր դստերը: Սիրահարները փախչում են դեպի արքայազնի հայրենիքը՝ միասին նստելով թռչող առարկայի վրա, [մոտիվներ՝ RIII.3.1, R215.1], որտեղ նրանք ամուսնանում են: Որոշ տարբերակներում նրանք վայրէջք են կատարում իրենց ճանապարհին, որպեսզի արքայադուստրը կարողանա ծննդաբերել: Կրակ վերցնելիս թռչող առարկան այրվում է: Սիրահարները բաժանվում են, հետագայում՝ վերամիավորվում»⁶:

Բարսեղյանի գրառած «Փետե ձին» հեքիաթում թագավորը հրամայում է կանչել հայտնի երեք արհեստավորին՝ քարտաշին, երկաթագործին և հյուսնին և պատվիրում, որ նրանք իր մինուճար որդու համար խաղալիք պատրաստեն: Քարտաշը պատրաստում է քարե տնակ՝ իր հարմարություններով, երկաթագործը՝ զեղեցիկ ֆուրգոններ, իսկ հյուսնը՝ ժամացույցի պես գործի դրվող փայտե ձի: Տղան հավանում է միայն փայտե ձին և միշտ նրա հետ է խաղում: Երբ բավականին մեծանում է (յոթ-ութ տարեկան), նա նստում է փայտե ձին և շարժիչը գործի դնում: Ձին օդ է բարձրանում և բավական

⁵ Բարսեղյան Պ., 1966, FFIV: 2291,01-2309,00:

⁶ Uther 2011, 344:

ժամանակից հետո վայրէջք է կատարում մեկ այլ թագավորի պալատի մոտ: Ձիով բարձրանում է արքայադստեր սենյակ և այնտեղ թաքուն ապրում է: Երբ արքայադուստրը հղիանում է, մահապատժից խուսափելու համար նրանք նստում են փայտե ձիու փախչում: Ճանապարհին քամի է բարձրանում և փայտե ձիու շարժիչը փչանում է: Ինչպես մյուս այս տիպի թե հայկական, թե միջազգային հեքիաթներում, ամուսինները կորցնում են միմյանց, այնուհետև՝ վերագտնում:

Այս հեքիաթն ունի վաղնջական արմատներ: Այս տիպի հեքիաթների սկզբնական գրական աղբյուրը բանահյուսական հիմք ունեցող հնդկական «Պանչատանտրան» («Հնգամատյան») է: «Պանչատանտրայի» Առաջին տրակտատի տասնամեկերորդ հեքիաթում («Արքայադստերը սիրահարված ջուլհակը»)՝⁷ հյուսնը իր ջուլհակ ընկերոջ համար առասպելական Գարուդա փայտե թռչուն է պատրաստում, որպեսզի նա կարողանա տիրանա արքայադստերը՝ ներկայանալով Վիշնուի կերպարանքով: «Պանչատանտրայի» այս պատումի սյուժեն փոխակերպումներով հասել է մեր օրերը և Հանս-Յորգ Ութերի դասակարգմամբ վերոնշյալ տիպի մեկ մոտիվին է համապատասխանում: Տարբերությունը փայտե օբյեկտի պատրաստման եղանակի մեջ է. «Պանչատանտրայում» այն պատրաստվում է հերոսի ընկերոջ կողմից և ոչ թե մրցույթի արդյունքում: Ընդ որում հեքիաթի սյուժեի հանգուցալուծումը կատարվում է առասպելաբանական Վիշնուի միջամտությամբ:

Հինհնդկական առասպելաբանության մեջ Գարուդան թռչունների արքան է՝ հինդուիզմի գլխավոր աստվածներից մեկի՝ Վիշնուի լծկան թռչունը⁸: «Պանչատանտրայում», ի տարբերություն միջազգային նմանատիպ այլ սյուժեների, թռչող օբյեկտը չի կործանվում, այն մինչև վերջ ծառայում է հերոսին:

«Արքայադստերը սիրահարված ջուլհակը» հեքիաթի սյուժեն Պարսկաստանի միջոցով Հնդկաստանից փոխանցվելով մինչև արաբական երկրներ՝ իր արտահայտությունն է գտնում «Հազար ու մեկ գիշերների» «Սևափայտե ձին» հեքիաթում⁹, որը Շահրազադեն Շահրիարին է պատմում 19 գիշերների ընթացքում: Այս հեքիաթում մրցույթը տարբեր երկրներից եկած երեք իմաստունների միջև է: Ի տարբերություն «Պանչատանտրայի» պատումի՝ այս հեքիաթում արքայազնի և արքայադստեր վերամիավորումից հետո, թագավորը ջարդում է Սևափայտե ձին: Տարբեր ժողովուրդների նմանատիպ հեքիաթներում մեխանիկական հրաշագործ օբյեկտը ոչնչանում է (այրվելով, ջարդվելով, մեխանիզմի փչանալով, ինչպես Պարույր Բարսեղյանի տարբերակում):

«Փետե ձին» հեքիաթը, ինչպես նաև Պարույր Բարսեղյանի գրառած մյուս հրաշապատում հեքիաթները («Ջան Հրեշ թագավորը», «Սոյլամազ խանում», «Թուրութամքի հեքիաթը», «Դովլատան դուշկին») ունեն կառուցվածքային և սյուժետային առանձնա-

⁷ The Panchatantra 1925, 89-112:

⁸ Гринцер 1987, 266.

⁹ Հազար ու մի գիշերներ, 327-352:

հատկություններ՝ կախված տարածաշրջանի բնակլիմայական պայմաններից, հերոսների կենցաղից ու սովորություններից: Այդ հեքիաթներում ընդգծված է տարածաշրջանի բառ ու բանը, իհարկե կախված բանասացի արմատներից՝ երբեմն որոշ պատումներում հանդիպում են բարբառային այլ դրսևորումներ, որոնք անխուսափելի են և ոչ մի կերպ չեն ներգործում հերոսների գործողությունների ընթացքին և սյուժեի ամբողջականությամբ:

Պարույր Բարսեղյանի «Խոշոր բանահյուսություն» շարքում առանձնացվել են հրաշապատումի տարրերով իրապատում, կենդանական, պատմական դեմքերի մասին հեքիաթները, իրական անձանց (գյումրեցիների) մասին զրույցները, զրույցներ ամուսնական զույգերի մասին, ստապատումներ, զվարճախոսություններ և այլն:

Շիրակի իրապատում զրույցների հերոսները ներկայացնում են տարածաշրջանի ազգաբնակչության բոլոր շերտերը (գյուղացիներ, արհեստավորներ, առևտրականներ, հոգևորականներ և այլն): Հերոսների կերպարներում խտացված են տարածաշրջանի բնակչության ամենաբնորոշ հատկանիշներն ու բնավորության գծերը (խոհեմությունը, խորամանկությունը, սրամտությունը, բարեհոգությունը և այլ հատկանիշներ): Զրույցների զգալի մասը իրական մարդկանց մասին է (գյումրեցի Ղազար աղա, Ավետիք Իսահակյան, քաղաքագլուխ Կամսարական, Աղաբեկ Ամիրով, Ծուռվզենց Ավո և Տիգո, Չրախլեցի փայլևան և այլք):

Շիրակի տարածաշրջանի վիպական բանահյուսությունն ամբողջացնում է **զվարճախոսության** ժանրը՝ իր ինքնատիպ դրսևորումներով և ավանդական համահայկական հնչեղություն ունեցող հերոսներով (Պոլոզ Մուկուչ, Ծիտրո Ալեք, Ջղեր Խաչիկ, Կուժիկ, Վարդանիկ և ուրիշներ)¹⁰:

Զվարճախոսությունների համահայկական հերոսի՝ Պոլոզ Մուկուչի (Մկրտիչ Ղազարի Մելքոնյան) մասին ամենահարուստ հավաքածուն Պարույր Բարսեղյանինն է: Պոլոզ Մուկուչի մասին զվարճախոսություններին զուգահեռ Պարույր Բարսեղյանը 1969 թ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտին է ներկայացրել մի ինքնատիպ աշխատություն՝ «Պոլոզ Մուկուչ (բնութագիր)»¹¹: Աշխատանքի առաջաբանում նա գրում է. «... ինչքան մեզ հայտնի է, այդ հոշակ վայելող մարդու մասին մինչև հիմա չկա մի այնպիսի գրավոր աշխատություն, որ բնութագրեր Պոլոզ Մուկուչին օբյեկտիվորեն՝ որպես անհատ, որպես իրական մարդ, տար նրա նշանակությունը, համբավի պատճառը: Այդ բացը որոշ չափով ծածկելու համար այս գրվածքով ուզում ենք անել առաջին համեստ փորձը. բնութագրել Պոլոզ Մուկուչին՝ որպես իրական մարդ՝ ելնելով նրան շրջապատող սոցիալ-տնտեսական պայմաններից, հենվելով գլխավորապես տեղի ունեցած դեպքերի և մասնավորապես նրան վերագրված նյութերի վրա...»¹²:

¹⁰ Բարսեղյան Պ., 1966, FFIV: 2501-2564, Բարսեղյան 1969, FFVI: 6435-6617:

¹¹ Բարսեղյան Պ., 1969, FFVI: 6618-6787:

¹² Բարսեղյան Պ., 1969, FFVI: 6632:

Այդ 80 էջանոց ձեռագրի մեջ հեղինակը առանձին ենթավերնագրերով ներկայացրել է Պոլոզ Մուկուչի տոհմը և ընտանիքը, կրթությունը և զբաղմունքը, մականունը, բարբառը և այլն, ընդհուպ մահվան, թաղման և հիշատակի հետ կապված իրողությունները:

2. Քնարական բանահյուսություն

Արժեքավոր և ինքնատիպ են նաև Պարույր Բարսեղյանի գրառած քնարական բանահյուսության նմուշները «Չափածո զանազան բնակավայրերի»¹³ և «Գյումրեցոնց չափածոն»¹⁴ խորագրով: Պարույր Բարսեղյանը ուսուցչուհի Աստղիկ Բարսեղյանից 1963 թ. Լենինականում գրառել է Ղոշավանքի (Անիի շրջանի Հայկաձոր գյուղ) 1924 թ. խաղիկներ, որոնք երկատող են: Այդ խաղիկների մի խումբն ունի «Նա՛րե, նա՛րե...» կրկնակ (9 միավոր), օրինակ՝

Միբեխը գոխ է դառե,

Իմ յարս դոխ է դառե:

Նա՛րե, նա՛րե¹⁵:

Խաղիկների մյուս խմբի կրկնակն է «Տիրուն, արի մեր յոդեն, / Տիրունի դէյրի քոբեն» (4 միավոր), օրինակ՝

Յերկան գոմը սալած է,

Ալ ձին մեջը նալած է:

Տիրուն, արի մեր յոդեն,

Տիրունի դէյրի քոբեն¹⁶:

Բարսեղյանի գրառած մյուս խմբի խաղիկները քառատող են և կրկնակ չունեն (10 միավոր): Ղուկասյանի շրջանի Ղայդուլի (Ղազանչի) գյուղի խաղիկները գրառել է ալեքսանդրապոլցի անգրագետ Սաթենիկ Զաքարյանից 1964 թ.:

Պարույր Բարսեղյանի քնարական բանահյուսության երկացանկում ընդգրկված են հայրենասիրական, զինվորի և ռազմի, սիրո, երգիծական, խրախճանքի, մանկական, տեղական ստեղծագործողների և զանազան երգեր:

Հարկ է նշել նաև Պարույր Բարսեղյանի «Գյումրեցոնց ասելուկներ» խորագրով չափածո երկատող, եռատող, քառատող, հնգատող նմուշների մասին, որոնք խմբավորել

¹³ Բարսեղյան Պ., 1966, FFIV: 2997-3032:

¹⁴ Բարսեղյան Պ., 1966, FFIV: 2825-2876:

¹⁵ Բարսեղյան Պ., 1966, FFIV: 3014,03-3014,03:

¹⁶ Բարսեղյան Պ., 1966, FFIV: 3014,05-3014,06:

է ըստ լոպպագության, մեծամտության, զոեհկության, տգիտության, նաս մանկական, հեզնական և այլ ասույթներ:

3. Ասույթաբանական բանահյուսություն

Իր բանահավաքչական ախատանքի երեք փուլում էլ Պարույր Բարսեղյանը գրառել է ասույթաբանական բոլոր ժանրերի նմուշներ, որոնք ներկայացրել է «Ժողովրդական բանահյուսություն»¹⁷, «Գյումրեցոնց բանահյուսություն»¹⁸ կամ «Մանր ժանրի ժողովրդական ստեղծագործություններ»¹⁹ վերնագրերով ձեռագիր հավաքածուներում: Յուրաքանչյուր փուլում նա առանձին-առանձին ներկայացրել է ասույթաբանության բոլոր ժանրերը՝ առած-ասացվածքներ, դարձվածներ, անեծքներ, օրհնանքներ, երդումներ, սպառնալիքներ, փաղաքշական և անարգական խոսքեր՝ բոլորն էլ համակարգված և այբբենական կարգով: Ի տարբերություն մյուս սիրող բանահավաքների՝ նա այդ նմուշներն առանձնացրել է՝ վերնագրելով «Պարկեշտ բնույթի» կամ «Անպարկեշտ բնույթի» և ոչ միայն ասույթաբանության համար, նաև զվարճախոսությունների, զրույցների, իրապատում զրույցների և նույնիսկ մի իրապատում հեքիաթի համար:

Նշված հավաքածուներում ընդգրկված են նաև հանելուկներ (76 միավոր), որոնք ներկայացված են առարկայական դասակարգմամբ և ընդգծված են տարբերակները: Արժեքավոր են նաևտարածաշրջանին հատուկ շուտասելուկները և գուշակումները²⁰:

Պարույր Բարսեղյանի հավաքածուում առանձնանում են մականունները (լաղաբները)՝ «Գիմրեցոնց մականունները»²¹ վերնագրով՝ երեք փուլով: Առաջաբանում նա գրում է. «Այս ժողովածուի մեջ մտել են գլխավորապես հին սերնդի (ալեքսանդրապոլցոց) և նոր սերնդի (լենինականցոց) մականունները»:²²Նա նոր սերնդի մականուններից հետո փակագծերի մեջ գրել է Ն տառը: Մականուններից յուրաքանչյուրը ունի բացատրություն, թե ինչ հանգամանքներում է տվյալ անձնավորությունը մականուն ստացել: Մականունները բնութագրում են գյումրեցուն (ստորին խավից վերնախավ)՝ իր լավ ու վատ կողմերով, ցույց են տալիս նրա բարեմասնություններն ու արատները:

Պարույր Բարսեղյանը չի բավարարվել գյումրեցիների մականուններով, նա ներկայացրել է նաև Ղուկասյանի շրջանի Բաշգեղ գյուղացիների մականունները (տղամարդկանց և կանանց), որոնք ասել է նույն գյուղացի Գրիգոր Սարգիսյանը՝ շուտասելուկի ձևով:

¹⁷ Բարսեղյան Պ., 1966, FFIV: 2625-2716, Բարսեղյան 1969, FFVI: 6272-6371:

¹⁸ Բարսեղյան Պ., 1966, FFIV:2877-2968:

¹⁹ Բարսեղյան Պ., 1972, FFVIII: 4521-4580:

²⁰ Բարսեղյան Պ., 1966, FFIV: 2717-2744:

²¹ Բարսեղյան Պ., 1961,FFIV: 2045-2248:

²² Բարսեղյան Պ., 1961,FFIV: 2053:

Եզրակացություն

Պարույր Բարսեղյանի բանահյուսական նյութերի ձեռագիր հավաքածուն Շիրակի բանահյուսական ժառանգության մեջ նշանակալից տեղ ունի՝ իր ողջ ժանրային համակարգով: Շիրակի բուն բնակչությունը մի քանի անգամ համալրվել է Հայաստանի տարբեր տարածաշրջաններից վերաբնակվածներով: Այդ հանգամանքը չէր կարող չանդրադառնալ Շիրակի բանահյուսական ժառանգության վրա թե՛ բառուբանի, թե՛ կենցաղի ու սովորությունների առումով: Պարույր Բարսեղյանը նյութեր է գրառել և՛ վանեցիներից, և՛ կարսեցիներից, և ախալքալակցիներից: Բայց նրա նպատակն է եղել գրառել բուն շիրակցիների բանահյուսությունը, որը կազմել է իր ձեռագիր հավաքածուի մեծ մասը (շուրջ 5000 միավոր):

Պարույր Բարսեղյանը նյութերը գրառելիս չի միջամտել բանասացի պատումին, երբեմն վիպական բանահյուսության մեջ մատիտով որոշ պարզաբանումներ է արել, որոնք տողատակով հաշվի կառնվեն հրատարակության ժամանակ:

Պարույր Բարսեղյանի շիրակյան բանահյուսական հավաքածուն մեծ ներդրում է համահայկական բանահյուսական ժառանգության մեջ և կհամարվի «Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթը» ժողովածուի նյութերը:

Աղյուսակ 1

ՊԱՐՈՒՅՐ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ԺԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Սեռը	Ժանրը	Քանակը	Ծանոթագրություն
Վիպական	Հեքիաթներ	21	Որից 5-ը հրաշապատում, 1 կենդանական, մնացածը՝ իրապատում
	Զրույցներ	20	
	Իրապատում զրույցներ	54	
	Զվարճախոսություններ	47	
Քնարական	Խաղիկներ	19	
	Երգեր	129	
Ասույթաբանություն	Առած-ասացվածքներ	763	
	Դարձվածքներ	873	
	Անեծքներ	342	
	Օրհնանքներ	146	
	Երդումներ	106	
	Փաղաքշական խոսքեր	62	

	Սպանալիքներ	91	
	Անարգական խոսքեր	237	
	Ասույթներ	206	
	Աթեիստական ասույթներ	28	
	Հանելուկներ	80	Որից 4 հատ գուշակում
	Շուտասելուկներ	9	
Մականուններ	Գյումրեցիների	1243	
	Ղուկասյանի շրջանի Բաշգեղի	57	
Բառարան		354	

Աղյուսակ 2

ՊԱՐՈՒՅՐ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

Հեքիաթի վերնագիրը	Գրառման տարեթիվը	Բանասացը	Տարիքը և ծննդավայրը	Ծանոթագրություն
Հրաշապատում հեքիաթներ				
«Ջան հրեշ թագավորը»	1961 թ. հուլիս	Գրիգոր Գևորգի Սարգիսյան	1895 թ. ծնված Ղուկասյանի շրջանի Բաշգյուղ	FFIV: 2257,01- 2275,00 Կոնտամինացիա
«Թուրութամքի հեքիաթը»	1966 թ., հուլիս	-, -	-, -	FFIV: 2399,01- 2434,00 ATU302B
«Սոլլամազ խանում»	1961 թ.	Շուշանիկ Միրզոյան (Ամիրյան)	1895 թ.	FFIV: 2277,01- 2290,00 ATU 507
«Փետե ձին»	1961 թ.	-, -	-, -	FFIV: 2291,01- 2309,00 ATU 575
«Դովլատան դուշկին»	1961 թ.	Սաթենիկ Զաքարյան	1890 թ. (անգրագետ)	FFIV: 2335,01- 2340,00
Կենդանական հեքիաթներ				

«Շան ու խորոզի առակը»	1961 թ.	Սաթենիկ Զաքարյան	1890 թ. (անգրագետ)	FFIV: 2343,01- 2344,00 CYC61*
Իրապատում հեքիաթներ				
«Գարսևանը՝ թագավոր»	1966 թ.	Ուլիանոս Հակոբյան	1933 թ. (տարրական կրթություն)	FFIV: 2371,01- 2374,00 (հրաշապատումի տարրերով)
«Նախըջու հեքիաթը» («Բարի մարդու հեքիաթը»)	1964 թ.	Սաթենիկ Զաքարյան	1890 թ. (անգրագետ)	FFIV: 2353,01- 2362,00
«Երագ մեկնողը»	1966 թ.	Աղասի Վիկրյան	թոշակառու	FFIV: 2453,01- 2458,00
«Նախըջու տղի հեքիաթը»	1966 թ.	Գրիգոր Գևորգի Սարգիսյան	1895 թ.	FFIV: 2459,01- 2472,00
Պատմական դեմքեր				
«Սողոմոն իմաստունի պատմվածքը»	1966	Իսահակյան Ստեփան (Տեփո քեռի)	1884 թ.	FFIV: 2387,01- 2390,00 ATU 926
«Սողոմոն իմաստունը քառասուն կնիկ ուներ»	1966	Իսահակյան Ստեփան (Տեփո քեռի)	1884 թ.	FFIV: 2390,01- 2392,00 ATU 926
Իրապատում գրույցներ				
«Կուռկուռի փաչեն»	1963	Սաթենիկ Զաքարյան	1890 թ., անգրագետ	FFIV: 2345,01- 2352,00 ATU 1380-1404
«Անսկամ կնիկ»	1965	Սաթենիկ Զաքարյան	1890 թ., անգրագետ	FFIV: 2363,01- 2368,00 ATU 1350-1439
«Քրթի կնիկը»	1965	Սաթենիկ Զաքարյան	1890 թ., անգրագետ	FFIV: 2363,01- 2368,00 ATU 1350-1439

«Գումշի նաղլը»	1961	Արշավիր Սարգսյան	1889 թ., Իգդիր, տարրական կրթություն	FFIV: 2363,01- 2368,00
«Յո՞ւմ հետ խոսիմ»	1963	Սաթենիկ Զաքարյան	1890 թ., անգրագետ	FFIV: 2379,01- 2380,00 ATU 1350-1439
«Էրկու քուր»	1963	Սաթենիկ Զաքարյան	1890 թ., անգրագետ	FFIV: 2363,01- 2368,00
«Մասալ գեղացու մասին»	1961	Գրիգոր Գևորգի Սարգիսյան	1895 թ.	FFIV: 2973,01- 2977,00
«Օճախուլեցու դղումը»		Ռուբեն Վարդանյան		FFIV: 3169,01- 3169,01 (ստապատում)

Օգտագործված գրականության ցանկ

Բարսեղյան Պ., Գյումրեցոց մականունները, ձեռագիր հավաքածու, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ քանահյուսական արխիվ(ՀԱԻԱԲ)FFIV: 2045-2248, 1961:

Բարսեղյան Պ., Հեքիաթներ և մասալներ, ձեռագիր հավաքածու, ՀԱԻԱԲ FFIV: 2291,01-2309,00, 1961:

Բարսեղյան Պ., Հանելուկներ և շուտասելիքներ, ձեռագիր հավաքածու, ՀԱԻԱԲ FFIV: 2717-2744, 1966:

Բարսեղյան Պ., Հեքիաթներ, մասալներ, անեկդոտներ, եղելություններ ձեռագիր հավաքածու, ՀԱԻԱԲ FFIV: 3089-3196, 1966:

Բարսեղյան Պ., Գյումրեցոց չափածոն, ձեռագիր հավաքածու, ՀԱԻԱԲ FFIV: 2825-2876, 1966:

Բարսեղյան Պ., Չափածո զանազան բնակավայրերի, ձեռագիր հավաքածու, ՀԱԻԱԲ FFIV: 2997-3032, 1966:

Բարսեղյան Պ., Լենինականի անեկդոտներից, ձեռագիր հավաքածու (պարկեշտ բնույթի), ձեռագիր հավաքածու, ՀԱԻԱԲ FFIV: 2501-2564, 1966:

Բարսեղյան Պ., Ժողովրդական բանահյուսություն, ձեռագիր հավաքածու, ՀԱԻԱԲ FFIV: 2625-2716, 1966:

Բարսեղյան Պ., Ժողովրդական բանահյուսություն (մանր ժանր), ձեռագիր հավաքածու, ՀԱԻԱԲ FFIV: 6272-6371, 1969:

Բարսեղյան Պ., Եղելություններ և անեկդոտներ (պարկեշտ բնույթի), ձեռագիր հավաքածու, ՀԱԻԱԲ FFIV: 6436-6617, 1969:

Բարսեղյան Պ., Պոլոզ Մուկուչ (բնութագիր), ձեռագիր հավաքածու, ՀԱԻԱԲ FFVI: 6618-6787, Երևան 1969:

Բարսեղյան Պ., Մանր ժանրի ժողովրդական ստեղծագործություններ, ձեռագիր հավաքածու, ՀԱԻԱԲ FFVIII:4521-4580

Բարսեղյան Պ., Ամփոփում Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվին հանձնված 1960-1972 թթ. նյութերի, ձեռագիր հավաքածու, ՀԱԻԱԲ FFVIII: 4783-4804, 1972:

Հազար ու մեկ գիշեր, ընտիր հեքիաթներ, «Հայաստան», Երևան, 1990:

Հարությունյան Ս., Բանագիտական ակնարկներ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2010:

Гринцер Р.Гаруда // Мифы народов мира, т. I, «Советская энциклопедия», Москва, 1987, с. 266.

The Panchatantra of Vishnu Sharma, English Translation, Arthur W. Ryder, Composed and Printed By The University of Chicago Press, Chicago, 1925.

Uther, Hans-Jörg., The types of international folktales: A Classification and Bibliography Based on the System of Antti Aarne and Stith Thompson, part I, Animal Tales, Tales of Magic, Religious Tales. and Realistic Tales, with an Introduction, Helsinki, Academia Scientiarum Fennica, 2011.

РЕЗЮМЕ

Ширакская фольклорная коллекция собирателя Паруйра Барсебяна Хемчян Марине

Составляющий существенную часть ширакского фольклорного наследия коллекция рукописей любителя-собирателя Паруйра Барсебяна хранится в смешанных фондах FFIV:, FFVI: и FFVIII: фольклорного архива Института археологии и этнографии НАН РА. Родившийся в городе Александрополе Паруйр Барсебян после завершения своей трудовой деятельности решил свою жизнь бескорыстно посвятить записи фольклорных материалов родного Ширака. Большая часть коллекции включает многожанровый фольклорный материал: сказки (волшебные, бытовые, животные), сказания, реалистические сказы, анекдоты, небылицы, песни, загадки, скороговорки, паремиялогия (пословицы-поговорки, фразы, клятвы, проклятия, благословения, ласкательные слова), прозвища и т.д., которые были записаны от коренных ширакских сказителей (около 5000 единиц). Ширакская коллекция Паруйра Барсебяна оригинальностью, диалектом и многообразностью имеет свое достойное место и роль в фольклорном наследии не только ширакского региона, но также всех историко-этнографических регионов Армении и пополнит материалы сборника «Ширак. Фольклорна культура армян».

Ключевые слова: Ширакский регион, Паруйр Барсегян, эпический фольклор, лирический фольклор, паремиология, прозвища, анекдот.

SUMMARY

Shirak folklore collection by recorder Paruyr Barseghyan Khemchyan Marine

Constituting an essential part of the Shirak folklore heritage, the collection of manuscripts of the amateur collector Paruyr Barseghyan is stored in the mixed FFIV:, FFVI: and FFVIII: funds of the folklore archive of the Institute of Archeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia. Born in the city of Alexandropol, Paruyr Barseghyan, after completing his working career, decided to selflessly devote his life to recording folklore materials from his native Shirak. Most of the collection includes multi-genre folklore material: fairy tales (magical, everyday, about animals), realistic tales, jokes, fables, songs, riddles, tongue twisters, paremiology (proverbs, sayings, phrases, oaths, curses, blessings, endearments), nicknames, etc., which were recorded from indigenous Shirak storytellers (about 5000 units). The Shirak collection of Paruyr Barseghyan, with its originality, dialect and diversity, has its worthy place and role in the folklore heritage of not only the Shirak region, but also all historical and ethnographic regions of Armenia and will complement the materials of the collection "Shirak. Folklore culture of Armenians".

Key words: Shirak region, Paruyr Barseghyan, epic folklore, lyrical folklore, paremiology, nicknames, joke.

Կատվայան Վիկտոր

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

բանասիրական գիտությունների դոկտոր

viktorkatvalyan@mail.ru

DOI: 10.54412/99399305-2023-67

Բանալի բառեր. բնակավայր, լեզվավիճակ, խոսվածք, ազդեցություն, հատկանիշ, բայական համակարգ, գրաբար:

Նախաբան

Շիրակի մարզն ընդգրկում է Ախուրյանի (35 բնակավայր), Ամասիայի (23 բնակավայր), Աշոցքի (25 բնակավայր), Անիի (17 բնակավայր), Արթիկի (23 բնակավայր) տարածաշրջանները: Հնում մարզի տարածքը մտել է Մեծ Հայքի Այրարատ նահանգի մեջ, իսկ Ռուսաստանի տիրապետության շրջանում եղել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի սահմաններում: Մարզի տարածքը հնագույն ժամանակներից բնակեցված է եղել հայերով: 17-րդ դարի սկզբին Շիրակի բնակչության մի մասը ևս ենթարկվել է Շահ Աբասի իրականացրած բռնագաղթին, բնակավայրերի մեծ մասը հայաթափվել է, ապա բնակեցվել օտարազգիներով, որի հետևանքով փոխվել են բնակավայրերի մեծ մասի անվանումները կա՛մ հայկական անվանումների օտարահունչ թարգմանությամբ, կա՛մ էլ քրդաթուրքական անվանումներով: 1820-ականների ռուս-պարսկական, ռուս-թուրքական պատերազմների ավարտից հետո օտարները հիմնականում լքել են Շիրակի տարածքը, որը բնակեցվել է 1813-1829թթ. Արևմտյան Հայաստանի տարբեր շջաններից՝ Կարսից, Կարինից, Բիթլիսից, Մուշից, Սասունից, Վանից, Բասենից, Ալաշկերտից, ինչպես նաև Պարսկահայաստանից գաղթած հայերով²: 20-րդ դարի վերջին մարզի որոշ գյուղերում բնակություն են հաստատել նաև ջավախահայեր:

Շիրակի մարզն ունի 3 քաղաքային (Գյումրի, Արթիկ, Մարալիկ) և 116 գյուղական բնակավայրեր: Բնակչությանը թվաքանակը 2016թ. տվյալներով մոտ 243 հազար է, Գյումրի քաղաքինը՝ 117, 7 հազար, Արթիկինը՝ 18,8 հազար, Մարալիկինը՝ 5,5 հազար: Գյուղական խոշոր բնակավայրերից են Ախուրյանը (9 600 բնակիչ), Ագատանը (5 800 բնակիչ), Մառնաղբյուրը (3 400 բնակիչ), Փանիկը (3 200 բնակիչ), Աշոցքը (2 800 բնակիչ),

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6B111 ծածկագրով «Շիրակի մարզի բարբառային համապատկեր» գիտական թեմայի շրջանակներում:

² Տե՛ս Մանուկյան Մ., Հայաստանի Հանրապետության մարզերը, քաղաքներն ու գյուղերը, Ե., 2013, էջ 771:

Մարմաշենը (2 100 բնակիչ), Ոսկեհասկը (2 100 բնակիչ), Ամասիան (2 100 բնակիչ), Մեծ և Փոքր Մանթաշները և այլն: Մոտ 3 տասնյակ բնակավայրեր ունեն 1000-ից ավելի բնակչություն, մյուսները՝ ավելի քիչ³: Որոշ բնակավայրեր ունեն ընդամենը մի քանի տասնյակ բնակիչներ: Գրեթե բոլոր բնակավայրերի բնակիչների նախնիները եկել են տարբեր վայրերից, սակայն ժամանակի ընթացքում յուրաքանչյուր դեպքում գերիշխող է դարձել խոսվածքներից մեկը, կամ ձևավորվել է խառը տիպի խոսվածք: Այնպես որ, որպես կանոն բնակավայրերում տասնամյակների ընթացքում ձևավորվել են համասեռ, այսինքն՝ բոլորի համար ընդհանուր խոսվածքներ, որոնց ուսումնասիրությունը արդի հայ բարբառագիտության կարևորագույն խնդիրներից է: Այս աշխատանքում ներկայացվում են «Շիրակի մարզի բարբառային համապատկեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակում 2022-2023 թթ. մարզի բնակավայրերում դաշտային հետազոտական աշխատանքների շնորհիվ ձեռք բերված արդյունքների հիման վրա կատարված դիտարկումներ՝ հիմնականում ուշադրության կենտրոնում ունենալով մարզի խոսվածքների համար առավել բնութագրական իրողություններ:

Շիրակի մարզի լեզվավիճակը

Շիրակի մարզը բարբառային խոսքի տեսակետից հետաքրքրական խճանկար է ներկայացնում: Այստեղ հաղորդակցվում են Կը և Ում ճյուղերի բարբառային միավորներով: Կը ճյուղի խոսվածքները կարելի է բաժանել երեք խմբի՝ ա) Կարնո բարբառի խոսվածքներ, բ) Մշո բարբառի խոսվածքներ, գ) Կարնո և Մշո բարբառների տարրերով խառը տիպի խոսվածքներ: Ինչ վերաբերում է Ում ճյուղը ներկայացնող խոսվածքներին, ապա դրանք բոլոր խառը տիպի են, որովհետև չնայած ներկան կազմում են ում//ըմ վերջավորությամբ անկատար դերբայով, սակայն առավել կամ պակաս չափով ունեն Կարնո բարբառին բնորոշ հատկանիշներ⁴: Նկատենք, որ խոսվածքների նշված խմբերը բաշխված չեն ըստ տարածաշրջանների, դրանցից յուրաքանչյուրում կողք կողքի գործածվում են տարբեր ճյուղերի կամ խառը տիպի խոսվածքներ:

Ինչպես Կը ճյուղի խոսվածքների մեջ, այնպես էլ ողջ մարզում անշուշտ գերակա դիրք ունի Գյումրիի խոսվածքը, որը մարզի բնակիչների շրջանում վերբարբառային, քաղաքային լեզվի համարում ունի և այդ իմաստով՝ գրեթե գրական լեզվի կարգավիճակ: Այդ է պատճառը, որ անկախ ճյուղային պատկանելությունից՝ գրեթե բոլոր խոսվածքների վրա նկատելի է Գյումրվա խոսվածքի մեծ ազդեցությունը: Ի դեպ,

³ Տե՛ս <https://armstat.am/file/doc/99500008.pdf>:

⁴ Մարզի բնակիչները շատ դեպքերում բավականին հավաստի են ներկայացնում տարածաշրջանի բարբառային վիճակը: Ըստ բարբառախոսներից մեկի՝ մարզում գործառում են բարբառային երեք տարբերակներ՝ բասենցիների, որը նույնն է Գյումրիի հետ, ֆրանկների (նկատի ուներ մշեցիներին) և ըմ-երի (նկատի ուներ Ում ճյուղի խոսվածքները կրողներին):

հետազոտական իմաստով որոշ դժվարություններ է հարուցում այն, որ բարբառախոսները հաճախ սահուն կերպով անցում են կատարում Գյումրիի խոսվածքին: Ինչևէ, Կարնո բարբառի Գյումրվա խոսվածքին մերձավոր խոսվածքներ ավելի հաճախ հանդիպում են Գյումրիի մերձակայքի բնակավայրերում (Ախուրիկ, Բենիամին, Կապս, Կառնուտ, Կրաշեն և այլն): Բարբառի շրջանակում առանձնանում են Բասենի (Թորոսգյուղ, Մեծ Մանթաշ, Սարատակ, Հառիճ, Մեղրաշեն և այլն) խոսվածքներով հաղորդակցվող բնակավայրերը, որոնցում բավականին հետաքրքրական և յուրօրինակ իրողություններ են առկա: Բնակավայրերի մեկ այլ խմբում իր հիմնական հատկանիշներով գործառում է Մշո բարբառը (Ոսկեհասկ, Լեռնակերտ, Փանիկ, Գեղանիստ, Սառնաղբյուր այլն): Կարնո և Մշո բարբառների տարրերով խառը տիպի խոսվածքներում հիմնականում գերիշխողը Կարնո բարբառն է: Նման խոսվածքներ ունեն, օրինակ, Արևիկ, Առափի բնակավայրերը: Ինչ վերաբերում է Ում ճյուղի խոսվածքներին, ապա այդպիսիք գործածվում են հիմնականում կարսեցիների սերունդներով բնակեցված բնակավայրերում (Հովտաշեն, Լուսակերտ, Հոռոմ, Արևշատ և այլն): Պետք է կարծել, որ Կարսի խոսվածքը դեռևս իր բնօրրանում է զուգադրել Կարնո և Արարատյան բարբառների հատկանիշներ՝ լինելով երկուսի սահմանագծում, ինչպես նաև այն պատճառով, որ Կարսը հանգամանքների բերումով ընդունել է արևմտահայ գաղթականության զանգվածներ⁵: Հետագայում՝ նոր հայրենիքում, թերևս Կարնո բարբառի ազդեցությունը ավելի է մեծացել, և Արարատյան բարբառից հիմնականում մնացել է ներկայի կազմության եղանակը:

Խոսվածքների ընդհանուր կամ գրեթե ընդհանուր հատկանիշներ

Բոլոր խոսվածքներում բառասկզբի ձայնեղ հպականներն ու հպաշփականները շնչեղ են (բ՛երել, գ՛օղ, դ՛ուռ, ջ՛ուր, ձ՛ավար): Սա թերևս Շիրակի մարզի բարբառային խոսքի ամենաընդհանուր հատկանիշն է: Գրեթե բոլոր խոսվածքներում բառամիջում և բառավերջում առկա է խուլ հպական ու հպաշփական բաղաձայնների ձայնեղացում (մըշագել, կադու), ձայնեղ ու շնչեղ խուլ հպականների ու հպաշփականների դիմաց առկա են պարզ խուլեր (թըրկընօծ, ճամպէկը): Երևույթը մասամբ է արտահայտված Մշո բարբառի որոշ խոսվածքներում (օրինակ՝ Լեռնակերտում), նաև Կարնո և Մշո բարբառների հատկանիշներով խառը խոսվածքներում: Միայն Մշո բարբառի տարբերակներում են հանդիպում *է,ն* երկբարբառային հնչյուններ: Բոլոր խոսվածքներում բառասկզբում առկա են միավանկ բառերում *է>յէ՝* յեգ, յեպ, *ն>վօ//վէ* (վօսպ, վօրը, վերը, վոր) անցումներ, բազմավանկ բառերում՝ *է>է, ն>օ* համապատասխանություններ (երինջ,

⁵ Ժամանակին Հ.Աճառյանը նկատել է, որ Կարսը և Կովկասի մյուս քաղաքներից Ալեքսանդրապոլը, Ախալքալաքը և Ախալցխան ռուս-թուրքական պատերազմների ընթացքում լցվել են հայ գաղթականներով, և այդ քաղաքների ամբողջ հայ բնակչությունը 20-րդ դարասկզբին խոսում է նույն բարբառով, ինչ Կարինի հայությունը (տե՛ս **Աճառյան Հ.**, Հայ բարբառագիտություն, էջ 104):

օխճար//օճխար): Բառամիջում ու բառավերջում *հ*-ի դիմաց սովորական է *յ*-ն (բահ, պահել - բ'այ, պայել): Որոշ երկվանկ բառերում բառասկզբում առկա է *յ* կիսաձայնի հավելում *է*-ից առաջ՝ *յէսօր, յէկուծ, յէրգան, յէլնէլ, յէրէս*, նույնիսկ՝ *յէստարի*: Խոսվածքներում բառասկզբում ձայնավորից առաջ շատ տարածված է ձայնեղ *հ*-ի հավելումը, ինչպես՝ *հ'արուն, հ'արէվ, Հ'ամասյա, հ'աշկ, հ'իրգուն* և այլն⁶:

Հետաքրքրական իրողություններ կան հոգնակիակազմության մեջ: Շատ խոսվածքներում *ք* հոգնակերտից առաջ բառավերջի *ի*-ն դառնում է *է*, ինչպես՝ *գ'ինի-գ'ինէկ, քեռի - քեռէկ, մօզի - մօզէկ, օսկի - օսկէկ*: Թվում է՝ այս հատկանիշը առավելաբար հատուկ է Բասենի խոսվածքներին: *Ան* մասնիկով են հոգնակին կազմում *էշ, գ'էլ, էձ, ձ'ի* միավանկ բառերը՝ *իշան, գ'իլան, իձան, ձ'իյան*, Ազատանում հանդես են գալիս *ձ'իանիկ, իշանիկ, իձանիկ, գ'իլանիկ* տարբերակներ: *Ք/կ* հոգնակերտով ձևերը ենթարկվում են *ց/ծ* հոլովման՝ *էրէխանծ, ըստէղած, գ'էղածօնծ, կընգըտանծ, ախպըրդանծ*: Բոլոր խոսվածքներում *էշ, էձ, գ'էլ* բառերը ենթարկվում են *ու* հոլովման՝ *իշու, իձու, գ'իլու*: Հատկապես Բասենի խոսվածքի տարբերակներում *ու* հոլովման են ենթարկվում նաև հոգնակի գոյականները (կողըշներուն, ախպերներու): Բացառական հոլովը սովորաբար ունի գուգահեռ *էն* և *իծ* վերջավորություններ՝ *քախկիծ//քախկէն, ախպօրիծ//ախպօրէն*: Բասենի խոսվածքի տարբերակներում տեղանունների բացառականը արտահայտվում է *ու* մասնիկով՝ *Հօղտէմբէրյանու, Սէվանու, Էրէվընու, Արտըկու, Լէնինէգանու*, երբեմն այդպես է ձևավորվում նաև հասարակ անունների բացառականը (*ծանէրուն* կըքաղէինկ, *քախկու*): Շիրակի մարզի որևէ խոսվածքում ներգոյական հոլովի ձև չենք արձանագրել: Գրեթե բոլոր խոսվածքներում անորոշ հոդը կարող է գործածվել և՛ նախադաս, և՛ հետադաս, և՛ երկուսը միաժամանակ՝ *մէ քիճըմ, մէ մառտ, մառտըմ, մէ մառտըմ*: Ածականների համեմատական աստիճանի կազմության մեջ շատ է հանդիպում *ջիլիգ/գիլիգ* փոխառյալ բառը՝ *ջիլիգ լավ է*:

Դերանունների համակարգում ընդհանուր են *ի, իգ* հավելյալ մասնիկները՝ *էսի, էղի, էնի, ըսիգ, ըղիգ, ընիգ /երբեմն՝ էսիգ, էղիգ, էնիգ/, ընձի, քէգի, մէգի, ձ'էգի*: Տարատեսակ դրսևորումներ ունեն ցուցականների սեռական հոլովաձևերը՝ *ըստուր, ընդուր, ընուր* (Ազատան), *ըստօր, ըդօր, ընօր* (Ախուրյան, Մեղրաշեն), *ըստուր, ըդուր, ընդուր* (Բասեն, Անուշավան) և այլն: Մեծ տարածում ունեն *hou, hoդ, hoն* ձևերը: Ի տարբերություն խոսակցական արևելահայերենի՝ *համար, պես, հետ* կապերը հաճախ գործածվում են անձնական դերանունների ոչ թե սեռական, այլ տրական հոլովաձևերի հետ՝ *ընձի մար, քէգի մար /համար/, ընձի հետ, ընձի պէս* (Ազատան, Բենիամին, Գյումրի): Խոսվածքներում *ուլ* դերանվան դիմաց հանդիպում են *օլ, վօլ, հօլ*, նաև՝ *վէլ*

⁶ Հետաքրքրական է, որ բարբառակիրները շատ լավ տարբերակում են այդ հնչյունը, հաճախ մատնանշում են, որ «Մաշտօծը էլ տառը չի ստէխծէ» :

ձևեր: Երբեմն դժվար է լինում հասկանալ խոսողները *հօլ/են* արտասանում, թե՛ *վօլ/*: Ընդ որում՝ երբեմն իրենք էլ չեն կողմնորոշվում: Հնարավոր է՝ այս իրողությունը կարող է օգնել՝ բացատրելու *n*-ից առաջ *h>ֆ/վ* անցումը: Ի դեպ, առանձին խոսվածքներում գործածվում են *ֆօղ, ֆօն, ֆօտ* ձևեր (Անուշավան, Հովտաշեն):

Բայական համակարգում նույնպես շատ են հետաքրքրական հատկանիշները: Նախ՝ շատ խոսվածքներում *ա, է* խոնարհումների կողքին կա նաև *ի* խոնարհում (տանիմ, ունիմ, նստիմ): Բասենի խոսվածքի տարբերակներում հաճախ *ա* խոնարհման բայերի ենթակայական դերբայը կազմվում է ներկայի հիմքով՝ *գ'ալօղ, էրսօղ, կարսօղ, մնօղ, վախէնօղ*: Նույն այդ տարբերակներում հաճախ ներկայի հիմքով են կազմվում արգելական հրամայականի ձևերը՝ *մի՛ վախէնա, մի՛ նեղէնա, մի՛ փախնի, մի՛ թոնի, մի՛ հակնի, մի՛ կրբնի*: Կը մասնիկը Մշո բարբառի խոսվածքներում միայն նախադաս է, իսկ Կարնո բարբառի խոսվածքներում, հատկապես՝ Բասենի տարբերակներում, նաև հետադաս է: Մեծ տարածում ունի ներգործածն և կրավորածն վերջավորություններով բայասեռի տարբերակումը⁷ ներկայում և ըղձականում (ներգործածն՝ *ջ'արտէմ, բ'էրէմ, կըզ ըրէ, կրավորածն՝ կըզըզվիմ, նստիմ, պարզիմ*), անցյալ կատարյալում (ներգործածն՝ *խմի//խմէճի, կրավորածն՝ նստա, կայնա, պարզա*), հրամայականում (ներգործածն՝ *քաշէ՛, բ'ընէ՛, մի քաշէ, կրավորածն՝ նստի՛, կայնի՛, մի կայնի*):

Ժամանակին Հ.Աճառյանը նկատել է, որ Կարնո բարբառում «Անկատարին եզակի գ. դեմքին մեջ շատ անգամ է ձայնը կը դառնայ *ի. օր. ունիք, գըյնիք* ևն»⁸: Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ իրականում ներկայի հիմքից կազմվող անցյալ ժամանակաձևերում (ըղձական անցյալ, անցյալ անկատար, հարկադրական անցյալ) եզակի երրորդ դեմքում է և *ի* տարբերակները ներգործածն և կրավորածն առանձին խոնարհումների արտահայտություն են: Այսպես՝ ներգործածն՝ *կըհակնէր* (հագնում էր), *բըղի գ'ըրէր* (պիտի գրեր), *ուղէր* (ուտեր), կրավորածն՝ *կըհակնըրվիր* (հագնվում էր), *բըղի աշխատիր* (չեզ.սեռ. պիտի աշխատեր), *քընիր* (քներ): Պետք է նշել, որ այս իրողությունը ակնհայտորեն իր արմատներն ունի հին հայերենում: «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության մեջ Աճառյանը նկատում է, որ գրաբարում ո՛ր դեպքում որ ներգործական և կրավորական իմաստները միևնույն ձևով են արտահայտվում, բայի սեռը որոշվում է խնդրառությամբ: Բայց լեզուն, շարունակում է հայագետը, սիրում է ավելի պարզ և հասկանալի ձևեր, երկդիմությունը տանելի երևույթ չէ, ուստի կրավորականի համար ստեղծել են *լինէլ* բայով կազմված ձևեր (մոռացեալ լինիմ, լինէի)⁹: Այնուհետև նշում է. «Հետին հեղինակները ավելի ընդհանուր միջոցի դիմեցին. Ա

⁷ Ներգործածն խոնարհվում են Ե խոնարհման ներգործական սեռի պարզ բայերը, կրավորածն՝ Ե խոնարհման չեզոք և կրավորական սեռերի պարզ բայերը:

⁸ Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 111:

⁹ Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ. 4, Բ գիրք, էջ 319:

լծորդության (նկատի ունի Ե խոնարհումը- Վ.Կ.) անկատարի եզակի Գ դեմքի կրավորականը ներգործականից զանազանելու համար հնարեցին –իւր վերջավորությունը», և բերում է օրինակներ՝ *սիրէր-սիրիւր, գործէր-գործիւր, պատուէր-պատուիւր, հատանէր-հատանիւր, տեսանէր-տեսանիւր*¹⁰: Մյուս կողմից՝ լեզվաբանը բարբառների բայական համակարգերը դիտարկելիս բերում է Համշենի բարբառի ստորադասական անկատար ժամանակաձևի կրավորականի հետևյալ պատկերը՝ *սիրվէր, սիրվէր, սիրվիր*: Ընդ որում՝ վերջին ձևի *ի*-ի մասին ասում է, որ այս տարբերությունը առաջացել է հաջորդ *ր*-ի պատճառով, որ իրենից առաջ գտնված շեշտյալ *է* ձայնավորը դարձնում է հաճախ *ի*¹¹: Համանման երևույթ, բայց առանց մեկնաբանության, Աճառյանը վկայել է նաև Սվեդիայի բարբառի համար՝ *սիրվէր է, սիրվէր, սիրվիր*¹²: Ինչևէ, գրաբարի անցյալ անկատարի եզակի երրորդ դեմքի սեռային տարբերակում արձանագրել է նաև Ա.Աբրահամյանը, բայց արդեն 5-րդ դարի մատենագրության մեջ՝ գրելով, որ գրաբարում Ե խոնարհման բայերի եզակի թվի 3-րդ դեմքում երբեմն կրավորական նշանակությամբ հանդես է գալիս *-իւր* վերջավորությունը, օրինակ՝ «... Որոյ անուն Փիսակ կոչիւր» (Բուզանդ)¹³: Այսպիսով, պետք է կարծել, որ ինչպես Սվեդիայի և Համշենի, այնպես էլ Կարնո բարբառներում ներկայի հիմքից կազմվող անցյալի ձևերում առկա է եզակի երրորդ դեմքում ներգործաձև և կրավորաձև խոնարհումների տարբերակման հինհայերենյան հատկանիշի արձագանք: Բարբառների և գրաբարի ձևերի համապատասխանության այս օրինակը լրացուցիչ մի փաստարկ է հայ բարբառների արմատների հնության և միաժամանակ վկայում է այն մասին, որ կրավորաձև *-իւր* մասնիկը ոչ թե հորինվել է գրագետների կողմից, այլ հին հայերենի տարբերակային դրսևորումներին հատուկ հատկանիշ է:

Շիրակի մարզի խոսվածքներին բնորոշ մեկ այլ էական հատկանիշ է այն, որ օժանդակ բայի ներկայի եզակի երրորդ դեմքի *է* ձևը, կարելի է ասել, գրեթե համատարած է: Միայն առանձին խոսվածքներ ունեն *ա* ձև (Անուշավան, Քեթի, Առափի): Թերևս համընդհանուր է նաև հարկադրականի եղանակիչի *բըղի* ձևի գործածությունը, որը կարող է հանդես գալ նաև հետադաս դիրքում: Առանձին դեպքերում հետադաս դիրքում գործածվում է սրա կրճատ *տի//ղի* ձևը (օր.՝ Ախուրյանում), իսկ Վարդաքարի խոսվածքում հանդիպել է նախադաս *պի//բի* ձևը՝ ձայնավորով սկսվող բառերից առաջ (*պիէշտամ*՝ պիտի երթամ, *բիրսէմ*՝ պիտի ասեմ): Համընդհանուր հատկանիշ է *որ* շաղկապի *օր* արտասանությունը: Երբեմն նկատելի են մեծ տարածում ունեցող, բայց մասնավոր իրողություններ: Այսպես, շատ խոսվածքներ ունեն դ՛ուռ բառի դ՛ըռա սեռականի ձև՝ դ՛ըռա դ՛էմը և այլն:

¹⁰ Նշվ. աշխ., էջ 321:

¹¹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 338:

¹² Տե՛ս նշվ. աշխ., էջ 342:

¹³ Տե՛ս Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, 1976, էջ 118:

Շիրակի մարզին բնորոշ են նաև բառային յուրահատուկ իմաստներ, ինչպես՝ *դ'աննալ*՝ շրջվել, *ջ'անտէլ*՝ կտրել, կտրատել, *կարկըվէլ*՝ ամուսնանալ (նաև՝ կնոջ համար), *վրա* (առատ՝ Ընթէս վրա էր թօնը /Բասեն գյուղ/), *յէրտիգ* (կտուր), *ձ'իտած գովէշ* (թխամաշկ մարդու մասին), *օծի գարգաձ* (վատ մարդ), *հառգա* (ատամ) և այլն: Կան յուրահատուկ կազմություններ. օրինակ՝ *ձ'էռընթուխ* (թրիքի գունդը ձեռքով պատի քարերին ձեփելը), *ձ'էռկէլ* (արիշտա պատրաստելու գործողություն), *ձ'ակատէնդ* (մեղվանոցից մի պարսի հեռանալը), *ճալան-ճօտան* (երգար-բարակ), *կընիգ մարտ* (կին), *դագան խօրովաձ* (հատկապես Աշոցքում մսից պատրաստվող կերակրատեսակ) և այլն:

Եզրակացություն

Թեև Շիրակի մարզում հաղորդակցվում են Կը ճյուղի Կարնո և Մշո բարբառների խոսվածքներով, դրանց հատկանիշները, ինչպես նաև Ում և Կը ճյուղերի որոշ իրողություններ գուգորդող խառը տիպի խոսվածքներով, այնուամենայնիվ տարածաշրջանի բարբառային խոսքին բնորոշ են հնչյունաքերականական ու բառապաշարային զգալի քանակության ընդհանուր հատկանիշներ, որը թերևս արդյունք է Կարնո բարբառի գերիշխող դիրքի և մեծ ազդեցության: Դիտարկված հատկանիշները մեծ կարևորություն ունեն ինչպես բարբառային հայերենի համաժամանակյա, այնպես էլ տարածամանակյա հետազոտության առումներով, լեզվի պատմության առանձին հարցեր մեկնաբանելու տեսանկյունով:

Օգտագործված գրականության ցանկ

Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Ե., «Լույս» հրատ., 1976, 558 էջ:

Աճառեան Հ., Հայ բարբառագիտություն . - Որուագիծ եւ դասաւորութիւն հայ բարբառների, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա – Նոր-Նախիջեւան, հրատ. Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, 1911, 307 էջ:

Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., հ. 4, Բ գիրք, 1961, 543 էջ:

Մանուկյան Մ., Հայաստանի Հանրապետության մարզերը, քաղաքներն ու գյուղերը, Ե., 2013, 1208 էջ:

<https://armstat.am/file/doc/99500008.pdf>:

РЕЗЮМЕ

Общая характеристика диалектной речи Ширакской области

Катвалян Виктор

В статье представлены результаты научно-исследовательских работ, проведенных в 2022-2023 годах в рамках грантовой программы «Диалектная панорама Ширакской области». В регионе используются диалектные единицы ветвей Чр и Ոււ: Говоры ветви Чр делятся на три группы: а) говоры Каринского диалекта, б) говоры Мушского диалекта, в) говоры смешанного типа с элементами Каринского и Мушского диалектов. Все говоры ветви Ոււ относятся к смешанному типу, поскольку имеют также характеристики диалектов ветви Чр. Диалектная речь региона характеризуется значительным количеством общих фонологических, грамматических и лексических особенностей, что, вероятно, является результатом господствующего положения и большого влияния Каринского диалекта.

Ключевые слова: поселение, языковая ситуация, говор, влияние, характеристика, глагольная система, грабар.

SUMMARY

General characteristics of the dialect speech of the Shirak region

Katvalyan Viktor

The article presents the results of research works conducted in 2022-2023 within the framework of the grant program "Dialect panorama of Shirak region". Dialect units of Чр and Ոււ branches are used in the region. The speeches of Чр branch are divided into three groups: a) speeches of the Karin dialect, b) speeches of the Mush dialect, c) mixed-type speeches with elements of the Karin and Mush dialects. All speeches of the Ոււ branch belong to the mixed type, since they also have the characteristics of the dialects of the Чр branch. The dialectal speech of the region is characterized by a significant number of general phonological, grammatical and lexical features, which is probably the result of the dominant position and great influence of the Karin dialect.

Key words: settlement, language situation, speech, influence, characteristic, verb system, grabar.

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՑԱՂՆ ՈՒ ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ՇԻՐԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ**

Թամար Հայրապետյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
բանասիրական գիտությունների դոկտոր
tamar.hayrapetyan@gmail.com

DOI: 10.54412/99399305-2023-75

Բանալի բառեր. Շիրակի ժողովրդական հեքիաթներ, բարբառ, բանահյուսություն, Հայաստան, բանագիտություն, երկու վաճառական:

«Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության IV հատորն ընդգրկում է 65 միավոր հեքիաթ, որից 22-ը գրառվել է Շիրակի դաշտավայրի՝ այժմյան Գյումրի (պատմական Կումայրի, հետագայում՝ Ալեքսանդրապոլ, Լենինական) քաղաքի և նրա շրջակայքի՝ Ախուրյանի, Ապարանի, Ղուկասյանի, Աղինի, Արթիկի շրջաններից: Հետազոտության նպատակն է վեր հանել Շիրակից գրառված հեքիաթներում առկա հասարակական կենցաղի՝ ընտանիքի կազմի, նրա անդամների փոխհարաբերությունների, նիստուկացի, արհեստների և առևտրի մասին հետաքրքիր մանրամասներ:

Նպատակից բխող խնդիրն է՝ խմբավորման սկզբունքի շնորհիվ բացահայտել Շիրակի հեքիաթները միավորող աշխարհագրական, սոցիալ-տնտեսական, լեզվաբարբառային առանձնահատկությունները, սովորությունները, կյանք ու կենցաղի բնորոշ գծերը:

«Մահ չուզող տղան»¹, «Թագավորի պզտի տղեն»², «Դամրճու հեքիաթը»³, «Երկու վաճառական»⁴, «Ռանչպարի տղեն»⁵ և այլ հեքիաթներում ուշագրավ են Շիրակի բարբառի բնորոշ դարձվածքներն ու ոճերը, տնտեսական զբաղմունքներն ու արհեստները, որոնք ունեն տեղական բարբառով անվանումներ:

Շիրակի հացաշատ և հայաշատ դաշտավայրը, որը հնագիտական պեղումների համաձայն՝ Հայաստանի ամենահին մարդաբնակ գավառներից մեկն է, պատմական տարբեր ժամանակներում տարբեր սահմաններ է ունեցել: Տեղագրական, ազգագրական տեսակետից Շիրակի բնաշխարհի հիմնական գավառներն են եղել Վանանդն ու Տաշիր-Չորագետը: Պատմական Շիրակը կոչվել է Անի-Շիրակի թագավորություն, որն իր զարգացման գագաթնակետին է հասել հայոց Գագիկ Առաջին թագավորի օրոք (990-

¹ՀԺՀIV,1963, 434-440:

²ՀԺՀIV,1963, 153-157:

³ՀԺՀIV,1963, 118-125:

⁴ՀԺՀIV,1963, 350-355:

⁵ՀԺՀIV,1963, 126-138:

1020թթ.): Միջնադարյան հայ իրականության մեջ Անին բացառիկ դեր է խաղացել ինչպես Շիրակի, նույնպես և Հայաստանի համար:

Բագրատունյաց վերջին անդրդվելի թագավոր 18-ամյա Գագիկ 2-րդին բանակցությունների պատրվակով Կոստանդնուպոլսում կալանավորվելը և 1045 թ. Բյուզանդիայի կողմից Անիի գրավումը ճակատագրական նշանակություն է ունենում հայ ժողովրդի և հատկապես Շիրակի բնակչության համար, որոնց մեծ մասը օտարների հալածանքներից խուսափելու նպատակով բռնում է պանդխտության և գաղթի ուղին: Թագավորանիստ Անի քաղաքի կործանումն այնքան ցավ է պատճառել շիրակցիներին, որ ժողովրդական հեքիաթներում ավերված տեղավայրերը համեմատվել են Անիի ավերակների հետ և հրաշապատում հեքիաթների հերոսները բանահյուսական կենցաղում կենդանություն են տվել քաղաքին: «Մահ չուզող տղան»⁶ հեքիաթում. «Տղեն ու չոբանը ելան, գնացին: Շատ գնացին, քիչ գնացին, շատն ու քիչը աստված գիտե, մեկ էլ հասան մե Անվա պես ավերակ քաղաքի»⁷:

Տղան ի վերուստ շնորհ ուներ, աստված է կանչում և քաղաքը կենդանանում է. «Իրենք մեկ տեղ սըթըրվան, սապախտան ելան աշին օր քաղաքը կենթանացել, փեթկի պես կըվժվժա:

Թագավորը մարթիք կանչեց, ըսավ.– Լալա-վագիրներ, իմացեք՝ էս քաղաքը էս գիշեր վո՞վ է մտե, բռնեք բերեք իմքովըս:

Լալա-վագիրն ընկան քաղաքի մեջը, ման էկան, ման, տղին ու չոբնին գտան: Չոբանն ու տղեն մեկ-մեկ պատմեցին թագավորին, թե ինչըդ տեսան քաղաքը, ինչըդ կենթանացուցին: Եփ օր թագավորն իմացավ՝ ըդման է, տղին իրան կշեռնորթով օսկի տվավ ու ճամփու դրավ»⁸:

Վերոնշյալ «Մահ չուզող տղան» հեքիաթում տերտերի տղան տեսնում է, որ հայրը մի մահացած մարդու տարավ թաղեց և եկավ տուն: Հարցնում է, թե այդ ինչ արեցիր:

Ըսավ. – Մարթը մեռել էր, տարա թաղեցի:

Ըսավ. – Եփ օր ըդման է, էս քեզի տղա չեմ էղնի և էստեղ չեմ մնա:

Տերտերի տղան ընդվզում է մահվան դեմ, աշխարհեաշխարհ ման է գալիս, հասնում է հուրի աղջիկների երկիր, ապրում էքանի հարյուր հազար տարի»: Բայց մի օր էլ հիշում է իր հայրենիքը, իր հորն ու մորը: Հասնում է իր երկիրը և տեսնում, որ ոչ ոք տեղեկություն չունի իր հարազատներից: Բռնում է վերադարձի ճամփան և կորցնելով աղջիկների տված անմահության երեք խնձորները՝ մահանում է: Հեքիաթն ավարտվում է մարդու կենսաբանական հնարավորությունների ու մահվան օրինաչափ, անխուսափելի երևույթի ժողովրդական հստակ գիտակցությամբ՝ «Եփ օր ծնիլ կա, մայն էլ հետն է»⁹:

⁶Նայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետ՝ ՆԺՀ), IV, 1963, 434-440:

⁷ՆԺՀIV, 1963, 435:

⁸ՆԺՀIV, 1963, 435:

⁹ՆԺՀIV, 1963, 440:

«Հայ մատենագրության մեջ հիշատակություններ են պահպանվել արհեստի տարբեր ճյուղերով (մանածագործություն, ներկարարություն, ոսկերչություն, բրուտագործություն, զինագործություն, դարբնություն) զբաղվող մարդկանց մասին¹⁰, իսկ ժողովրդական հեքիաթներում տեղեկություններ կան նրանց արտադրանքի վերաբերյալ, որոնց մի մասը առևտրի և փոխանակության միջոցով արտահանվում էր հարևան և հեռավոր երկրներ: Բնորոշ է, որ մ. թ. I-II դարերում հայոց լեզուն հարստանում է «շուկա», «խանութ» և առևտուրը բնորոշող այլ ասորական բառերով, ինչպես նաև հեքիաթներում հանդիպող «դուքան» (կողպակ-կրպակ-կուրբա) բառերով, որոնք վկայում են, որ ինչպես Արևելքում, մեզանում նույնպես քաղաքի հիմնական հատկանիշը շուկան է՝ իր խանութներով»¹¹:

«Թագավորի պզտի տղեն»¹² հեքիաթում համանուն հերոսը ի տարբերություն իր ավագ եղբայրների որոշում է աշխարհ տեսնել, աշխատանք ունենալ, հարստանալ և նոր միայն ամուսնանալ. «- Չէ, - կըսե,- ես չեմ պսակվի, տեյմորի, - կըսե,- ես ուրիշ երկիր չէրթամ, ընձի համար գործ չը ճարեմ, փարա, դովլաթ թոփ չենեմ, ընձի համար մարդ չը դառնամ, ես պսակվողը չեմ»¹³:

Ինքնահաստատման փորձությունների հաղթահարման ճանապարհին հերոսը հասնում է այնտեղ, որտեղ կարելի է տեսնել շիրակցու պատկերացմամբ կենսընթացի այն բաղձալի իրավիճակը, ինչին պետք է ձգտի և հասնի ընտանիքի բարեկեցությամբ մտահոգ ցանկացած մարդ. «Չարսու, բազար, մեյդան, լավ տներ, բաղչեք, դյուքաններ, բազազի դյուքանը իրան սարքովը, ատթարինը, բախալինը իրանց սարքովը, էլ դազազի դյուքան, մկիտան, ֆռուն, դամրճնոց դյուրկյարխանա, բիրադի լավ, իրանց դայտի սարքած, հըմը հեչ մեկ դյուքնիմ մեջ էլ մարդ չեն տեսնի»¹⁴:

Տղան ընկերների հետ երկմտում է. «Ախրըր առանց մարդու էլ քաղաք էղնի՞: Էս դյուքան, բազար, ամեն բանը կա ու էս մարդ ընչի չը պտի էղնի մեջը»¹⁵:

Պարզվում է, որ այս ամենին տիրում է վիշապը, որին պետք է հաղթի հեքիաթի նվիրագործյալ հերոսը՝ պաշտպանելով իր ընտանիքի և հանրության նյութական բարօրությունը: Տարբեր նպատակներով ընտանիքի անդամներից մեկի հեռացումը հեքիաթագիտության մեջ հիմնականում մեկնաբանվում է ծիսաառասպելաբանական պատկերացումներով, սակայն այստեղ առաջնային է նաև մշակութային հերոսի սոցիալական դիրքորոշումը:

¹⁰ Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, 1981, 194; Գանձակեցի 1982, 260; Լաստիվերցի 1971, 61-62:

¹¹ **Հայրապետյան Թ.**, 2016, 344-345:

¹² ՀԺՀ IV, 1963, 153-157:

¹³ ՀԺՀ IV, 1963, 153:

¹⁴ ՀԺՀ IV, 1963, 154:

¹⁵ ՀԺՀ IV, 1963, 154:

Բագրատունյաց թագավորության օրոք էր, որ Շիրակում զարգացավ առևտուրն ու կատարելության հասան արհեստները: 18-19-րդ դարերում Ալեքսանդրապոլի բնակչության գրեթե մեծ մասը զբաղվում էր արհեստագործությամբ և առևտրով¹⁶: Ալեքսանդրապոլում արհեստավորներն ու առևտրականները զբաղեցնում էին հատուկ թաղեր¹⁷՝ Սապոնջոնց, Ղասաբենց, Ժամի չարսու (շուկա), Փափաղչոնց, Ափնոց (մանր իրեր ծախլու տեղ), Դամրչոնց (երկաթագործներ), Դյուրգյարենց (հյուսներ), Ղազազենց (ոսկե թելերից կտորներ և գոտիներ պատրաստող), Մազմանենց, Թիքիչոնց, Նալբանդենց, Մարանջոնց (սայլի անիվ շինողներ), Ստանջիք (փայտ վաճառողներ), Բազազխանա, Ղույումջոնց (ոսկերիչներ), Թուրքի չարսու (շուկա)¹⁸:

Ալեքսանդրապոլում միննույն զբաղմունքն ունեցող մարդիկ համախմբվում էին համքարություններում¹⁹: Հետաքրքիր է նկատել, որ 19-րդ դարի 2-րդ կեսի Ալեքսանդրապոլ քաղաքի արհեստների ցուցակը, որը պահվում է Հայաստանի ազգային արխիվում²⁰, համախոս է հեքիաթներում հանդիպող արհեստներին: «Միսո»²¹ հեքիաթի հերոսին «ուստայի» մոտ են տալիս թամբագործի (սամուրճի) արհեստ սովորելու. «Քանիմ տարի ետև սանյաթս (արհեստ) լավ սորվա»²²: Շիրակից գրառված հեքիաթներում դաշտավայրի հնագույն բնակիչները զբաղմունքով ավճի են (ՀԺՀ, IV, 27, 177, 227-228), բաղմանչի (136,169, 249, 256, 441), բազրկյան(123-124,139-140,144,150, 287, 319, 361) բաղնեպան-համամճի (422,486, 420, 422, 485-486), հեքիմ (70, 72, 267, 276, 283, 323, 368-369), գյամբչի (40, 451-454), դամբրճի (56, 121-122, 285), դյուրկյար (68-70), թարզի (68-70), հոտաղ (88, 276-277), ռանչպար (87,126,130-131, 293), դույումճի-ոսկերիչ (251, 254, 264-269), սնդճի (243) և այլն²³: Նույնը տեսանելի է նաև հեքիաթների վերնագրերում՝ «Ավճի Շաբուրիտղեն»²⁴, «Դամբրճու հեքիաթը»²⁵, «Ռանչպարի տղեն»²⁶, «Քյոսեն ու դասպները»²⁷, «Երկու վաճառական»²⁸, «Հալվաճի Գյուզել»²⁹ և այլն:

Կ. Գանձակեցու վկայությամբ՝ մոնղոլների վարած դաժան հարկային քաղաքականության համաձայն արհեստավորները նույնպես հարկատու էին պետությանը³⁰: Շուկա

¹⁶ Աբրահամյան Վ., 1971, 53:

¹⁷ Աբրահամյան Վ., 1971, 37:

¹⁸ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Ն. Նիկողոսյանի ֆ., գ.103:

¹⁹ Աբրահամյան Վ., 1971, 33:

²⁰ Հայաստանի ազգային արխիվ, ֆ.125, գ.6, թ.15-16:

²¹ ՀԺՀ IV,1963,408-414:

²² ՀԺՀIV,1963, 411:

²³ Փակագծերում նշված թվերը ՀԺՀ IV հատորի համապատասխան էջերն են:

²⁴ ՀԺՀIV,1963, 27-46:

²⁵ ՀԺՀIV,1963, 118-125:

²⁶ ՀԺՀIV,1963, 126-138:

²⁷ ՀԺՀIV,1963, 189-191:

²⁸ ՀԺՀIV,1963, 350-355:

²⁹ ՀԺՀIV,1963, 356-362:

³⁰Գանձակեցի 1982, 260:

բերված ապրանքների վրա հարկեր էին նշանակվում և վերցնում էին դամդա (մաքս)³¹: Իսկ Արաբական տիրապետության տարիներին, հատկապես VII-VIII դարերում Օմեյյանների օրոք մտցված հարկահանության նոր՝ բնամթերքի միջոցով կատարվող կարգը, Հայաստանում ստեղծում է տնտեսական ծանր վիճակ: Շիրակից գրանված «Ծանր հարկեր»³² հեքիաթում դերվիշի շոր մտած թագավորի և վեզիրի ծարավը այգեպանը հագեցնում է իր այգում աճող նռան հյութով: Միայն մեկ նռան հյութը բավարարում է երկուսին:

«Բը էդ բաղեն ինչքա՞ն օքուտ կը քաղե բաղպանճին,- մտածում է թագավորը,- Ես մինչի հիմի հարկեր չեմ դրե ըդունց վրեն»³³:

Պալատ վերադառնալով՝ թագավորը հարկադրման է ենթարկում նաև այգեպաններին: Երկիրը հայտնվում է ծանր դրության մեջ: Երկու-երեք տարի հետո ծպտված թագավորն ու վեզիրը դարձյալ այցելում են այգեպանին և ջուր են խնդրում: Այս անգամ այգեպանը մի չորացած նուռ է բերում, քամում է, քամում, բան դուրս չի գալիս: Թագավորը հարցնում է, թե ինչպես եղավ, որ «երկու-իրեք տարի առաջ էկա էս բաղը, ջուր ուզեցի. դու բերեցիր մի նոռվ երկու հոգի կշտացուցիր: Հիմի սաղ բաղեն մեզի ընչի՞ չը կրցար ջուր խմցներ»³⁴:

-Է՛յ,- ըսավ,- դերվիշ բաբա, քու հերըդ օրհնըվի, մեր թագավորը էման բանըմ չէրավ, օր բաղը բաղպանճին տիրեր խնամեր, օր շատ բան էղնիր:

-Ի՞նչ էրավ թագավորը,- հարցուց դարվիշը:

- Ի՞նչ պըտի էներ, հարկերը էնքան դրեց, օր չկրցանք տկեն դուս գայինք, բաղին էլ չաշխատանք, գնաց, չորցավ:

Նորեն թագավորը գնաց թախտը, հարկերը բաշխեց, երկիրը խաղաղացավ, հարստացավ»³⁵:

Հեքիաթն այսպիսի երջանիկ ու խոհեմ ավարտ ունեցավ, բայց ցավոք, Ժողովրդի վերաբերմունքը անխնա հարկահանության, մաքսային տուրքերի վերաբերյալ, ցայսօր էլ արդիական է:

Հայ ժողովրդական հեքիաթների համընդհանուր ճանաչում գտած դիպաշարերին զուգահեռ Շիրակի հեքիաթներն ակամա տեղեկություններ են հաղորդում առ այն, որ Շիրակի դաշտերում հնուց ի վեր մշակել են հացահատիկ, ցորեն: «Միրզա Մահմուտի հեքիաթում»³⁶ համանուն հերոսն իր սիրած աղջկան դներից ազատելու նպատակով նրան կերպարանափոխում է, դարձնում «մի հասած ցորնի հիարտ, քաղվորներ լցված

³¹Աբրահամյան Վ., 1971, 39:

³²ՀԺՀIV,1963, 441-442:

³³ՀԺՀIV,1963, 441:

³⁴ՀԺՀIV,1963, 441:

³⁵ՀԺՀIV,1963, 442:

³⁶ՀԺՀIV,1963, 195-219:

մեջ քաղում էին»³⁷: Միրզա Մահմուտը, հասնելով հոր երկիրը, կախարդական օգնականների շնորհիվ քանդել է տալիս նախկին կիսավեր տները, ջաղացը, այգին և մինչև առավոտ կառուցել է տալիս նորը. «Առավոտ էլի սաղ քաղքի մարդիկ զարմանում էին, թե էլի էս հ'որ էղավ, որ էն քասիբի ալաչուխի տեղ էլի հ'ավալքվա տներ շինվան»³⁸:

Ցուցանշական է, որ Շիրակից գրառված հեքիաթներն իրենց մեջ արտացոլել են տեղավայրի բուսական ու կենդանական աշխարհը, տնտեսական զբաղմունքներն ու արհեստները: Անի քաղաքով էին անցնում առևտրական բազմաթիվ ճանապարհներ՝ Տրապիզոն, Թավրիզ, Պարտավ, Մանազկերտ և այլն: Շիրակցիների պատրաստած արհեստագործական արտադրանքը՝ սառը զենքեր, մետաղե գործիքներ, պղնձե ամանեղեն, եկեղեցական սպասք, պերճանքի առարկաներ ու զարդեր, բրդե գործվածքեղեն, ոսկերչական բարձրարվեստ իրեր, զգալի տեղ էին գրավում արտահանվող ապրանքների մեջ: Հայաստանի հնագույն զենքերից են եղել նետն ու աղեղը, նիզակը, վահանը (հեքիաթներում՝ նետ ու անեղ, նետվանեղ, դայող (աղեղ), մզրախ, դալխան) և այլն:

«Ավճի Շաբուրի տղեն»³⁹ հեքիաթում որդին զարմանում է, թե իր հայրն ինչ մասնագիտություն ուներ, որ այդքան զենք ու զրահ կա տան մի անկյունում. «Էս իմ հերս ի՞նչ զանիաթի էր, որ , - ըսավ մորը, - էսքան սիլլահ կը պահեր:

- Ավճություն կեներ, - ըսավ մերը:

- Ես էլ, - ըսավ, - ավճություն կենեմ հորս պես»⁴⁰:

Շիրակից գրառված հեքիաթներում կենցաղավարում են հարևան երկրների հետ փոխառնչությունների բազում մանրամասներ՝ քարավանային առևտուր, ապրանքափոխանակություն, կնիք, դրամական շրջանառություն և այլն:

Վերոնշյալ «Ավճի Շաբուրի տղեն» հեքիաթում թագավորը պահանջում է, որ որսորդ Շաբուրի որդին իր համար բերի այնքան փղի ոսկոր, որ դրանցով պալատ կառուցվի: Որսորդի տղան հորեղբոր խորհրդով թագավորից պահանջում է քառասուն ուղտ, քառասուն մեծ ջվալ բամբակ, քառասուն տիկ գինի, քառասուն մսագործ՝ համապատասխան գործիքներով. «Էս քյարվանն ընկավ ճամբա գնաց, շատ գնաց, քիչ գնաց, շատն ու քիչն աստված գիտե, զօր գնաց, գիշեր գնաց, տեյմորի հասավ Հնդու երկիրը»⁴¹:

Որսորդի տղան Հնդկաստանում քառասուն ջրավազանի ջրերը միանգամից թափել է տալիս, բամբակով լողավազանի անցքերը փակում և Հայաստանից բերված քառասուն տիկ գինով հարբեցնում «Հնդու երկրի» քառասուն փղերին. «Էհ, գինի ու անսովոր

³⁷ ՀԺՀ IV, 1963, 217:

³⁸ ՀԺՀ IV, 1963, 219:

³⁹ ՀԺՀ IV, 1963, 27-45:

⁴⁰ ՀԺՀ IV, 1963, 28:

⁴¹ ՀԺՀ IV, 1963, 31:

անասուն, բիրադի և սհաթին հարբան ու խաշըլ խոտի պես վար թափան»⁴², իսկ «ղասպները և քառսուն ֆլին և մորթեցին, քերթեցին, ոսկորները բիրադի մսեն բաժնեցին, լցրին բեռներու մեջը, բարձան ու Էլի ետ դարձան գնացին: Գնացին հասան իրանց երկիրը: Տղեն տարավ բեռները թասլիմ Էրավ թագավորին»⁴³:

Շիրակի դաշտավայրի հնագույն բնակիչները «ավճություն», «ավղուշ», «առուտուր» են արել, եկեղեցիներ ու կամուրջներ են կառուցել, իսկ ձմռան երկար ու ձիգ գիշերները հեքիաթներ են հյուսել՝ ազգային կյանքը սեփական հայեցողությամբ տնօրինելու, ամուր պետականության և «թագավորի թախտի» հաստատունության վերաբերյալ: Շիրակն իր ընտանեկան սովորույթներով, կենցաղով ու ապրելակերպով յուրահատուկ շատ գծեր ունի, որոնք անդրադարձ են գտել նաև հեքիաթներում, որտեղ մենք տեսնում ենք, որ անկախ հասարակության մեջ գրաված դիրքից, շիրակցին առավելագույնս պարտավորված է պահպանելու նախնիների ավանդույթները, ծեսերը, սովորույթներն ու հավատալիքները, արժանահիշատակ դեպքերի առիթով ճոխ հացկերություններ կազմակերպել, «ըխթիար ու պառավ» ծնողների համար հոգ տանել և պատվով թաղել նրանց⁴⁴:

Շիրակից գրառված հեքիաթների գերակշիռ մասը հրաշապատում սյուժեներ են: Պակաս ուշագրավ չեն նաև իրապատումները: Հրաշապատում դիպաշարերում ձին, օձը, հավքը լեզու են առնում ու մարդու պես խոսում-խրատում: Հեքիաթի հերոսի ամուսնությունը օձի հետ, որը դեն նետելով մաշկը՝ դառնում է աղջիկ կամ տղա, ունի բացահայտ առասպելական ծագում: Այսպիսի հեքիաթները պատկանում են ժանրի հնագույն տիպին և գալիս են հազարամյակների խորքից:

«Հաբրմանի»⁴⁵ հեքիաթում հալիվորի՝ անտառից հավաքած ցախի հետ մի շահմար օձն աննկատ հասնում է տուն, «ծանտր-ազիգ նստում է թնդրա շուրթ» և մարդու պես լեզու առնելով՝ պահանջում, որ հալիվորը լուսը բացվելուն պես գնա ու թագավորի աղջկան ուզի իր համար:

-Ա՛յ օձ, խելըռար, ի՞նչ էղար,-ըսավ հալիվորը,-ես ո՞վ, թագավորն ո՞վ, գուզես գլուխս էլ զարկել տա թագավորը, դու օձ, աղջիկը քու ի՞նչ բանդ է:

-Ես օձ չե՞մ, դու հըլա խաբար չես, թե ես ո՞վ եմ, դու գնա՞ ուզե, քու ի՞նչ բանդ է, թե որ չը տվեց, էն վախտը ես գիտեմ՝ ինքը»⁴⁶:

«Չարզանդ թագավորի աղջիկը»⁴⁷ հեքիաթում պառավն իբրև փոխադրամիջոց առաջարկում է իր «շալն ու յայլուղը», բայց ձին լեզու է առնում և ասում. «Չէ մերս, դու ու խանումս նստեք շալին, Ասլան աղես էլ իմ թամքին, աստված ընձի էլ թոնելու թևեր

⁴² ՀԺՀIV,1963, 32:

⁴³ ՀԺՀIV,1963, 32:

⁴⁴ ՀԺՀIV,1963, 219:

⁴⁵ ՀԺՀIV,1963, 15-26:

⁴⁶ ՀԺՀIV, 1963,16:

⁴⁷ ՀԺՀIV, 1963, 94-104:

տվեց, կթոնիմ, - էս ըսավ ու թները բացեց: Ըղման էլ էրին ու թռան, էկան թագավորի քաղքի քյանարը իջան»⁴⁸:

Շիրակից գրառված հեքիաթներում ցուցանշական է արխայիկ մտածողության առկայությունը, ինչն էլ կարելի է մեկնաբանել իբրև վաղնջական հասարակություններում ծիսաառասպելական պատկերացումների արդյունք:

Վերոնշյալ գիտական հրատարակության համար բնագրեր են ծառայել հիմնականում Երվանդ Լալայանի 1911-1916թթ. ղեկավարած բանահյուսական խմբարշավի նյութերը: Գրառված հեքիաթների ձեռագիր հավաքածուն այժմ պահպանվում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվի Ե. Լալայանի ֆոնդում:

Շիրակից գրառված ժողովրդական հեքիաթները պատմել են Սարգիս Միքայելյանը, Աբրահամ Ավետիսյանը, Գարեգին Հարությունյանը, Արտավազդ Իգիթյանը, Արսեն Տեր-Պողոսյանը, Ավելի Մելիքը: Շիրակի բանահյուսական ժառանգությունը գրառել և անվերադարձ կորստից փրկել են Երվանդ Լալայանը, Աղեքսանդր Մխիթարյանն ու Աղեքսանդր Ափրիկյանը, Համբարձում Տեր-Վարդանյանն ու Վարդ Բղոյանը:

Հայ ժողովրդական հեքիաթների դասակարգումն ըստ տեղագրական և ազգագրական հատկանիշների բխում է մեր ժողովրդի պատմական կյանքի որոշ հանգամանքներից: Հեքիաթների խմբավորման այս սկզբունքի շնորհիվ ի հայտ են գալիս տվյալ խմբի, կոնկրետ դեպքում՝ Շիրակի հեքիաթները միավորող աշխարհագրական, լեզվաբարբառային, սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները, սովորությունները, կյանք ու կենցաղի բնորոշ գծերը:

Շիրակի ժողովրդական հեքիաթները Հայաստանի տարբեր շրջաններից գրառված հեքիաթների ազգային երկացանկի բաղկացուցիչ մասն են կազմում և մեր բանահյուսական ավանդության հետ ունեցած մոտիվային բազմազան զուգահեռներով, վառ երևակայությամբ, էթնոմշակութային ինքնատիպ լուծումներով պատմաճանաչողական մեծ արժեք են ներկայացնում:

Օգտագործված գրականության ցանկ

Աբրահամյան Վ., Հայ համբարությունները Անդրկովկասի քաղաքներում (18-20-րդ դարի սկիզբ), Ե., 1971:

Արխատակես Լաստիվերցի, Պատմություն, Թարգմանությունը՝ Վ. Գևորգյանի, Ե., 1971:

⁴⁸ ՀԺՀԿ, 1963, 102: Թռչող յայլուղի, ձձումի, ձիու, հավքի միջոցով այս ու այն աշխարհ տեղափոխվելու հավատալիքը իր խորքում կրում է նաև տիեզերքը մարդուն ծառայեցնելու տարերային իրապաշտական ձգտումներ:

Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Առաքելյանի, Ե., 1982:

Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. IV, Շիրակ, պատրաստեց և նախաբանը գրեց Մ. Ս. Մկրտչյանը, Ե., 1963:

Հայրապետյան Թ., Արքետիպային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, Պատասխանատու խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ս. Հարությունյան, Ե., 2016:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Ն. Նիկողոսյանի ֆ., գ.103:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ.125, գ.6, թ.15-16:

Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը՝ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Ե., 1981:

РЕЗЮМЕ

Общественная жизнь и ремесла в народных сказках ширака

Айрапетян Тамар

Классификация армянских народных сказок по локальным и этнографическим признакам связана с некоторыми обстоятельствами исторической жизни нашего народа. Народные сказки Ширака - составляющая часть армянского народного сказочного наследия, со всевозможными мотивными параллелями, ярким воображением, этнокультурными оригинальными решениями, представляющими большое историческое и когнитивное значение. Цель статьи – исследовать сказки, записанные из Ширакского региона для выявления интересных подробностей, касающихся общественной жизни, в частности, устройства семьи, взаимоотношений между членами семьи, промыслов и ремесел. Задачи исследования - сгруппировать и выявить географические, социально-экономические, языковые особенности, обычаи и особенности образа жизни ширакских сказках. В сказках, например в таких как, «Мальчик, который не хочет умирать», «Младший сын царя», «Сказка о кузнеце», «Два купца», «Сын земледельца» и другие сказки отличаются устойчивыми выражениями, характерными фразами и стилем Ширакский диалект; здесь представлены занятия и ремесла, имеющие специфические наименования на местном диалекте.

Ключевые слова: Народные сказки Ширака, диалект; фольклор, Армения, фольклористика, фольклор, Армения, два купца.

SUMMARY

Public life and crafts in Shirak folk tales

The classification of Armenian folktales according to regional and ethnographic peculiarities may arise from some circumstances of our nation's historic life. Folktales of Shirak are inseparable part of Armenian national folktale heritage collected from different regions. They have great historic and cognitive value, carrying parallels on the level of motifs, vivid imagination and representing ethnocultural unique solutions. The aim of the paper is to investigate folktales collected from Shirak region for bringing out details concerning the social life (family structure, relationships between family members, trades and crafts). The objectives of the research are to group and identify the geographic, socio-economic, linguistic features, habits and overall lifestyle peculiarities that are common in Shirak folktales. In folktales, for example in "The Boy Who Doesn't Want to Die", "The King's Youngest Son", "The Tale of the Blacksmith", "The Two Merchants", "The Farmer's Son" there are set phrases peculiar to the Shirak dialect, as well as there are mentions of occupations, trades and crafts that have their specific names in the local dialect.

Keywords: Folktales of Shirak, dialect, folklore, Armenia, folklore studies, The Two Merchants.

ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՄՐՈՒ ԵՐԵՎԵԼԻՆԵՐԻ ԲԱՆԱՅՑՈՒՄԱԿԱՆ
ԴԻՄԱՆԿԱՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՓՈՐՁ

Կարինե Սահակյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
ավագ գիտաշխատող

ՇՊՀ հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոն
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
sahakyanani@mail.ru

Ռոզա Հովհաննիսյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
գիտաշխատող
vard-rosa@mail.ru

DOI: 10.54412/99399305-2023-85

Բանալի բառեր. երգիծական բանահյուսություն, հումոր, մականուն, տեղական զրույց, պատում, սյուժե, ստեղծարար քաղաք, կոլորիտ:

Շիրակի, ի մասնավորի՝ Գյումրու երգիծական բանահյուսությունն առավելապես արտահայտվում է բանավոր երգաստեղծության հետևյալ ժանրերում՝ տեղական զրույցներ, անեկդոտներ, ժողովրդական խաղիկներ, կշտամբանքի խոսքեր, մականուններ, առած-ասացվածքներ և այլն: Առհասարակ Շիրակի մարզում բանահյուսական տեքստը գերազանցապես դրսևորվում է ծեսի, սովորույթի ու ավանդույթի համատեքստում՝ պատումի տարաբնույթ ձևերով ու ազգաբանական շերտերով: Շիրակի երգիծական բանահյուսության նմուշների քննությամբ կարելի է հավաստել, որ ստեղծարար քաղաք Գյումրին իր հոգևոր ծննդաբանության մեջ ամփոփում է Ալաշկերտից, Ներքին Բասենից, Կարինից ու Կարսից վերաբնակեցվածների քաղաքային տիպի երգիծական բանահյուսությունն ու հումորը: Շիրակի երգիծական բանահյուսության նմուշներում առկա են հանկարծաստեղծության տարրը, ինքնաստեղծման տաղանդը:

Ըստ էության՝ մականուններն ու տեղական զրույցները քաղաքի կենդանի մատյաններն են՝ խտացված հումորով: Հորինումի տարերքով բռնված՝ գյումրեցիները նույն զրույցն ու անեկդոտը ամեն անգամ կարող են պատմել նոր տարբերակով, այդպես ժողովրդական բանահյուսության կարևոր հատկանիշներից մեկը՝ ստեղծագործական հարստացումը, դարձնելով շարունակական:

Գյումրի-Ալեքսանդրապոլի երևելի գերդաստանների էթնոմշակութային կերպարներից էին Պետրոս Ձիթողյանը, Դրամփյանները, Կարանյանները, Չախմախյանները, Ծաղիկովները, Մազմանյանները, Սանոյանները, Քյանդարովները, Տարախյանները և

Էլի շատ-շատերը, որոնց մասին տեղական գրույցներն ու պատումները գերազանցապես զրի ենք առել նախաաղետյան շրջանում քաղաքի հնաբնականներից:

Ալեքսանդրապոլում հայտնի էին այնպիսի թաղամասեր, որոնք կրում էին նշանավոր տոհմերի անունները, որոնցից շատերը ավելադիր անուններ էին՝ գերդաստանի խորհրդանշանային բնութագրով: Ըստ էության, ընտանիքն սկսվում էր թաղից /Բոշի թաղ, Թոփի դար, Ձորի բողագ, Փափախանա, Սլաբոդկա, Վերի և Վարի չարսուներ և այլն/:

Անդրադարձել ենք Գյումրի-Ալեքսանդրապոլի նշանավոր գերդաստաններին՝ որպես ավանդույթների և բնավայրի պատմության կերտողների ու յուրատիպ տարեգիրների, քանի որ Գյումրին հին ու հողին ամրորեն արմատակալած գերդաստանների մի օրրան է՝ տոհմիկ հատկանիշներով, նշանավոր գերդաստաններին պատկանող առանձնատներով, մականուններով, ծեսերով ու սովորույթներով, ավանդույթներով ու հավատալիքներով:

Կարելի է ասել, որ Գյումրի-Ալեքսանդրապոլի գերդաստաններից յուրաքանչյուրը նրա պատմության մի էջն է՝ Գյումրին դարձնելով տոհմատունների քաղաք:

Ինչպե՞ս հասկանալ Գյումրու կերպարային տիեզերքը, ինչպե՞ս թափանցել նրա սև ու վարդագույն տուֆե պատերից ներս, այն պատերի, «որտեղ քարերն իրար դեմ էնպես կուգան, օր կթվա՝ իրար կսիրեն...»:

Գուցե նախասահմանության հրաշքն այստեղ է՝ որպես հիշողության դարձ:

Քաղաքի բոլոր լուրջ խոսակցությունները տեղի էին ունենում միկիտաններում և սրճարաններում (դայֆախանաներ), որոնք սուկ հանդիպավայրեր չէին: Կանանց շուրթերի ցերեկվա խոսակցությունը պատվելով երեկոյան տեղափոխվում և վավերացվում էր այստեղ՝ տղամարդկանց շրջանում: Այսպես՝ քաղաքում խիստ հարգի Տիրատուրենց Մարգարի դայֆախանում, որտեղ հավաքվում էին առաջին գիղի տղամարդիկ, Սիրուն Սեթոն խոստանում է իր աղջկան կնության տալ ինչ-որ մեկին, որոշվում է մինչև իսկ նշանադիր օրը, բայց աղջիկը չի համաձայնվում: Հաջորդ օրը Սեթոն գալիս է դայֆախանա, գլխարկը հանում, դնում է հատակին և ասում՝ թո՛ւ՛ք վրայից:

Ավանդական կենցաղում «գլխարկ գցելը» համազոր էր պատվազուրկ լինելուն, բայց Գյումրին պարադոքսների քաղաք է, նաև նորակերպությունների, գյումրեցին՝ որքան պատվախնդիր է, այնքան էլ՝ առաջադեմ:

Քաղաքն ամեն օր արթնանում էր մի նոր մոտիվով: Ու մի օր էլ քաղքի լոթիփոթիների, դարաչուխալի տղերքի մեջ հայտնի Իզրիտով Արշալույսի *խանչալի քարնընկալ*. Մարալենց տղերքը, Բուխարաջոնց Համբոն ու Զանգուկենց Սեթը փախցրին Արշալույսի քրոջ աղջկան, մորը հրեցին, գցեցին ձյունների մեջ ու տարան սիրուն Մայային: Այս առիթով էլ քաղաքը չուշացրեց իր հոմորախառը երգը. դաֆչի Թաթոսը խփում էր դափը ու սազանդարների հետ երգում.

*Ես Թաթոսն եմ Մուրադենցեն,
Աղջիկ ուզի Փլավենցեն,
Պատգամ դրկի Ջամուշենցեն,
Տարա՛ն Մայայիս, տարա՛ն:*

Իսկ ովքե՞ր էին քաղաքի երևելիները, ո՞րն էր նրանց ֆանտազմն այս աշխարհում, հասցեատե՞ր էին այս մարդիկ՝ Ձիթողյանները, Ծաղիկյանները, Տեր-Ավագովենք, Քյանդարովենք, Խոյեցոնք, Քեշիշյանները, Դրամփյանները, Սանոյանները, Կարայանները, Սելյանովները, էլի՛ բոլորը: Որքա՛ն մականունն ունեցող տոհմաձառեր՝ հրաշալի արարմունքներով ու պտուղներով: Պատմում են՝ ինչպես մեծահարուստ Պետրոս Ձիթողյանն առավոտյան շրջում էր քաղաքի շուկաներում՝ Վերի ու վարի չարսուններում՝ ձգտելով ի մոտո ծանոթանալով բնակիչների կացությանն ու ապրելակերպի հոգեբանությանը: Շուկան նրա համար կյանքի ուսումնասիրության յուրօրինակ կենտրոն էր: Հաջորդ օրն աննպաստ վիճակում գտնվող գյումրեցիները վայելում էին նրա ուղարկած բարիքները՝ օրհնելով անանուն բարերարին:

Գեղեցիկ արարմունքներով հռչակված այս մարդն ուներ նույնքան գեղեցիկ մի դուստր: Նա միակն էր քաղաքում, որի ճակտնոցը զարդարված էր ադամանդե քարով, բախտի ցուլուն քարով, որ հավելում էր աղջկա գեղն ու հմայքը: Սոֆիկին երագոսփրատածողները շատ էին և նրա գեղեցկությանը վայել երգեր էին հյուսում, անհնարինի սահմանը հասող երգեր.

*Աչքով էրի, դուրս կանչեցի Սոֆիկիս,
Թուշը պագի, տուն ճամփեցի Սոֆիկիս,
Լայ-լայ, Սոֆիկ, լայ-լայ,
Լայ-լայ, սիրուն, լայ-լայ...*

Ահա և ներսի ու դրսի անուն ունեցող տղերքը՝ Պոլոզ Մուկուչն ու Ծիտրո Ալեքը (հայտնի գվարձախոս-կատակաբաններ. Պոլոզ Մուկուչին մի առիթով հարցնում են՝ ընչի՞ բոլոր գյումրեցիները երկու անուն ունին, կպատասխանե՛ մենք բացի մարդու դուրսը աշելուց, ներսն էլ կաշեն), Արդար Մանուկը, որն իր մականունն ստացել էր Մբ Ամենափրկիչ եկեղեցու խաչն ի գագաթ հանելու համար, Գյուման Կարոն (հույս էր բոլորի համար), Չանգի Խաչոն (Ալեքսանդրովսկու անկյունում խանութ ուներ), Յառի Մարգարը, Կախեթի Մուկուչը (գինու սկլադ ուներ), Այհայը՝ Խաչատուրը (սարթ մարդ էր, փողոցով անցնելիս կանայք ոտքի էին կանգնում: Մի անգամ հարսներից մեկը տեղից չի բարձրանում, զարմանքով ասում է՝ այ-հա՛յ, էս ո՞ւմ հարսն է, որ ոտքի չի կայնի ընձի տեսնելուց: Հին քաղաքի թիվ 14 փողոցը նրա անունով ցայսօր էր ժողովուրդը կոչում է Այհայի դար): Սելավի Ակոն. ապրում էր Չորի թաղում. մի օր Գյումրիում սելավ է ելել, Ակոյի կնկան ու երեխին ջուրը օրոցքով քշել տարել է: Պատմում են՝ Սելավի Ակոգուլար,

կատարվիր ու կսեր՝ թուխար ձագով եմ կորցրել: Գերեզմանի քարին էլ գրած է՝ Սելավի Ակո: **Գաթաճի Կարոն**. ֆուռ են ունեցել, կպատմեին՝ ընպես գաթա են թխել, աբրեշումի նման կհալիր բերնիդ մեջը: Ղասաբ Համոն (Պիճիկյան). կովը հեռվից տեսնիր, ճիշտ կսեր՝ քանի կիլո կեղնի: **Ղարիբ Կարոն**. ոսկերիչ էր, ծնվել էր Էրզրումում, տեղափոխվել Կարս, ապա Ալեքսանդրապոլ: Քանի որ ուրիշ քաղաքից էր եկել, ըդպես էլ ղարիբ մնաց, չձուլվեց էս քաղքին: Մումճի Աբրահամը, պատվախնդիր ու հպարտ Երկան Ալեքը, Կոնկի Գիրքորը (կառապան), խանութպան Ճերմակ Համոն՝ ճերմակ երեսով ու ճերմակ խալաթով, և էլի շատ ուրիշներ: Նրանց շուրջ ամեն պահի ու ակնթարթի իմաստավորմամբ ոտաց վրա ստեղծվում էին պատմություններ, տեղական զրույցներ, չափածո երգեր, երբեմն էլ հեքիաթի սկսվածքով.

*Էղել է, օր էղել է,
Ճերմակ Համոն խելըռել է,
Ես ի՞նչ էնեմ, խելըռել է,
Դու ի՞նչ էնես, խելըռել է,
Կնիկը տունը մոլըռել է...*

Կան մականուններ, որոնք տրվում էին ամբողջ տոհմին ու գերդաստանին. տիպական մի անձի տրվող բնութագրումն ընդհանրական էր դառնում գերդաստանի համար, այսպես, Անարժան Հարուստենք (ըստ ժողովրդի՝ էդ հարստությանն արժանի չէին, քանի որ քրտինքով չէին աշխատել. գտել էին), Միլիոն Մանեթենք (մե մանեթով հաց են ծախել. մանեթ-մանեթ՝ միլիոն մանեթ), Բոբլիկենք (թոռի պատմածով՝ պապս իր հարսանիքին սարքած սեղանների վրա ուրախությունից բոբլիկ ոտներով էնպե՛ս է պարել, որ ոչ մի ավսե տեղից չի շարժվել. դրա համար էլ մերոնց Բոբլիկենք են ասել):

Իսկ ովքե՞ր էին քաղաքի տատմերները. Դայեկ Նոյեմը, Հեղնարը, ինչպես նաև մանկաբարձության արվեստի մեջ հայտնի Ջնգոն: Նրա անվանն են առնչվում մինչև այսօր էլ քաղաքում կենցաղավարող <<Ջնգոյի վարտիք>> արտահայտությունը, նաև անգիր, քողագերծ մի պատմություն, որը շատ տարբերակներով է հայտնի: Վկայաբերենք ամենատպավորիչը. Ավդալենց Թաթոսի կինը Ջնգոյի թեթև ձեռամբ ցանկանում է ընդհատել հղիությունը: Իբրև շնորհակալագին՝ Ջնգոյին է նվիրում կապույտ քարով իր նշանի մատանին: Վերջինս էլ այդ մատանին տալիս է իր սիրեկանին: Մի օր հայտնի դայֆախանաներից մեկում Ավդալենց Թաթոսն իր կնոջ մատանին նկատում է ուրիշ տղամարդու մատին, թասիբին կեր չէնող՝ գյումրեցին անխոս ու լուռ դուրս է գալիս, գնում է տուն և առանց բացատրություն պահանջելու կնոջը սպանում: Որոշ ժամանակ անց Թաթոսը ճշտում է իրողության մանրամասները. մեղքից թմրում է և անձնասպան լինում

(ի դեպ, Պեչնիկ Ավդալենց Թաթուսի՝ որպես օջախի պատվախնդրություն մարմնացնողի յուղաներկ կտավն այսօր էլ պահվում է Կումայրի արգելոց-թանգարանի ֆոնդերում)¹:

Թափանիվի պես օրը ցերեկով Գյումրի քաղաքում պտտվում է հումորի թևերով բանավոր ասքը, առտնին հարաբերությունները գեղարվեստական միջավայր են դառնում, սովորական մարդիկ՝ ֆիգուրներ, բանավոր հյուսվածքն իր մեջ է առնում մինչև իսկ քաղքի հրապարակ դուրս եկած պարզ ու շիտակ խենթախոսներին, որովհետև գյումրեցին գիտե սիրել ու փայփայել նաև իր... խելառին. հոգու փշուրն անգամ իր համար արժեք ունի...

Մարդկանց կյանքն այս քաղաքում նման է նովելի դիպաշարի՝ սրընթաց ու անսպասելի ավարտով: Մինչև էսօր էլ, բերնեբերան՝ հազար բերան, ժողովրդի հիշողության մեջ Սբրլ Ավոյի սուտ ու ճիշտ կերպարն է: Եղբորը հանիրավի կդատեն: Սբրլ Ավոն կմոտենա դատավորին, կըսե՝ դատավոր ջան, քու էրածդ դատը ընձի դուր չեկավ: Ես էլ իմ դատս պիտի էնեմ: Ու դանակը դատավորի կողը կը կոխե:

Կան տեղական գրույցներ, որոնք ժամանակի հոլովություն ստացել են դարձվածքային արժեք՝ վկայաբերվելով իբրև վերախմաստավորված արտահայտություն, ինչպես Քյոչակենց քյամարը: Քյոչակենք վեց ախպեր էին. վեց ախպերով մե չքնաղ քյամար՝ ունեին: Ամեն մեկը փորձում էր առավոտ մյուսներից ավելի վաղ արթնանալ, որպեսզի այդ օրն ինքը վայելեր արծաթե գոտու հմայքը: Գուցե հմայքի գաղտնիքը գոտին պատրաստողի՝ Մաշտի Գուրգենի հոր՝ Տարախյան Մարտիրոսի վարպետության մեջ էր: Ժողովուրդն ասում էր. «Ըդպես մարդ ո՛չ ծնվել է, ո՛չ էլ կծնվի. էդ մատները հողը չպտի մտնեին»:

Ուշագրավ է, որ շուն զարկելու փեշակն անգամ այս քաղաքում անցնում է ժառանգաբար: Շուն զարկող Կըղկըղ Խչոյի տղա Հարությունս շարունակում է հոր գործը, և նրա շուրջ տեղական գրույցները հայտնի են բացառիկ հյութեղությամբ՝ վկայելով քաղաքի հասարակ մարդուն բնորոշ վարքագիծն ու հոգեբանությունը: Շուն զարկող Հարություն, այսպես ասած, պասպորտ չունեցող, թափառող շներին կրակում էր և ամեն զարկած շան պոչի դիմաց ստանում աշխատավարձ: Բայց մտածում է. «Ընձի միշտ կմեղադրեն անմեղ հայվաններին սասկըցնելու մեջ: Բայց ես... ես, ճիշտն ըսած, մտածել եմ. աշքս թաք ըդոնց պոչերի վրա է... Ընչի՞ գեշ մարդ էդնիմ: Առանց էն էլ շան կյանք է իրա՛նցն էլ, մե՛րն էլ... Է՛, ես էլ փափախ կենեմ. շանը չեմ զարգե, պոչը կկտրեմ, կհանձնեմ»:

¹Մահակյան Կ., Հովհաննիսյան Ռ., Բառ ու բան, Գյումրի. քաղաքը և մարդիկ, Գյումրի, 2009, 456 էջ:

Ու այսպես տարին տարու վրա քաղաքի մեջ ավելանում է պոչը կտրած շների թիվը: Եվ զրո ու փրսն էն մասին, թե Հարութն էս շների պոչի գինը շուտո՛ւնց է կերել, մեկ-մեկ կհասներ նաև Հարութի ականջին: Ինքն էլ ասողի հետ կխնդար՝ ըսելով. «Շատ անգամ չիդեին, օր շուն զարգող Հարութը ես եմ: Ու եղ էր լավ»²:

Իսկ ովքե՞ր էին քաղաքը քաղաք դարձնող ձեռքերը. դերձակ Ֆանտազի Արտաշը, որն իր մականունն ստացել էր երագում շորերի ֆանտաստիկ մոդելներ տեսնելու շնորհիվ: **Շյապա կարող** Նանիկը. տակավին պահպանվում են նրա կարած շյապաների ձևվածքներն ու կաղապարները: Օսկի կարող Ֆլորը. ոսկեթել բուսանախշերով գոգնոցի երկու ծայրերին կլապիտոն էր ասեղնագործում, վարդակներով թանթանա,գոտի՝ <<Տ վայելումն>> մակագրությամբ: **Փափախչի Գարեգինը**. իր տեսակի մեջ մտավորական մի մարդ, որ, կարն ու գիրքը կողք կողքի, փափախ էր կարում: Այսօր էլ ընտանեկան մասունքի պես պահպանվում է նրա և խորոտ ու կոլոտ Աշխենի հարսանյաց հրավերը: Երբ Գարեգինի քեֆը քոք էր լինում, ինքնամոռաց ու տնկոզ երգում էր.

*Երթանք կալը, բռնենք պարը, խանրաջի՛,
Դու սիրուն ես, քան քու տալը, խանրաջի՛:*

Իսկ ո՞վ էր քաղաքին վերարկու հագցնում.**Դրագոն Կարոն՝** մեծղի մի արարած, զրրբով ու զարզընդով մարդ, որ դռնեն ներս չէր մտնի. իր փառահեղ մարմնի համար Դրագոն էին ասում: Քաղաքն ուներ նաև թարգիներ՝ տեղական տարագներ կարողներ: Եվ բնավ պատահական չէ, որ Ալեքսանդրապոլում բազմաթիվ էին արհեստներով, զբաղմունքով, բնավորությամբ ու արտաքին հատկանիշներով պայմանավորված թե՛ մականունները և թե՛ անուն-ազգանունները (Տարախյան, Դուրգարյան, Փալանջյան, Դարբինյան, Ալանակյան և այլք):

«Ալեքսանդրապոլի արհեստավորական կազմակերպություններում ամրագրված ու կենսագործվող կանոնակարգեր կային՝ մի քանի բնորոշ առանձնահատկություններով: Ձեռնադրության ծեսի արդյունքում յուրաքանչյուր արհեստ ներկայացնող վարպետացուն պահպանում է իր մկրտության կամ ավագանի անունը, որի դիմաց դրվում է «ուստա» կոչումը, օր.՝ ուստա Թաթոս, ուստա Մկրտիչ և այլն: Դրությունն այլ է աշուղների պարագայում: Վարպետության աստիճան ստացած աշուղն իր ուսուցչից ստանում էր աշուղական մականուն. Սերովբեն դառնում է Ջիվանի, Սուքիասը՝ Խայաթ և այլն: Այս ավանդույթը շարունակվեց խորհրդային և հետխորհրդային տարիներին, երբ համքարություններն ու բազմաթիվ արհեստներ ու զբաղմունքներ վաղուց վերացել էին:

² **Հովհաննիսյան Ռ.**, Շուն զարկող Հարութը, //«Եղեգանփող» ՀԳՄ Շիրակի մարզային մասնաճյուղի պարբերաթերթ, հունիս, 2021թ.:

Խորհրդային տարիներին Ալեքսանդրապոլում մեծ անուն վաստակած աշուղ Մալուլի թոռը՝ Գեղամ Մարտիրոսյանը, ձեռնադրվեց աշուղ՝ Իգիթ անվամբ, որն իր հերթին ձեռնադրել է լենինականցի և շիրակցի մի շարք աշուղների»:³

Գյումրի-Ալեքսանդրապոլի հմայատիպերի մեջ ահա բարձրանում է մարմնի և հոգու դեղ ու մահիլամ պատրաստողի՝ **իթենց Սոֆոյի** (1883-1985թթ.) կերպարը: Պապերը գաղթել են Մուշից, ծնողները ծնվել են Ալեքսանդրապոլում: Ներքնատեսությամբ օժտված իմաստուն կին էր, ունեցել է ինը զավակ: Տիրապետում էր ժողովրդական դեղամիջոցներով բժշկելու արվեստին. բուժում էր յաման յարա, բկացավ, կարմիր քամի, քարիտեց, էգ ու որձ դժվարբուժելի ցավեր, կերցավ, սզու, դոլինջ (մեջքացավ), վարամացավ և այլն: Հայտնի ոսկրաբույժ էր (սնխչի), գիտեր հմայություններ, գուշակություններ, վախ բռնել: Եղել է թաղի տատմերը: Իգիթենց Սոֆոյի առեղծվածն ու տատմերության մոգականությունն առավելապես առնչվում էր Աստվածածնա կաթքարի հետ, որը՝ իբրև սրբություն, նրան բերել էին Երուսաղեմ ուխտ գնացողները. սպիտակ ու փխրուն այս քարը ջրի մեջ զցելիս մասամբ լուծվում էր, և ջուրը կաթնագույն էր դառնում: Հետո տալիս էր սակավակաթ կանանց՝ հաղորդելով կաթնաձիրության, կաթնառատության շնորհ:

Պատմում են, որ նա ծննդկանի ցավերը թեթևացնելու համար իբրև նմանակման հմայություն բացում էր աղբյուրը ու հոսող ջուրը մկրատով երեք անգամ կտրում: Նա նաև երազադատք էր...

Գյումրին նաև կանխասացների ու գուշակների քաղաք է եղունգ նայող Պոլոյենց Շողոն, երկու բուր մատներն իրար միացնելով՝ ապագայի իմացության էկրան էր ստեղծում և գուշակություններ անում. եղունգի մեջ պատկեր էր տեսնում, նույնիսկ ցորենի հատիկ: Գարի գցող Եվդոսը. երեք անգամ տալիս էր Աստծո անունը և գարիների դասավորությամբ գուշակում էր սրտի նպատակը: Մաղ գցող Արաքը. հոգու աչքերով էր տեսնում, օգնության էր կանչում Ղալիչվա Կարմիր Ավետրանին: Թիզ չափող Երանյակը, իսկ նյութական կորուստի դեպքում դիմում էին **ռամ գցողի** օգնությանը:

Այս քաղաքում անեկդոտն ու զվարճախոսությունը գիրկընդխառն են. նրանց պյուժեներում թիրախը երբեք հիմարությունը չէ, այլ խելացի խորամանկությունը, մտքի աճպարարությունը՝ խորքում միշտ մնալով ազնիվ: Երբեմն անեկդոտը կառուցում էին տրամաբանական խախտման վրա: Տեղի է ունենում պատահական հատկանիշներով սխալական ճանաչում կամ պատահական հասցեագրումով գործողություններ: Չափազանցություններն ու խոսքի ուռճացումը, ինքն իր շուրջ անեկ-դոտային միջավայր ու զրույց հյուսելը մնում են գյումրեցու նախասիրությունների դաշտում: Խոսքն այնպես է կառուցում, որ տեքստը նույնիսկ իր համար անսպասելի է: Փոքր պյուժեների մեջ անգամ

³Աղանյան Գր., Հարությունյան Հ., Ալեքսանդրապոլի աշուղական արվեստ և համբարական ավանդույթ, Հյուսիսային Հայաստանը պատմության խաչուղիներում (պատմամշակութային համադրություններ), Միջազգային երկրորդ գիտաշողով, Նյութերի ժողովածու, էջ 204:

գտնում է զարմանալին՝ թվացյալ աննշան իրողությունները դարձնելով «մազալու» բան: Այսպես՝ **Գմփրո Օնիկը** /Ղարագյոզյան/, որը շատ գեր մարդ էր, մեռնելուց առաջ ասել է. «Դարդս մեռնելը չէ, ըսա քաղաքը ֆորմից չընկնի»: Հորինումի տարերքով բռնված՝ նույն զրույցը, անեկդոտը ամեն անգամ գյումրեցիները կարող են պատմել նոր տարբերակով: Այսպես՝ Բաթում Մարտիրոսը կյանքի մեջ մենակ Բաթում է գնացել: Ով ինչ կխոսեր, ինքը Բաթումից կպատմեր:

Գյումրեցու հանկարծաստեղծ տեքստերում շարունակ բացահայտվում է նրա մտքի տարածությունը: Մինչև իսկ սահմանային իրավիճակներում նա դրսևորեց անհնարին պահերի լավատեսություն: Ինքն իրենից բարձրացավ ծիծաղով՝ իր իսկ կյանքը դարձնելով պատումի առանցք:

Օգտագործված գրականության ցանկ

Սահակյան Կ., Հովհաննիսյան Ռ., Բառ ու բան, Գյումրի. քաղաքը և մարդիկ, Գյումրի, 2009, 456 էջ:

Հովհաննիսյան Ռ., Շուն զարկող Հարությունը// «Եղեգան փող» ՀԳՄ Շիրակի մարզային մասնաճյուղի պարբերաթերթ, հ.177, հունիս, 2021թ.:

Աղանյան Գր., Հ. Հարությունյան Հ., Ալեքսանդրապոլի աշուղական արվեստ և համբարական ավանդույթ //Հյուսիսային Հայաստանը պատմության խաչուղիներում (պատմամշակութային համադրություններ), Միջազգային երկրորդ գիտաժողով, Նյութերի ժողովածու, էջ 204:

РЕЗЮМЕ

Прозвища как попытка создания фольклорного портрета видных гюмрийцев

Саакян Карине
Оганнисян Роза

Сатирический фольклор Ширака выражается преимущественно в следующих жанрах устного творчества: местные сказания, шутки, народные игрища, слова упрека, прозвища, пословицы-поговорки и др. В целом фольклорный текст Ширакского района в основном проявляется в контексте обряда, обычаев и традиций, с различными формами сюжета и этнологическими слоями. Исследуя образцы сатирического фольклора Ширака, можно подтвердить, что творческий город Гюмри обобщает в своей духовной генеалогии сатирический фольклор городского типа и юмор переселенцев из Алашкерта, Внутреннего Басена, Карина и Карса. В образцах сатирического фольклора Ширака присутствует элемент внезапного творчества /импровизации/, талант самотворчества. По сути, прозвища

и местное сказание — это живые книги города, сгущенные юмором. Гюмрийцы, охваченные стихией сочинительства, одни и те же сказ или шутку могут пересказывать по-новому, делая, таким образом, одну из важных особенностей фольклора – творческое обогащение – непрерывным.

Ключевые слова: сатирический фольклор, юмор, прозвище, местный сказ, сказание, повествование, сюжет, фабула, творческий город, колорит.

SUMMARY

Nicknames as an attempt to create a folklore

portrait of prominent Gyumri people

Karine Sahakyan

Roza Hovhannisyan

Shirak's satirical folklore is mainly expressed in the following genres of oral creativity: local legends, jokes, folk games, reproach words, nicknames, proverbs and sayings, etc. In general, the folklore text of the Shirak region appears in the context of rituals, customs and traditions, with various plot forms and ethnological strata. Considering examples of the satirical folklore of Shirak, it can be affirmed that the creative city of Gyumri comprises in its spiritual genealogy the satirical folklore of urban type and the humour of people from Alashkert, the Inner Bassen, Karin and Kars. In the examples of Shirak's satirical folklore there is an element of spontaneous creativity /improvisation/, a talent for self-creativity. In fact, nicknames and local legends are the living books of the town, flavoured with humour. Gyumri people, overwhelmed by the element of creativity, can retell the same story or joke in a new way, thereby making one of the important features of folklore - creative enrichment - ongoing.

Key words: satirical folklore, humour, nickname, local saga, legend, narration, story, plot, creative city, local flavour.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ «ՄԱՐԻ ԱՂՋԻԿ» ԵՐԳԸ ՈՐՊԵՍ ԿԱՐՆՈ
ԹՈՒՐԲԱԼԵԶՈՒ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՆՍՈՒՇ

Վարդանյան Արտակ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
բանասիրական գիտությունների թեկնածու,
ավագ գիտաշխատող.artva@list.ru

DOI: 10.54412/99399305-2023-94

Բանալի բառեր. հայկական ժողովրդական երգ, հայերեն, թուրքերեն, թուրքալեզու հայկական ֆոլկլոր, հայկական մշակույթ, Կարին, բնագիր:

Նախաբան

Հայկական ժողովրդական «Մարի աղջիկ» (թուրքերեն՝ "Sarigelin", աղբրեջաներեն՝ "Sarı gəlin" («Շեկ նորահարս», «Շեկլիկ աղջիկ»)) երգը տարածված է ոչ միայն հայերի, թուրքերի և աղբրեջանցիների շրջանում, այլև որպես հայկական ժողովրդական երգ՝ թարգմանված, փոխադրված կամ բնօրինակով երգում են տարածաշրջանի այլ ժողովուրդներ՝ պարսիկները, քրդերը, հույները և այլք: Աղբրեջանցիները, սակայն, շարունակում են անհիմն նկրտումներ դրսևորել նաև ժողովրդական հանրահայտ այս ստեղծագործության հանդեպ և երգը աղբրեջանական համարել¹:

Սրանով էլ հիմնավորվում է սույն հոդվածի արդիականությունը: Նորույթը և նպատակն է բնագրագիտական առումով քննել երգի բնագիրը, պարզաբանել երգի իրական ազգային պատկանելությունը:

«Մարի աղջիկ» երգը Օսմանյան Թուրքիայի հայաբնակ շրջաններում հայտնի է եղել դեռևս 19-րդ դարում: Տարածված է եղել նաև Ջավախքում, Շիրակում, որտեղ բնակվող հայերը առավելապես էրզրումի նահանգից՝ պատմական Կարնո աշխարհից են ժամանակին Ռուսական կայսրության տարածք գաղթել: Մեծ եղեռնից փրկված հայերի սերունդները «Մարի աղջիկը» երգում են աշխարհի տարբեր երկրներում:

Երգի հայերեն տարբերակը երգել են անվանի հայ երգիչներ Շարա Տայյանը, Պավել Լիսիցյանը, Ռուբեն Մաթևոսյանը, Ֆլորա Մարտիրոսյանը և այլք, մեղեդային տարբերակը՝ դուդուկի վարպետներ Ջիվան Գասպարյանը, Գևորգ Դաբաղյանը և այլք:

Երգի թուրքերեն տարբերակը երգում են ամենահայտնի թուրք երգիչները, նրանցից ոմանք՝ նաև հայերեն: Այդուհանդերձ, երգի ազգային պատկանելության շուրջ երկարատև և բուռն վեճեր են եղել աղբրեջանցիների հետ, թեև նրա հայկականության մասին բարձրաձայնել են թուրք երգահան Շանար Յուրդաթափանը, երգչուհի Սեզնե

¹ **Solimov A.** Bir daha "Sarı gəlin" haqqında, Bakı, 2010, s. 10, <http://anl.az/download/meqale/adalet/2010/iyul/129428.htm>

Աքսուն, լրագրող Մուրադ Էրթաշը, դոկտոր Գոթքչեն Քարանֆիլը, անգամ նախկին արտգործնախարար և վարչապետ Ահմեդ Դավութօղլուն, թուրք անվանի այլ գործիչներ ու մտավորականներ²: Թուրքական հեռուստատեսությունների եթերում երգը բազմիցս հայերեն հնչել է նաև ստամբուլահայ երգչուհի Սիբիլի և թուրք երգչուհի Մեզեն Աքսուի կառարմամբ: «Մարի աղջիկը» նաև պոլսահայ երջանկահիշատակ մտավորական Հրանտ Դինքի շատ սիրելի երգն էր, որ հայերեն հնչեց նրա հուղարկավորության ժամանակ:

Դիտարկումներ

Քննարկվող երգի թուրքերեն տարբերակը վերլուծելուց առաջ նախ հիշենք պատմական իրողությունների թելադրանքով հայ իրականության մեջ դարեր շարունակ ստեղծված, գոյատևած և մինչև մեր օրերը հասած՝ հայկական թուրքալեզու բանահյուսության, մանավանդ ասացվածքների, հանելուկների, երգերի, մասնավորապես՝ ողբերգերի և ժողովրդական երգարվեստի բազմաթիվ այլ նմուշների մասին: Անգամ Մեծ եղեռնի օրերին ստեղծված հայկական բազմաթիվ երգեր են թուրքալեզու եղել³: Հիշենք թեկուզ հանրահայտ «Դեր Ջորի ողբը»⁴.

*Սարաքսան գալքդըմ, գյունաշ փառլիյոր,
Չեթելար օթուրմիշ մովզեր յաղլիյոր,
Էրմանիա բաքդըմ յաման աղլիյոր,
Դինի բիր ուղրունա գեդան էրմանի:*

Առավոտ վեր կացա, արևն էր փայլում,
Չեթեներ նստած՝ մովզերներ յուղում,
Հայերին նայեցի՝ լալիս են, ողբում,
Հանուն հավատքի նահատակ հայեր:

Հիշենք նաև, որ անցյալ դարերում ոչ միայն ողջ Անատոլիայի հայաբնակ թուրքախոս և հայախոս շրջաններում և Արևմտյան Հայաստանում էր թուրքալեզու ֆոլկլոր ստեղծվում, այլև Արևելյան Հայաստանում: Օրինակ՝ Նախիջևանի Ագնաբերդ գյուղում մինչև անցյալ դարի կեսերը բոլոր կանոնիկ ողբերգերը թուրքերեն էին, իսկ հարևան Օծոփ (Բադամլու) գյուղում՝ նաև հանելուկներն ու ասացվածքները: Հարյուրավոր հայ աշուղներ մինչև 19-րդ դարի վերջերը իրենց երգերը հիմնականում

² Մարի աղջիկ, «Վիքիպեդիա» ազատ հանրագիտարան,

https://hy.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%A1%D6%80%D5%AB_%D5%A1%D5%B2%D5%BB%D5%AB%D5%AF

³ Սվազյան Վ., *Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ*, Ե., 2011, էջ 22: Svazlian V., *Ermeni soykırımı: hayatta kalan görgü tanıklarının anlattıkları*, İstanbul, 2013, s. 1064.

⁴ *Հայրենի երգեր (Հայրիկ Մուրադյանի ձայնից վերծանեց և կազմեց Ս. Փահլևանյանը)*, Ե., 1980, էջ 110:

թուրքերեն էին հորինում ⁵ : Հետևաբար, բնական է հայ բանահյուսության մեջ թուրքալեզու նմուշների առկայությունը:

Հայերը հարկադրված էին տիրապետել նաև թուրքերենին ու քրդերենին՝ դարեր շարունակ ապրելով Օսմանյան Թուրքիայի գերիշխանության տակ: Բնականաբար, ստեղծագործողիսը պետք է ձգտեր հասկանալի լինել նաև այդ լեզուներով: Բացի դա, Թուրքիայի հայաբնակ բազմաթիվ շրջաններում հայերենը խստիվ արգելված էր:

Հաշվի առնելով այս ամենը՝ միանշանակ պետք է պնդել, որ հայ բանահյուսության մեջ երգի թուրքալեզու լինելը երբեք առիթ չի կարող դառնալ այն հայկական մշակույթից օտարելու համար:

Իսկ «Սարի աղջիկ» երգի պարագայում աղբբեջանական «վարկածի» սնանկ լինելը բացահայտելու մի շատ կարևոր կոման զարմանալիորեն ընձեռում է հենց թուրքալեզու տարբերակը: Թուրքերեն բնագրի առաջին իսկ տողերից դժվար չէ կռահել, որ երգի հերոսուհին ոչ այլ ոք է, քան կարնեցի հայ աղջիկը.

Erzurum çarşıpazar

Neynimaman, aman, (2)

Sarı gelin,

İçindebirkızgezer,

Nenenölsün,

Sarı gelin, aman, (3)

Sunayarım.

Էրզրումի շուկայում

Ախ, ինչ անեմ, աման, (2)

Շեկլիկ հարսիկ,

Մի աջիկ էր անց կենում,

Մերդ մեռնի,

Շեկլիկ հարսիկ, աման, (3)

Սոնա յար իմ:

Ուշադրություն դարձնենք, որ իրադարձությունները տեղի են ունենում Էրզրումում՝ Հայոց երբեմնի մայրաքաղաք Կարինում, որի բնակչության բացարձակ մեծամասնությունը մինչև Մեծ եղեռնը հայեր էին, և շուկան էլ անցյալում այն եզակիվայրերից էր, որտեղ կարող էին միմյանց հանդիպել անձանոթ տղան ու աղջիկը:

Ուշագրավ են նաև կրկներգի բառերից մի քանիսը: Նախ, աղջկա շեկ լինելը ավելի է ընդգծում հայ լինելու հանգամանքը: Երկրորդ, *սոնա* բառը /թուրքերենում՝ *sunā* («հիասքանչ, վայելչագեղ»)/ առկա է հայերենի Վանի, Միսի, Հավարիկիս այլ բարբառներում ⁶ «գեղեցիկ, սիրուն» նշանակությամբ, Վանի բարբառում նաև բազմիմաստ է (նշանակում է ոչ միայն «գեղեցիկ», այլև «բարձրահասակ»)⁷: Ամենայն հավանականությամբ թուրքերենը այս բառը փոխառել է հենց հայերենի բարբառներից: Հետաքրքիր է,

⁵ Թուրքալեզու հայ աշուղներ. Օսմանյան կայսրություն, 16-20-րդ դարեր (կազմող՝ Խ. Ամիրյան), Փարիզ, 1993: **Գրիգորյան Շ.**, Հայ աշուղական գրականության պատմություն (ըրվագներ), Ե., 2003:

⁶ Մեսրոպյան Հ., Ածականական հոմանիշները հայերենի բարբառներում, Ե., 2010, էջ 291:

⁷ Թուրջյան Հ., Բառարան Վանի բարբառի (աշխատասիրությամբ Հ. Մեսրոպյանի), Ե., 2018, էջ 203:

որ *սոնա յար* բառակապակցությունը կարելի է հանդիպել հայկական ժողովրդական բազմաթիվ երգերում, մասնավորապես՝ Կոմիտասի գրանցած հայտնի նմուշերում⁸:

**Elindedivit kalem,
Dertleredermanyazar.**

**Ձեռքին բռնել էր դալամ,
Գրում էր դարդիս դարման:**

19-րդ դարում Օսմանյան Թուրքիայի բազմաթիվ խոշոր բնակավայրերում (Կոստանդնուպոլիս, Ջոյուռնիս, Մարաշ, Սեբաստիա, Ամասիա, Վան, Մուշ, Այնթապ և այլն) արդեն գործում էին բազմաթիվ հայկական վարժարաններ, իսկ դեռևս 1811թ. դպրության խոշորագույն կենտրոն Կարինում էր հենց հիմնադրվել հայոց առաջին կրթական հաստատությունը՝ Կենտրոնական մայր վարժարանը, որը հետագայում վերանվանվել էր Արծնյան երկսեռ վարժարան: Այնուհետև այնտեղ բացվել էին Հռիփսիմյան օրիորդաց վարժարանը և մի ամբողջ շարք երկսեռ վարժարաններ⁹: Հետևաբար, թե 19-րդ դարում ոչ միայն Կարինում, այլև ողջ Մերձավոր Արևելքում ո՞ր ազգի աղջկա ձեռքին կարող էր գրիչ լինել, միանգամայն և միանշանակորեն պարզ է:

**Erzurumda bir kuş var,
Kanadında gümüş var.**

**Էրզրումում մի թռչնակ,
Թներին ուներ արծաթ:**

Այստեղ էլ ակնհայտ է, որ խոսքը հայ արծաթագործության նշանավոր կենտրոն Կարինի, նրա հինավուրց տարազի անբաժան մասը կազմող արծաթյա համբավավոր զարդերի մասին է¹⁰:

**Yarimgittigemedi,
Elbetbundabirişvar.**

**Յարս գնաց ու չեկավ,
Հաստատ ուներ մի պատճառ:¹¹**

Եվ ի՞նչ խանգարող հանգամանք կարող էր լինել տղայի և աղջկա հանդիպման համար: Ի՞նչ պատճառ կարող էր լինել, եթե ոչ առաջին հերթին սոցիալական տարբեր խավերի պատկանելու հանգամանքը, իսկ երգը թուրքերի կողմից սիրվելուց և նրանց շրջանում տարածվելուց հետո՝ բնականաբար, նաև ազգային և կրոնական պատկանելության հանգամանքը:

⁸Կոմիտաս, *Երկերի ժողովածու*, հ. 13, Ե., 2004, էջ 172:

⁹Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, Ե., 1978, էջ 94:

¹⁰Տեր-Ղևոնդյան Հ., *Հայկական արծաթագործական աշխարհիկ զարդերը 19-րդ դարում*. - ՀԽՍՀ ԳԱ տեղեկագիր, հ. 11, Ե., 1965, էջ 66-68:

¹¹Երգի թուրքերեն բնագրի թարգմանությանն օժանդակելու համար շնորհակալություն ենք հայտնում պատմական գիտությունների թեկնածու, թուրքագետ Սերգեյ Մանվելյանին:

Նշենք նաև, որ հետագայում արևելահայերենի և արևմտահայերենի փոխադրված տարբերակները կրկին անպատասխան սիրո մասին են, թեև բնագրի առումով տարբերվում են թուրքերեն տարբերակից: Հայերեն տեքստերում երբեմն պահպանվել է բնօրինակի «սարի գյալին» բառակապակցությունը, երբեմն էլ այն թարգմանաբար փոխարինվել հայերեն «սարի աղջիկ» բառակապակցությամբ:

Արևելահայ տարբերակ՝

Վարդ սիրեցի, փուշ դառավ,
 Լե-լե յաման, (3)
Գնաց ուրիշին առավ,
 Ախ, մերդ մեռնի,
 Սարի աղջիկ, օյ-օյ,
 Քարի աղջիկ, օյ-օյ,
 Քարսիրտ աղջիկ, օյ-օյ,
 Քարսիրտ աղջիկ...

Արևմտահայ տարբերակ՝

Ամպել է փառա-փառա,
 Լե-լե, աման, աման, (2)
 Սարի աղջիկ,
Ես իմ սիրածին չառա,
 Ախ, մերդ մեռնի
 Սարի աղջիկ աման, (3)
 Քարսիրտ աղջիկ...

Իսկ ինչ վերաբերում է ադրբեջանական տարբերակին, ապա այն նույնպես շոշափում է անպատասխան սիրո թեման, ևհիմքում ակնհայտորեն ընկած են թուրքերեն և արևելահայերեն տարբերակները: Հետևաբար, ադրբեջաներեն բնագրի քննությունն ավելորդ ենք համարում:

Ավելացնենք նաև, որ հայ երաժշտագետների և ողջ երաժշտասեր հասարակության շրջանում երբեք կասկած չի հարուցել «Սարի աղջիկ» ժողովրդական երգի հայկական լինելու հանգամանքը: Երգը սիրային-քնարական ժանրին պատկանող ամենասիրված և տարածված երգերից է, գրի է առնվել երաժիշտ-բանահավաքների կողմից՝ դեռևս 19-րդ դարի վերջերից: Երգի մեղեդային բազմաթիվ տարբերակները, որ գոյություն ունեն տարբեր տեքստերով, բոլորն էլ քնարական բնույթի են: Ամենահին գրառումը Կոմիտասինն է՝ արված է 1891 թվականին («Կայնել ես վարդի հովին») ¹²: Երաժշտագետներին հայտնի են տասնյակից ավելի այլ տարբերակներ՝ գրանցված Կոմիտասի, Արշակ Բրուսյանի, Քրիստափոր Քուշնարյանի և այլոց կողմից, որոնց թվում՝ Սպիրիդոն Մելիքյանի գրանցած Շիրակի երկու հայտնի տարբերակները՝ հենց «Սարի գյալին» վերնագրով:

Սպիրիդոն Մելիքյանը երգի հիշյալ երկու տարբերակները գրի է առել 1914թ. Շիրակում՝ Թիֆլիսի Հայոց երաժշտական ընկերության կազմակերպած գիտարշավի

¹² Կոմիտաս, *Երկերի ժողովածու*, հ. 9, Ե., 1999, էջ 69:

ընթացքում: Հավաքագրված նյութերի հիման վրա 1917թ. նրա կազմած և հրատարակած «Շիրակի երգեր» ժողովածուում զետեղված են «Սարի գյալին» երգի այդ տարբերակները¹³, որոնք ակնհայտ աղերսներ ունեն Կարինում ստեղծված թուրքալեզու նախօրինակի հետ, իսկ մեկը հենց արևմտահայ տարբերակի մի փոփոխակն է.

Ամպել է փարա-փարա,
Նեյնիմ աման, նեյնիմ աման, նեյնիմ աման,
Ես իմ սիրածին չառա,
Ա՛խ, մերդ մեռնի սարի աղջիկ, սարի աղջիկ, թառլան աղջիկ:

Այսօր էլ «Սարի աղջիկ» երգը մեր սիրված երգերից է, հնչում է ամենուր՝ մեր ժողովրդի երաժշտական կենցաղում, գրի է առնվում նաև մեր օրերում¹⁴: Այս կամ այն ժողովրդական երգի ազգային պատկանելությունը որոշվում է նաև տվյալ ժողովրդի կենցաղում տարածվածության աստիճանով, գիտության և արվեստի գործիչների կողմից հավաքման և հրատարակման փաստերով, երգի մեղեդու համապատասխանությամբ տվյալ ազգային երգամտածողության օրենքներին, բառային տեքստում արտահայտված ազգային հոգեբանությամբ, տվյալ ժողովրդի ֆոլկլորում բյուրեղացած կերպարներով և այլն:

Եզրակացություն

Այսպիսով, «Սարի աղջիկ» («Սարի գյալին») երգի թուրքերեն տարբերակի բնագիրը ակնհայտորեն վկայում է, որ այն երգ է հայուհու մասին, ստեղծված է հայկական միջավայրում՝ հայ հեղինակի կողմից:

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ հայ երաժշտագետների և ողջ երաժշտասեր հասարակության շրջանում երբեք կասկած չի հարուցել այս երգի մեղեդու հայկական լինելու հանգամանքը, դեռևս 1891 թվականինայն գրանցել է Կոմիտասը, մեղեդին հարազատ է հայկական ժողովրդական երգամտածողությանը, հայկական ֆոլկլորում ունի բազմաթիվ տարբերակներ, ակնհայտ է դառնում երգի հայկական լինելու հանգամանքը:

Յուրաքանչյուր ժողովրդական երգ, եթե սիրվել և տարածվել է նաև հարևան ժողովուրդների մեջ, չպետք է հիմք դառնա ուրիշի մշակույթը յուրացնելու նկրտումների համար, այլ ընդհակառակը՝ պետք է դառնա միմյանց մշակույթը հարգելու միջոց:

¹³ *Ժողովրդական երգեր. ազգագրական ժողովածու, հ. 1, Շիրակի երգեր (կազմողներ՝ Ս. Մելիքեան, Ա. Տեր-Ղևոնդեան), Թիֆլիս, 1917, էջ 48-49:*

¹⁴ *Հայ ժողովրդական երգեր և նվագներ. Թալին, պր. 7 (կազմող-խմբագիրներ՝ Ա. Փահլևանյան, Ա. Սահակյան), Ե., 2012, էջ 89:*

Օգտագործված գրականության ցանկ

- Գրիգորյան Շ., Հայ աշուղական գրականության պատմություն (դրվագներ), Ե., 2003:
- Թուրջյան Հ., Բառարան Վանի բարբառի (աշխատասիրությամբ Հ. Մեսրոպյանի), Ե., 2018:
- Թուրքալեզու հայ աշուղներ. Օսմանյան կայսրություն, 16-20-րդ դարեր (կազմող՝ Խ. Ամիրյան), Փարիզ, 1993:
- Ժողովրդական երգեր. ազգագրական ժողովածու, հ. 1, Շիրակի երգեր (կազմողներ՝ Ս. Մելիքեան, Ա. Տեր-Ղևոնդեան), Թիֆլիս, 1917:
- Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 13, Ե., 2004:
- Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 9, Ե., 1999:
- Հայ ժողովրդական երգեր և նվագներ. Թալին, պր. 7 (կազմող-խմբագիրներ՝ Ա. Փահլևանյան, Ա. Սահակյան), Ե., 2012:
- Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, Ե., 1978:
- Հայրենի երգեր (Հայրիկ Մուրադյանի ձայնից վերձանեց և կազմեց Ա. Փահլևանյանը), Ե., 1980:
- Մեսրոպյան Հ., Ածականական հոմանիշները հայերենի բարբառներում, Ե., 2010:
- Սարի աղջիկ, «Վիքիպեդիա» ազատ հանրագիտարան,
https://hy.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%A1%D6%80%D5%AB_%D5%A1%D5%B2%D5%BB%D5%AB%D5%AF
- Սվազլյան Վ., Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, Ե., 2011:
- Տեր-Ղևոնդյան Հ., Հայկական արձաթագործական աշխարհիկ զարդերը 19-րդ դարում.- ՀԽՍՀ ԳԱ տեղեկագիր, հ. 11, Ե., 1965:
- Svazlian V., Ermeni soykırımı: hayatta kalan görgü tanıklarının anlattıkları, İstanbul, 2013.
- Səlimov A. Bir daha "Sarı gəlin" haqqında, Bakı, 2010, <http://anl.az/down/meqale/adalet/2010/iyul/129428.htm>

РЕЗИЮМЕ

Народная песня "Сари ахчик" как образец каринского троязычного армянского фольклора Артаг Варданян

Армянская народная песня "Сари ахчик" ("Горянка") (на турецком языке "Sarı gelin", на азербайджанском языке "Sarı gəlin" ("Светловолосая невеста", "Светловолосая девушка") популярна не только среди армян, турок и азербайджанцев, но и как армянская народная

песня в переводе, в переложении или в оригинале поют и другие народы региона: персы, курды, греки и др. Вокруг национальной принадлежности песни велись долгие и острые споры с азербайджанцами, которые считают это популярное произведение своим, хотя даже известные турецкие деятели искусства подтвердили ее армянское происхождение. Тем не менее оригинальный текст турецкой версии песни тоже ясно доказывает, что эта песня об армянке, созданная в армянской среде армянским автором. С учетом музыковедческого анализа, подтверждающего, что мелодия песни родственна армянскому народному песенному мышлению, имеет множество вариантов в армянском фольклоре, о чем свидетельствуют цитируемые публикации (самая старая из них записана Комитасом в 1891 г.), становится очевидным, что песня является армянской.

Ключевые слова: армянская народная песня, армянский язык, турецкий язык, туркоязычный армянский фольклор, Карин, мелодия, оригинал текста.

SUMMARY

Folk song "Sari Aghjik" as an example of the Karin turkish-speaking Armenian folklore

Artak Vardanyan

The Armenian folk song "Sari aghjik" ("Mountain girl") (in Turkish: "Sarı gelin", in Azerbaijani "Sarı gəlin" ("The blonde bride", "The blonde girl") is popular not only among Armenians, Turks and Azerbaijanis, but also as an Armenian other peoples of the region also sing a folk song in translation, transcription or in the original: Persians, Kurds, Greeks, etc. There were long and sharp disputes around the national identity of the song with Azerbaijanis, who consider this popular work to be their own, although even well-known Turkish artists confirmed its Armenian origin. Nevertheless, the original text of the Turkish version of the song clearly proves that this is a song about an Armenian girl created in an Armenian environment by an Armenian author. Taking into account the musicological analysis, which confirms that the melody of the song is related to the Armenian folk song thinking, has many variants in Armenian folklore, as evidenced by the cited publications (the oldest of them was recorded by Komitas in 1891), it becomes obvious that the song is Armenian.

Key words: Armenian folk song, Armenian language, Turkish language, Armenian folklore in Turkish, Armenian culture, Karin, melody, original text.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արոսյան Սարիա-Հեշտիա գյուղի խոսվածքի մասին..... 3

Բառնասյան Ջենմա-Շիրակի բարբառային խոսքի դարձվածքների շուրջ 11

Գևորգյան Գայանե-Գյումրի քաղաքի խոսվածքը և նրա լեզվական առնչությունները
Կարնո բարբառի հետ..... 17

Խաչատրյան Հասմիկ-Կարնո բարբառի Բասենի խոսվածքի մի դրսևորում Շիրակի
մարզում (հնչյունական համակարգ)..... 26

Խենյան Էսթեր-Ֆուլկլորիզմը Շիրակի բանավոր խոսքի մշակույթում..... 37

Խենյան Մարինե-Բանահավաք Պարույր Բարսեղյանի շիրակյան բանահյուսական
հավաքածուն..... 54

Կատվայան Վիկտոր-Շիրակի մարզի բարբառային խոսքի ընդհանուր
բնութագիրը..... 67

Հայրապետյան Թամար-Հասարակական կենցաղն ու արհեստները Շիրակի
ժողովրդական հեքիաթներում..... 75

Սահակյան Կարինե, Հովհաննիսյան Ռոզա-Մականունները որպես Գյումրու
երևելիների բանահյուսական դիմանկարի ստեղծման փորձ..... 85

Վարդանյան Արտակ-Ժողովրդական «Սարի աղջիկ» երգը որպես Կարնո
թուրքալեզու հայ բանահյուսության նմուշ..... 94

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՇԻՐԱԿԸ ՀԱՅՈՑ ԲԱՌ ՈՒ ԲԱՆԻ ԳԱՆՁԱՐԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

(Երևան, 2023 թ., նոյեմբերի 24)

Ձևավորումը և էջադրումը՝ Մ. Խառատյանի

Կազմը՝ Ս. Արևշատյանի

Ժողովածուի խմբագրական խորհուրդը պատասխանատվություն չի կրում հեղինակների
տեսակետների, մոտեցումների համար: